

«Հաստատում եմ»
ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի

տնօրեն՝ Ա. Սարգսյան _____

«10» փետրվարի, 2016 թ.

Կ.Տ.

**ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Հասցե՝ ք. Երևան, Բաղրամյան պողոտա 24/դ

Երևան 2016

Ինքնավերլուծությունն իրականացրած աշխատանքային խմբի կազմը

Անուն, Ազգանուն	Պաշտոն
Արամ Միրզոյան	ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի փոխտնօրեն (Չափանիշ VII. Ենթակառուցվածքը և ռեսուրսները)
Երջանիկ Զարգարյան	ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի ուսումնական մասի պետ (Չափանիշ III. Մասնագիտական կրթական ծրագրեր, չափորոշիչ ա, բ, գ, Չափանիշ IV. Ուսանողները)
Մելինե Սարգսյան	ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի գիտքարտուղար (Չափանիշ V. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը. չափորոշիչ ե., է.)
Նաիրա Հակոբյան	ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի դեկան (Չափանիշ I. Առաքելությունը և նպատակները)
Նարինե Վարդանյան	ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի կրթության որակի ապահովման բաժնի պետ (Չափանիշ X. Որակի ներքին ապահովման համակարգը, Չափանիշ VIII. Հասարակական պատասխանատվությունը. չափորոշիչ բ, դ)
Կարինե Բեգոյան	ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի ասպիրանտուրայի բաժնի վարիչ (Չափանիշ VI. Հետազոտությունը և զարգացումը)
Արուսյակ Հարությունյան	ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի արտաքին կապերի բաժնի պետ (Չափանիշ IX. Արտաքին կապերը և միջազգայնացումը)
Ազնիվ Շահազիզյան	ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի ուսանողների և շրջանավարտների հետ տարվող աշխատանքների համակարգող (Չափանիշ VIII. Հասարակական պատասխանատվությունը. չափորոշիչ ա, գ)
Սիմոն Բաբայան	ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի «Իրավագիտություն» ամբիոնի վարիչ (Չափանիշ II. Կառավարումն ու վարչարարությունը, Չափանիշ V. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը, չափորոշիչ ա, բ., գ.)
Հայկ Պետրոսյան	ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի «Մանկավարժություն և սոցիոլոգիա» ամբիոնի վարիչ (Չափանիշ V. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը. չափորոշիչ դ, գ.)

<p>Կարեն Խաչատրյան Համո Սուքիասյան</p>	<p>ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի «Միջազգային հարաբերություններ» ամբիոնի վարիչ , ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի «Միջազգային հարաբերություններ» ամբիոնի համակարգող (Չափանիշ III. Մասնագիտական կրթական ծրագրերը. Միջազգային հարաբերություններ)</p>
<p>Արմեն Սաղաթելյան , Ամալյա Մուրադյան</p>	<p>ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի «Բնապահպանության և բնօգտագործում» ամբիոնի վարիչ ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի «Բնապահպանության և բնօգտագործում» ամբիոնի համակարգող (Չափանիշ III. Մասնագիտական կրթական ծրագրերը. Բնապահպանություն և բնօգտագործում)</p>
<p>Հասմիկ Աղաբաբյան</p>	<p>ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի «Դեղագործական քիմիա» ամբիոնի վարիչ (Չափանիշ III. Մասնագիտական կրթական ծրագրերը. Դեղագործական քիմիա)</p>
<p>Հերզնյան Մարիամ</p>	<p>«Հոգեբանություն» բաժնի մագիստրոս 1-ին կուրս (Չափանիշ VIII. Հասարակական պատասխանատվությունը. չափորոշիչ գ, դ)</p>

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....	5
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԵԶՐՈՒՅԹՆԵՐ	6
ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ	7
I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	7
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ.....	12
III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ.....	20
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ	29
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ	39
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ	45
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ	57
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ.....	66
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅՆԱՅՈՒՄԸ.....	73
X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ.....	79
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿ	86

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան ՀՀ բարձրագույն գիտական ինքնակառավարվող պետական հաստատություն է, որն իր գիտական հետազոտություններով, մշակումներով ու հրապարակումներով տարիներ շարունակ արժանի ավանդ է ներդրել և այսօր էլ շարունակում է ներդնել գիտության, գիտարար տնտեսության, սոցիալական ու մշակութային, հասարակական կյանքի ամենատարբեր ոլորտների զարգացման գործում՝ ստանձնելով գիտության բոլոր ոլորտների առաջատարի դերը:

«Հայաստանի Համրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենքով, որն ընդունվել է 14.04.2011 թվականին, սահմանված է ՀՀ ԳԱԱ կարգավիճակը. «ՀՀ ԳԱԱ-ն Հայաստանի Հանրապետության հիմնադրած՝ հատուկ կարգավիճակ ունեցող, ինքնակառավարվող բարձրագույն գիտական կազմակերպություն է, որը կազմակերպում, իրականացնում և համակարգում է գիտելիքի վրա հիմնված տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացման համար անհրաժեշտ հիմնարար և կիրառական հետազոտությունները»: **ՀՀ ԳԱԱ-ի իրավական կարգավիճակը որոշվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ կետի հանաձայն և հիշյալ օրենքով սահմանվում է որպես հատուկ կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն:** Ակադեմիան իրեն վերապահված խնդիրների լուծման համար կարող է կատարել լիազորված պետական կառավարման մարմնի առանձին գործառույթներ՝ իրականացնել իր համակարգի գիտական կազմակերպությունների, իրավաբանական անձանց ու հիմնարկների ընդհանուր կառավարումը՝ ապահովելով նրանց բնականոն գործունեությունը: ՀՀ ԳԱԱ-ն միավորում է ԳԱԱ անդամներին և ԳԱԱ համակարգի գիտական հաստատությունների, հիմնարկների և ձեռնարկությունների աշխատողներին: Այն կազմակերպում և իրականացնում է հիմնարար և կիրառական գիտական հետազոտություններ, համակարգում հանրապետությունում կատարվող հիմնարար հետազոտությունները:

ՀՀ ԳԱԱ-ն, որպես պետական գիտական հաստատություն, գիտահետազոտական ինստիտուտների, նրանց հավասարեցված հաստատությունների, օժանդակ ծառայությունների և նախագահության միասնությունն է: ՀՀ ԳԱԱ-ն միավորում է 34-ից ավելի գիտական ինստիտուտներ, գիտական հաստատություններ, ձեռնարկություններ և այլ կազմակերպություններ:

Ըստ գիտության բնագավառների ՀՀ ԳԱԱ նախագահությունն ունի հինգ բաժանմունք՝

- մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների,
- ֆիզիկայի և աստղաֆիզիկայի,
- բնական գիտությունների,
- քիմիական և երկրի մասին գիտությունների,
- հայագիտության և հասարակական գիտությունների:

ՀՀ ԳԱԱ նախագահությանն առընթեր գործում են գիտական հանձնաժողովներ և խորհուրդներ, իսկ բաժանմունքներում ըստ գիտական ուղղությունների՝ գիտական խորհուրդներ: ՀՀ ԳԱԱ-ի մեջ ներառված գիտական հաստատությունները և ինստիտուտները, իրենց հերթին, ունեն փորձարարական լաբորատորիաներ, փորձակայաններ, հատուկ կոնստրուկտորական բյուրոներ, բուսաբանական այգիներ և այլն:

Ակադեմիայի աշխատակիցների ընդհանուր թիվը, 2013 թ. դրությամբ, 3700-ից ավելին է, այդ թվում՝ 63 ակադեմիկոս, 61 թղթակից անդամ, 335 գիտության դոկտոր, 1080 գիտության թեկնածու: Ակադեմիայի կազմում ընդգրկված են նաև 4 պատվավոր անդամ, 111 արտասահմանյան անդամ և 55 պատվավոր դոկտոր:

ՀՀ ԳԱԱ կադրային քաղաքականության հիմքն է երիտասարդ մասնագետների պատրաստումը գիտատեխնիկական և հիմնարար գերակա ուղղություններով, ինչը ապահովում է գիտական կադրերի երիտասարդացումը և որակավորման հետագա բարձրացումը:

Այսօր առաջնահերթ է համարվում բարձրագույն դպրոցի հետ ակադեմիայի մերձեցման ուղղությամբ նոր քայլերի նախաձեռնումը, աշխատանքների իրականացումը մասնագիտական կրթության մակարդակի բարձրացման ուղղությամբ, հատուկ ծրագրերով շնորհալի երիտասարդների մասնագիտական պատրաստման կազմակերպումը՝ նրանց ներգրավելով գիտահետազոտական աշխատանքներին, որով ապահովվում է գիտության նկատմամբ գրավչությունն ու գիտության և կրթության ինտեգրման գործընթացը:

Գիտության և կրթության ինտեգրման ոլորտում նոր ենթակառուցվածքների ձևավորումը դարձել է անհրաժեշտություն, ինչը կապված է տնտեսական համակարգի ձևավորման, գիտության ու տեխնիկայի բնագավառում պետության դերի բարձրացման և բարձրագույն կրթության վերակառուցման հետ:

Այս համատեքստում բնավ պատահական չէր ՀՀ ԳԱԱ նախագահության կազմում Գիտակրթական միջազգային կենտրոնի հիմնադրումն ու նրա հետագա արդյունավետ գործունեության սատարումը՝ իբրև գիտության և կրթության ինտեգրման կարևոր գրավական: ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնը /այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ/ հիմնադրվել է 1997թ. ԳԱԱ նախագահության կազմում գործող ասպիրանտուրայի բաժնի հիման վրա: Կենտրոնի հիմնական խնդիրը գիտական կադրերի պատրաստումն է, որն իրականացվում է ասպիրանտուրայի, դոկտորանտուրայի և հայցորդության միջոցով: Հետազոտությունների իրականացման համար իբրև բազա ծառայում են Ակադեմիայի գիտահետազոտական ինստիտուտներն ու կենտրոնները:

Հաշվի առնելով ՀՀ ԳԱԱ գիտական ներուժը, տեխնիկական և տարածքային հնարավորությունները՝ 2004թ. ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնը ընդլայնել է իր գործունեությունը՝ կազմակերպելով ուսուցում նաև մագիստրոսի կրթական ծրագրով 25 մասնագիտությունների գծով /[տե՛ս Հավելված 12- ՀՀ ԳԱԱ նախագահության որոշում](#)/: ՀՀ ԳԱԱ համակարգում մագիստրոսական կրթական ծրագրերով ուսուցման կազմակերպումը նպատակ է հետապնդում արագացնելու անցումը կրթությունից դեպի գիտական գործունեություն, որին մեծապես նպաստում են անմիջապես ակադեմիական ինստիտուտներում տեղաբաշխված Գիտակրթական միջազգային կենտրոնի մասնագիտական ամբիոնները: Մագիստրոսների պատրաստումն ակադեմիական միջավայրում թույլ է տալիս նրանց հնարավորինս արագ ինտեգրվել գիտական հասարակայնությանը և ձեռք բերել գիտական մտածողություն: Կրթության և գիտության մերձեցմանն ուղղված այս քայլերը նպաստում են Ակադեմիայի համակարգում գիտական ներուժի երիտասարդացմանը, նոր մոտեցումների իրականացմանն ունակ գիտնականների սերնդի ձևավորմանը:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ն իր բարձրորակ մանկավարժական և գիտական կադրերով կարևոր դեր է կատարում հանրապետության տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքում: Կարճ ժամանակահատված է անցել մագիստրատուրայի հիմնադրման օրից, բայց արդեն այն կայացած կառույց է, որը նշանակալի դեր ունի Ակադեմիայի ողջ գործունեության մեջ՝ անմիջականորեն մասնակցելով ԳԱԱ համակարգի կազմակերպությունները երիտասարդ կադրերով համալրելու գործընթացին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Չափանիշներ՝ հատուկ առանձնացված ձևակերպումներ են, որոնք վերստուգելի տերմիններով սահմանում են հաստատության գործունեության կամ իրականացվող կրթական ծրագրերի բնութագրերը:

Չափորոշիչներ՝ ձևակերպումներ են, որոնք սահմանում են յուրաքանչյուր չափանիշին համապատասխանելու չափը և անաչառ գնահատելու համար անհրաժեշտ պայմանները:

ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Ի.ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: *Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:*

Միջազգային կրթական տարածքին ինտեգրում, կառավարման արդյունավետության բարձրացում, մասնագիտական կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային արդիականացում, ուսանողների հավաքագրման, ընտրության մեխանիզմների արդյունավետության բարձրացում, տեխնոլոգիապես հագեցած ժամանակակից ուսումնական և աշխատանքային միջավայրի ստեղծում, հասարակության հետ կապերի սերտացում, պրոֆեսորադասախոսական համակազմի մասնագիտական ներուժի շարունակական զարգացում, հետազոտական և ուսումնական գործունեության սերտ շաղկապում, հետազոտական հնարավորությունների զարգացում, միջազգային կապերի ընդլայնում, որակի ներքին վերահսկման համակարգի ներդրում /[Տե՛ս ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ Ռազմավարական ծրագիր 2014-2018 թթ \(ՌԾ\), էջ 2-19 – Հավելված 1/:](#)

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:	
Հիմքեր	<p><u>«ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն» հիմնարկի կանոնադրությունը – Հավելված 4</u></p> <p><u>«ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն» հիմնարկի ռազմավարական ծրագիր 2014-2018 թթ. – Հավելված 1</u></p> <p><u>Հավելված 2-«Գիտակրթական միջազգային կենտրոնի զարգացման ռազմավարական ծրագրի ժամանակացույց-պլանը» 2014-2018թթ.</u></p>

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի առաքելությունը բխում է իր կանոնադրական խնդիրներից և ամրագրված է 2014-2018թթ զարգացման ռազմավարական ծրագրում (Հավելված 1): Այն է. «ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնը ազգային և տարածաշրջանային դերակատարությամբ գիտակրթական և գիտամշակութային հաստատություն է, որի հիմնական առաքելությունն է խթանել երկրի սոցիալ-տնտեսական զարգացումն ու միջազգային կրթական տարածքին ինտեգրումը, ապահովել որակյալ ու մրցունակ կրթություն՝ նպաստելով անհատի շարունակական զարգացմանը՝ գիտակրթական ոլորտում գիտելիքի ստեղծման, փոխանցման միջոցով՝ իրականացնելով կրթությունից գիտություն սահուն անցումը և փոխշաղկապվածությունը:

Այն նպատակաուղղված է՝

- Գիտակրթական ոլորտի արդի պահանջներին համահունչ մասնագետների պատրաստմանն ու վերապատրաստմանը.
- կենտրոնի հետազոտական հնարավորությունների զարգացմանն ու գիտահետազոտական և գիտամեթոդական գործունեության խթանմանը.
- կրթության միջազգայնացմանն ու մրցունակության ապահովմանը.
- ուսուցման, գիտական հետազոտությունների և հանրությանը մատուցվող

ծառայությունների ոլորտներում նորարարությունների ներմուծմանը.

- ակտիվ քաղաքացիական, հասարակական կյանքի բարելավմանն ուղղված գիտակրթական գործընթացի իրականացմանը, մասնագիտական առաջխաղացմանն ու հարատև ուսումնառությանը.
- զլոբալացված հասարակության և աշխատաշուկայի ժամանակակից պահանջմունքներին համապատասխան մագիստրոսների և ասպիրանտների պատրաստմանը:

Գիտակրթական միջազգային կենտրոնի զարգացման ռազմավարությունը կառուցվել է առաքելության, հիմնարար արժեքների, առաջնահերթությունների, ռազմավարական նպատակների, ընթացիկ գերակայությունների և կոնկրետ գործողությունների հիմքի վրա»:

Գիտակրթական միջազգային կենտրոնի առաքելության կյանքի կոչումը և հեռանկարում նրա իրականացումը պայմանավորված են ռազմավարական ծրագրում սահմանված նպատակների ու խնդիրների իրագործմամբ:

Համաձայն ՈԱՇ-ի սահմանված մակարդակների՝ ԳԿՄԿ-ն իրականացնում է բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր՝ մագիստրոսի և հետազոտողի որակավորման աստիճանների շնորհմամբ: Դրանց համար ՀՀ կառավարության կողմից սահմանված որակավորումների շրջանակներում, յուրաքանչյուր մասնագիտության համար առանձին, ներառված են ուսումնառության ելքային համապատասխան արդյունքներ, որոնք ցույց են տալիս, թե ուսումնառողն ուսուցման ավարտին ինչ կոմպետենցիաների է հանգում:

Կոմպետենցիաները ներկայացվում են գիտելիք, հմտություններ և կարողություններ համատեքստում, որոնց արդյունքները ներառում են հինգ ոլորտներ. գիտելիք և պատկերացում, դրանց կիրառում, դատողություններ, հաղորդակցում, գործնական հմտություններ:

Յուրաքանչյուր մասնագիտության մագիստրոսական և հետազոտողի կրթական աստիճանների համար սահմանված են և ՀՀ Արդարադատության նախարարության կողմից հաստատված են Բարձրագույն կրթության պետական կրթական չափորոշիչներ: Դրանց հիման վրա կենտրոնի կողմից կազմված ուսումնական պլաններով նախատեսված դասընթացների (կրթական մոդուլների) ծրագրերի իրականացումը ապահովում են ուսանողների տեսական և գործնական գիտելիքների անհրաժեշտ պաշար, որոնք նպաստում են որակավորումների ազգային շրջանակի պահանջներին համադրելի գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձեռքբերմանը:

Շնորհիվ այս ամենի ապահովվում է ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ի որակավորումների շրջանակի և ՀՀ որակավորումների ազգային շրջանակի համադրելիությունը և համընթեռնելիությունը:

ԶԱՓՈՐՈՇԻՉ Բ. ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

<p>Հիմքեր</p>	<p><u>«ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն» հիմնարկի ռազմավարական ծրագիր 2014-2018 թթ. – Հավելված 1</u></p> <p><u>«ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն» հիմնարկի ռազմավարական ծրագրի իրականացման պլան-ժամանակացույց. 2014-2018 թթ. – Հավելված 2</u></p> <p>Ներքին և արտաքին շահակիցների պահանջները բացահայտող մեխանիզմներից են տարատեսակ հարցումները – <u>ՈԱ ձեռնարկ, էջ 110-127 – Հավելված 3)</u></p> <p>ԳԿՄԿ-ի առաքելության վերանայումն արտահայտող որոշումները հաստատվում են ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդում, օրինակ տե՛ս <u>Հավելված 1.1</u></p>
---------------	---

Գիտակրթական միջազգային կենտրոնի արտաքին ու ներքին շահեկիցներն են՝

- ԳԱԱ համակարգն իր գիտահետազոտական ինստիտուտներով և կենտրոններով,
- ուսանողները, շրջանավարտները, դիմորդներն ու նրանց ծնողները,
- պրոֆեսորադասախոսական, գիտական ու վարչական համակազմը,
- գործատուները,
- կրթության, գիտության և գիտատեխնիկական ոլորտների շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչները,
- ՀՀ կառավարությունը և լիազորված պետական մարմինները,
- ՀՀ ԳԱԱ նախագահությունը:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ի կողմից շարունակաբար բացահայտվում, վերհանվում ու վերաիմաստավորվում են թե՛ ներքին ու թե՛ արտաքին շահեկիցների պահանջներն ու հաշվառվում գործունեության իրականացման ընթացքում:

Ինչպես Կենտրոնի, այնպես էլ նրա ստորաբաժանումների կառավարման կոլեգիալ բոլոր մարմիններում ապահովված է ն՝ ներքին, ն՝ արտաքին շահեկիցների ներկայացուցիչների մասնակցություն: Հատուկ կարևորություն է ներկայացնում ուսանողների շահերի ու պահանջումների բացահայտումը, ինչը դրսևորվում է ուսանողական ինքնավարության, Կենտրոնում գործող ուսանողական կազմակերպությունների գործունեության, ուսանողների ու շրջանավարտների շրջանում անցկացվող հարցումների մեխանիզմների գործառնությամբ:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ առաքելության իրականացման գործընթացում առանցքային են ողջ անձնակազմի մասնակցության ու կոլեգիալականության սկզբունքները: Ներքին և արտաքին շահեկիցները իրենց մասնակցությունն են ունեցել ռազմավարական ծրագրերի մշակման գործընթացում: Դրանում ներգրավված էին ներկայացուցիչներ ՀՀ ԳԱԱ-ի գիտահետազոտական ինստիտուտներից ու գիտական հաստատություններից, վարչական ու պրոֆեսորադասախոսական անձնակազմից: Ռազմավարական ծրագրի նախագծերը շրջանառվել են արտաքին ու ներքին շահեկիցների շրջանում, կատարվել լրամշակումներ ու քննարկվել, ապահովվել է հետադարձ կապը:

ԳԿՄԿ կարևորագույն շահեկիցներին են ուսանողները: Ըստ այդմ՝ ռազմավարական ծրագրում հիմնարար արժեքներ են հռչակված մասշտիբ կրթությունը (տե՛ս Գիտակրթական միջազգային կենտրոնի Ռազմավարական ծրագիրը «Գիտակրթական միջազգային կենտրոնի հիմնարար արժեքները» բաժին, էջ 4, Հավելված 1), ուսանողների հաջողությունը, նրանց ինտեգրումը գիտական հաստատությանը, բարձրորակ կրթությունն ու հետազոտությունները, ընդունելության բազմազանեցված մուտքը՝ պետության պահանջներին ու ընդունված պետական չափանիշներին համապատասխան, իրենց ուսումնառությունից և ուսանողական օժանդակ ծառայություններից ուսանողների բավարարվածության մակարդակի բարձրացումը (տե՛ս Գիտակրթական միջազգային կենտրոնի ռազմավարական ծրագիրը «ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի առաջնահերթությունները» բաժին, էջ 5, Հավելված 1):

ԳԿՄԿ-ն, համաձայն իր ռազմավարական ծրագրի, նախատեսում է նաև բազմակողմանի կապերի հաստատում իր շրջանավարտների հետ՝ այն նպատակաուղղելով Կենտրոնի զարգացման ու շրջանավարտների հարատև կրթության ապահովմանը:

Ներքին կարևոր շահեկից է ԳԿՄԿ պրոֆեսորադասախոսական անձնակազմը, ԳԱԱ համակարգի որակյալ կադրային ներուժը: Վերջիններիս միջոցով կրթության որակի ապահովումը դիտարկվում է իբրև մասնագիտական, հետազոտական, ստեղծագործական նախաձեռնողության աճին խթանող կարևորագույն գործոն (տե՛ս Գիտակրթական միջազգային կենտրոնի ռազմավարական ծրագիրը «Գիտակրթական միջազգային Կենտրոնի կադրային ներուժը» բաժին, էջ 10, Հավելված 1):

Ռազմավարական ծրագիրը հաշվառում է նաև Կենտրոնի բոլոր տարակարգերի աշխատողների սոցիալական շահերը՝ նպատակ հետապնդելով բարձրացնել Կենտրոնի աշխատակիցների սոցիալական բավարարվածության մակարդակը:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ արտաքին շահեկիցներից են Կառավարությունն ու ԿԳ նախարարությունը, ՀՀ ԳԱԱ ինստիտուտներն ու գիտական հաստատությունները, ի վերջո, Հայաստանյան հանրությունը, որոնց պահանջների վերհանմամբ, Գիտակրթական միջազգային կենտրոնը միտված է ապահովել կրթության առավել բարձր որակ՝ գիտակրթական գործունեությունը ներդաշնակեցնել ու նույնականացնել գիտակրթական ոլորտի պետական քաղաքականությանը, առաջնորդվել այդ ոլորտը կարգավորող օրենսդրական ակտերով, կրթության զարգացման ծրագրերով համապատասխան միջազգային կրթական չափանիշներին:

ՉՍՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:	
Հիմքեր	<p>Առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման քաղաքականությունն ու ընթացակարգերը մշակման փուլում են:</p> <p>Շահակիցների (դասավանդողների, ուսումնառողների) ներգրավվածությունն արտացոլող հիմքեր – ԳԿՄԿ որակի ապահովման գործընթացները և ընթացակարգերը – <u>ՈԱ</u> <u>ձեռնարկ, էջ 31</u>:</p> <p>Շահակիցներից ստացված արձագանքները – Ուսանողական հարցումներ</p> <p>ՄՈՒՀ-ի առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման տարեկան զեկույցները – <u>ԳԿՄԿ տարեկան հաշվետվություններ (էջ 276)</u>:</p>

Գիտակրթական միջազգային կենտրոնում գործում են մի շարք մեխանիզմներ և ընթացակարգեր ռազմավարական նպատակների իրականացման առաջընթացը գնահատելու նպատակով:

2014թ-ին ԳԿՄԿ գիտական խորհրդի կողմից հաստատվել է «Գիտակրթական միջազգային կենտրոնի զարգացման ռազմավարական ծրագրի ժամանակացույց-պլանը» (Հավելված 2- «Գիտակրթական միջազգային կենտրոնի զարգացման ռազմավարական ծրագրի ժամանակացույց-պլանը»), որտեղ արտացոլված է ռազմավարական յուրաքանչյուր խնդրի իրագործման համար պլանավորված գործողությունները, միջոցառումները, իրականացման վերջնաժամկետները, պատասխանատու մարմինները կամ անձինք և անհրաժեշտության դեպքում՝ պահանջվող լրացուցիչ ռեսուրսները, ինչը հնարավորություն է ընձեռում Կենտրոնի յուրաքանչյուր ստորաբաժանմանը մշակելու և կյանքի կոչելու իր լոկալ զարգացման ծրագիրը:

ԳԿՄԿ ռազմավարական ծրագրի կատարման առաջընթացի վերահսկման նպատակով նախատեսվում է կազմել և հրապարակել Կենտրոնի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների (ԳԱՑ) լրակազմ: Փաստաթուղթը կընդգրկի Կենտրոնի գործունեության բոլոր հիմնական ուղղություններին վերաբերող կարևորագույն ցուցանիշների փոփոխման շարժընթացը և վերլուծությունը:

Ռազմավարական ծրագրի իրականացման նպատակով կազմվել են կարճաժամկետ օպերատիվ պլաններ, որի օգնությամբ մշտադիտարկվում է տվյալ ուսումնական տարվա համար նախատեսված գործողությունների, միջոցառումների կատարողականները:

Գիտակրթական միջազգային կենտրոնի տարեկան ֆինանսական մուտքերի ծավալները լիովին կանխատեսելի չեն /կապված մագիստրատուրայի վճարովի համակարգի ընդունելության ծավալներից՝ դրանք ամեն տարի ենթարկվում են փոփոխման/, և այդ պատճառով Կենտրոնը չունի երկարաժամկետ ռազմավարական բյուջե:

Կենտրոնի առաքելության և հիմնական նպատակների իրականացումը գնահատող ինքնատիպ մեխանիզմներից է հաշվետվողականությունը, որի բաղադրիչներն են ամբիոնների, բոլոր ստորաբաժանումների, տնօրենի տարեկան հաշվետվությունները:

ԳԿՄԿ-ում 2014 թ-ից գործում է կրթական ծրագրերից շրջանավարտների գոհունակության, ինչպես նաև դասավանդման որակից ուսանողների գնահատման հարցումների համակարգը, որից երկրորդն անց է կացվում էլեկտրոնային տարբերակով: Ստացված արդյունքները ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կրթության որակի ապահովման բաժնի կողմից ներկայացվում են համապատասխան ամբիոններ ի գիտության, քննարկումների, դիտարկումների և բարեփոխումների համար:

Գործում է նաև ուսանողների հետ հանդիպումների մեթոդը:

ՉԱՓԱՆԻՇ 1-Ի SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ul style="list-style-type: none"> Կենտրոնը ունի հստակ սահմանված առաքելություն և իրականացնում է ռազմավարական պլանավորման գործընթացը: Կենտրոնի ռազմավարությունը հաշվի է առնում հիմնական շահեկիցների կարծիքները, ունի նրանց կարծիքները բացահայտող հստակ ձևավորված մեխանիզմները: Կենտրոնը ունի ռազմավարական ծրագրի ժամանակացույց-պլան, ինչը հնարավորություն է ընձեռում վերահսկել և գնահատել գործընթացը, արձանագրել կատարման առաջընթացը: 	<ul style="list-style-type: none"> Կենտրոնի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների /ԳԱՅ/ լրակազմը՝ իբրև վերլուծական փաստաթուղթ դեռևս մշակված չէ: Դեռևս ամբողջական չեն հիմնական գործատուների հետ հետադարձ կապի մեխանիզմները: Ոչ բավարար պետական ֆինանսավորման պատճառով Կենտրոնը չունի երկարաժամկետ ռազմավարական բյուջե՝ ռազմավարական ծրագրում սահմանված գերակա խնդիրների և առանձին գործողությունների իրականացման համար:
Հնարավորություններ	Վտանգներ
<ul style="list-style-type: none"> ՀՀ կառավարության կողմից հաստատված տնտեսության որոշ ոլորտների զարգացման ծրագրերի մշակում: ՀՀ-ում կրթության հետագա զարգացմանն ուղղված պետական ռազմավարական աջակցություն: Ակադեմիական համակարգի գիտական հաստատությունները երիտասարդ կադրերով համալրում: 	<ul style="list-style-type: none"> Կենտրոնի առաքելության և կրթության զարգացման համար ոչ բավարար մակարդակի պետական ֆինանսավորում: Կենտրոնի ռազմավարական նպատակների և խնդիրների ձևավորման և իրականացման մեջ արտաքին շահակիցների ոչ բավարար հետաքրքրվածություն: Աշխատաշուկայում որոշ մասնագիտությունների ոչ համարժեք սոցիալական պահանջարկ: Մասնագիտությունների որոշ ոլորտների ռեսուրսների կտրուկ նվազում և պահանջարկի անկում:

*Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:
Նախատեսվում է թույլ կողմերի և վտանգների հաղթահարման ուղղությամբ իրականացնել հետևյալ քայլերը.*

- Ստեղծել աշխատանքային խումբ՝ Կենտրոնի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների /ԳԱՅ/ մշակման նպատակով:*

- *Գործատու – ուսանող հետադարձ կապի մեխանիզմների զարգացում այդ ուղղությամբ համապատասխան աշխատանքների իրականացում:*
- *Ռազմավարական ծրագրում սահմանված գերակա խնդիրների և առանձին գործողությունների իրականացման նպատակով լրացուցիչ և արտաբյուջետային ֆինանսական հնարավորությունների որոնում:*
- *Արտաքին շահակիցների հետաքրքրվածության ուղղությամբ աշխատանքների իրականացում, Կենտրոնի գործունեության թափանցիկության ապահովում և հասարակական պատասխանատվության բարձրացում:*
- *Չնայած ոչ համարժեք սոցիալական պահանջարկ վայելող մասնագիտական որոշ ոլորտների ռեսուրսների կտրուկ նվազման հանգամանքին և այդ մասնագիտությունների ոչ համարժեք սոցիալական պահանջին, այնուամենայնիվ շարունակել և զարգացնել տվյալ մասնագիտությունների ուղղությամբ մասնագիտական ամբիոնների զարգացումը և մագիստրոսական կրթության իրականացումը:*

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: *ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառնումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի նորմերը:*

Կենտրոնի կառավարման արդյունավետության բարձրացում, կառավարման հաշվետվողականության, կառավարման տեղեկատվական համակարգերի ընդլայնված կիրառելիության ապահովում: Կառավարման պրակտիկայում ժամանակակից մենեջմենթի մեթոդների ներմուծում, ուսումնամեթոդական, գիտական-ինովացիոն, ֆինանսական և կադրային բնագավառների մենեջմենթի ենթահամակարգերի ձևավորում և դեկավար ու վարչակառավարչական անձնակազմի գործունեության շարունակական արդիականացում: Կենտրոնի գործունեության բոլոր հիմնական բնագավառների համար գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշների (ԳԱՅ) համակարգի ներմուծում /Տե՛ս ՌԾ, էջ 17 – Հավելված 1/:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. Հաստատության կառավարման համակարգն ապահովում է սահմանված էթիկայի կանոններին համապատասխան որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

Հիմքեր	<p>Կառավարման մարմնների կանոնակարգերը և աշխատակարգերը /Տե՛ս - ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի գիտական խորհրդի գործունեության կանոնակարգ- հավելված 16, <u>Ուսումնամեթոդական մասի գործունեության կանոնակարգ- Հավելված-29,</u> <u>Դեկանատի գործունեության կանոնակարգ- Հավելված-27,</u> <u>Ամբիոնների ձևավորման, գործունեության և ամբիոնների վարիչների ընտրության կանոնակարգ-հավելված-20,</u> <u>ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ասպիրանտուրայի բաժնի գործունեության կանոնադրություն-Հավելված-14,</u></p>
--------	--

	<p><u>ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կրթության որակի ապահովման բաժնի կանոնադրություն-ՈԱ ձեռնարկ, էջ 38 -Հավելված 3,</u> <u>ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ արտաքին կապերի բաժնի կանոնադրություն – Հավելված 7,</u> <u>ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի կանոնադրություն- Հավելված 21,</u> <u>Շրջանավարտների հետ կապի և զբաղվածության բաժնի կանոնակարգ-23,</u> <u>Հանրային կապերի հայեցակարգ-Հավելված19 /</u></p> <p><u>«ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն» հիմնարկի կանոնադրություն- Հավելված 4</u></p> <p><u>Կազմակերպական կառուցվածքի սխեմատիկ պատկերը՝ քստենթակայության և հաղորդակցության կապերի- Հավելված 24</u></p> <p><u>ՄՈԻՀ-ի աշխատակիցների աշխատանքի ընդունման, տեղափոխման, հեռացման, առաջխաղացման, խրախուսման ու տույժի կիրառման քաղաքականությունն ու ընթացակարգերը - Տե՛ս Հավելված 17</u></p>
--	--

Գիտակրթական միջազգային կենտրոնի կառավարման համակարգը միտված է կրթական և գիտահետազոտական գործունեության, ինչպես նաև գիտատեխնիկական և միջազգային համագործակցության արդյունավետ իրականացմանը:

Կենտրոնի կառավարումն իրականացվում է համաձայն ՀՀ Սահմանադրության, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի մասին», «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին», «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների, այլ օրենքների, միջազգային համաձայնագրերի, պայմանագրերի և իրավական ակտերի, ՀՀ ԳԱԱ կանոնադրության, ՀՀ ԳԱԱ որոշումների, սահմանված լիազորությունների: ԳԿՄԿ-ի վարած քաղաքականության հիմքում ընկած է կոլեգիալության, գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության և որակի ապահովման սկզբունքները:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ն ընթացիկ գերակայություններից է համարում կառավարման արդյունավետության բարձրացումը՝ արդյունավետ կառավարումը: Այս ուղղությամբ Կենտրոնը պլանավորել է իրականացնում է միջոցառումների համակարգ (տե՛ս Ռազմավարական ծրագիր, մաս 5, նպ 5, էջ 17-18- Հավելված 1):

ԳԿՄԿ կառավարումն իրականացնում են ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիան, Կենտրոնի գործադիր մարմինը՝ տնօրենը և գիտական խորհուրդը:

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիան կոլեգիալ կառավարման բարձրագույն մարմինն է, որը կանոնադրության համաձայն վերահսկում է կենտրոնի գործունեությունը, քննարկում և հաստատում է կառավարման համակարգը, կանոնադրությունը, և այլն:

Գիտական խորհուրդը ԳԿՄԿ գիտական և գիտատեխնիկական գործունեությունը համակարգող կոլեգիալ մարմին է, որի նախագահը տնօրենն է:

Գիտական խորհրդի կազմը և անդամների թիվը, տնօրենի առաջարկով, հաստատում է ՀՀ ԳԱԱ նախագահությունը:

Ի պաշտոնե խորհրդի անդամներ են տնօրենը, նրա տեղակալը և Կենտրոնի գիտական քարտուղարը:

Գիտական խորհուրդը քննարկում և հաստատում է տնօրենի և գիտական ստորաբաժանումների ղեկավարների գործունեության վերաբերյալ հաշվետվություններն ու առաջարկությունները, գիտական կադրերի պատրաստման, գիտական հետազոտությունների, միջազգային գիտական համագործակցության հարցերը, ռազմավարության ծրագիրը, հրատարակության է երաշխավորում աշխատակիցների մենագրությունները, ժողովածուները և այլն:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որն ընտրվում է «ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ ԳԱԱ կանոնադրությամբ սահմանված կարգով ՀՀ ԳԱԱ նախագահության կողմից և իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և ԳԿՄԿ կանոնադրությամբ նախատեսված լիազորություններ:

Ամբիոնների կառավարումը.

Ամբիոնները Կենտրոնի կառուցվածքային հիմնական ուսումնագիտական ստորաբաժանումներն են, որոնք միավորում են մասնագիտական ընդհանրություն ունեցող դասախոսական կազմը, կազմակերպում և իրականացնում են ուսումնական գործընթաց, ուսումնամեթոդական, գիտահետազոտական և կազմակերպչական աշխատանքներ, իրականացնում բարձրորակ մասնագետների և գիտամանկան կադրերի պատրաստում: Ամբիոնը ղեկավարում է ամբիոնի վարիչը հինգամյա պաշտոնավարման ժամկետով: Ամբիոնի վարիչի պաշտոնը կարող է զբաղեցնել գիտությունների դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը: Նշված պաշտոնը կարող է զբաղեցնել նաև գիտությունների թեկնածու գիտական աստիճան ունեցող անձը:

Գիտամանկավարժական տարակարգի աշխատակիցների թափուր պաշտոնների զբաղեցումը կատարվում է «Գիտակրթական միջազգային կենտրոնի պրոֆեսորադասախոսական համակազմի ընտրության և պաշտոնների տեղակայման ընթացակարգով» («Կանոնակարգ ամբիոնների ձևավորման, գործունեության և ամբիոնների վարիչների ընտրության», էջ 86, ՈԱ ձեռնարկ – Հավելված 3):

Ուսումնական գործընթացների, ինչպես նաև գիտահետազոտական, ֆինանսական և տնտեսական գործունեության վարչարարությունն ու կառավարումն իրականացվում է տնօրինության, ամբիոնների և բաժինների միջոցով:

Կենտրոնի կառավարման համակարգի բոլոր մակարդակներում ընդունված որոշումները կյանքի են կոչվում տնօրենի կողմից արձակված հրամաններով կամ հրահանգներով և միտված են Կենտրոնի առաքելությանն ու նպատակների իրականացմանը: Կառավարման ստորին օղակներում ձևավորված առաջարկությունները քննարկվում են ներքինից վերև (ամբիոնի նիստ, Գիտական Խորհրդի նիստ)՝ պահպանելով դեմոկրատիայի և էթիկայի կանոնները:

Այսպիսով, Կենտրոնի կառավարման համակարգն ունի անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսներ՝ իր բազմակողմանի գործառնություններն իրականացնելու համար:

ԳԿՄԿ-ն իր գործունեության մասին յուրաքանչյուր տարի հաշվետվություն է ներկայացնում ՀՀ ԳԱԱ նախագահությանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ք. ՄՈԻՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցել իրենց առնչվող որոշումների կայացմանը:	
Հիմքեր	<p>ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի գործունեության /տր խմբագրությամբ/ -Հավելված 16,</p> <p>ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ամբիոնների ձևավորման, գործունեության և ամբիոնների վարիչների ընտրության /տր խմբագրությամբ/ - Հավելված 20</p> <p>«ԳԿՄԿ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման կարգը» - Հավելված 13</p>

ԳԿՄԿ-ն իր գործունեության և որոշումների կայացման գործընթացում կարևորում է կոլեգիալությունը (տես՝ Գիտակրթական միջազգային կենտրոնի ռազմավարական ծրագիր, մաս 2, էջ 10, Հավելված 1), քանզի պրոֆեսորադասախոսական կազմի մասնակցությունն իրեն առնչվող որոշումների կայացմանն ունի իրավական երաշխիքներ այն հիմքով, որ «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածն ամրագրում է պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնակցության իրավունքը:

Ամբիոնների պրոֆեսորադասախոսական անձնակազմերը տվյալ մասնագիտական ամբիոնի անդամներ են և ամբիոնի վարիչի գլխավորությամբ մասնակցում են ամբիոնի ռազմավարական զարգացման, պլանավորման, ծրագրային, ուսումնամեթոդական, գիտակրթական, նորարարական և մասնագիտական-ոլորտային այլ հարցերի քննարկմանը (տես՝ Գիտակրթական միջազգային կենտրոնի ամբիոնի գործունեության կանոնակարգ, նոր խմբագրությամբ, ՈԱ ձեռնարկ, էջ 86, Հավելված 3):

Ամբիոնների նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում են գիտաշխատողները, ասպիրանտները, ուսումնաօժանդակ համակազմը:

Գիտակրթական միջազգային կենտրոնում գործում է ուսանողական ինքնակառավարման կազմակերպություն՝ ուսանողական խորհուրդ (ՈւԽ), որի գործող կանոնադրությունը նոր խմբագրությամբ ընդունվել է 2014 թվականին:

Ուսանողների նախաձեռնությամբ ու առաջարկով քննարկվել և պարբերաբար քննարկվում են իրենց կարիքներին վերաբերող հարցեր, ընդունվել և ընդունվում են համապատասխան որոշումներ:

Ուսանողները մասնակցում են ուսուցման որակն ապահովվող գործառույթներին և գնահատում պրոֆեսորադասախոսական անձնակազմի գործունեության արդյունավետությունը:

Ուսանողների մասնակցությունն ակտիվացնելու նպատակով Կենտրոնի ղեկավարությունը պարբերաբար կազմակերպում է հանդիպումներ ուսանողների և նրանց ակտիվի հետ:

Ուսանողների հետ համագործակցում է ԳԿՄԿ ղեկանը, որոնց համատեղ աշխատանքը հնարավորություն է ընձեռում վերհանել ուսանողների կրթական կարիքները, լիարժեք և լիիրավ դարձնելու նրանց մասնակցությունը, օժանդակելու նրանց մասնակցությունը ոչ ուսումնական առօրյայի կազմակերպմանը: Կենտրոնում գործում են ուսանողական խորհուրդը (ՈւԽ) և երիտասարդ գիտնականների խորհուրդը (ԵԳԽ): ԵԳԽ-ի ջանքերով և ակտիվ մասնակցությամբ կենտրոնանում ու մոբիլիզացվում է Կենտրոնի երիտասարդների գիտական միտքը, ուրվագծվում գիտության բնագավառում հեռանկարային գիտական ներուժը, ստեղծվում կամրջականություն կրթություն-գիտություն համատեքստում:

ԵԳԽ –ի և ՈւԽ-ի գործունեության արդյունքում կազմակերպված գիտաժողովների, սեմինարների, քննարկումների արգասիքն են ուսանողների գիտական աշխատանքների տպագրություններն ու մասնակցությունը ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային գիտաժողովներին:

ԳԿՄԿ-ն կարևորում է գիտակրթական և գիտահետազոտական գործընթացներում ուսանողների մասնակցության ակտիվացումը: Այս կարևորությունից ելնելով՝ Կենտրոնի ռազմավարական ծրագիրը նախատեսում է «Մագիստրոսական ինքնավարության զարգացում, Կենտրոնի կառավարմանը մագիստրոսների մասնակցության ընդլայնում, Գիտակրթական միջազգային կենտրոնի գործող մագիստրոսական կազմակերպությունների հզորացում» (տես Գիտակրթական միջազգային կենտրոնի ռազմավարական ծրագիր, մաս 5, նպ. 6, էջ 18, Հավելված 1): Ռազմավարական այս խնդրի իրականացման համար Գիտակրթական միջազգային կենտրոնի ռազմավարական ծրագրում անհրաժեշտ է համարվում այդ ուղղությունների բարեփոխման գործընթացների իրականացումը:

ԶՍՓՈՐՈՇԻՉ գ. ՍՈԻՉ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և

երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:	
Հիմքեր	<u>ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ՌԾ – Հավելված 1, ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ՌԾ իրականացման պլան-ժամանակացույց -Հավելված 2</u>

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գործունեության պլանավորման հիմնարար փաստաթուղթ է հանդիսանում զարգացման ռազմավարական ծրագիրը:

ՌԾ ուրվագծում է Կենտրոնի 2014-2018թթ. գործունեության հիմնարար ուղղությունները՝ ելակետ ունենալով հաստատության հեռանկարը: Այն մշակվել է Կենտրոնի կառուցվածքային ստորաբաժանումների գործուն մասնակցությամբ՝ հաշվի առնելով ակադեմիական բազմաոլորտային մասնագիտական կրթության արդի հիմնահարցերի և գործընթացների, Կենտրոնի ներքին և արտաքին շահակիցների, Կենտրոնի կարողությունների և գործունեության միջավայրի վերլուծության արդյունքները:

ՌԾ արտացոլում է կենտրոնի հայեցակարգային մոտեցումները, որոնք կողմնորոշում են նրա առաջիկա գործունեությունը և հավակնությունները կրթական, գիտական, հետազոտական և սոցիալական պատասխանատվության ուղղություններով: Նախանշված հայեցակարգային դրույթները հիմք են ծառայել գործողությունների պլանի մշակման համար:

Գործողությունների պլանում ներկայացված են յուրաքանչյուր ռազմավարական խնդրի իրագործման համար պլանավորված գործողությունները/միջոցառումները, իրականացման վերջնաժամկետները, պատասխանատու մարմինները կամ անձինք: Այս գործիքը հնարավորություն է տալիս կառավարելու ՌԾ-ի իրականացման ընթացքը և անհրաժեշտության դեպքում՝ կատարելու շտկումներ: Ժամանակացույց-պլանի իրականացումը յուրաքանչյուր ուստարվա ավարտին քննարկվում և գնահատվում է:

Կենտրոնի կրթության գործընթացը պլանավորվում և կազմակերպվում է ուսումնական պլաններով, առարկայական ծրագրերով, ուսումնական ժամանակացույցով և դասացուցակներով:

Կրթական ծրագրերի ուսումնական պլանները մշակվում են ամբիոնների կողմից և ներկայացվում Կենտրոնի գիտական խորհրդի հաստատմանը: Վերջինիս հիման վրա կատարվում է դասախոսների հաստիքների և ուսումնական բեռնվածության տարեկան պլանավորում:

ԶՍՓՈՐՈՇԻՉ ղ. ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

Հիմքեր	<u>ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ՌԾ, 2014-20188 թթ. – Հավելված 1</u>
--------	--

Արտաքին և ներքին միջավայրային փոփոխությունները մեծապես ազդում են կենտրոնի տարբեր ոլորտների գործունեության վրա: Կենտրոնի գործունեության վրա ազդող գործոնների մշտադիտարկումը, ուսումնասիրությունն ու վերլուծությունը կենտրոնում պարբերաբար իրականացվող շարունակական գործընթացներ են:

Կենտրոնի գործունեության վրա ազդող արտաքին (ընդունելություն, ֆինանսավորման համակարգ, անկանխատեսելի իրավիճակներ, աշխատաշուկայի և հասարակական պահանջներ, օրենսդրական փոփոխություններ և այլն) և ներքին (պրոֆեսորադասախոսական կազմի հոսունություն, ծերացում, լաբորատոր գործիքակազմի ապահովվածություն, օժանդակ ենթակառուցվածքների աշխատանքի կազմակերպման արդյունավետություն և այլն) միջավայրի գործոնները ուսումնասիրվում և վերլուծվում են կենտրոնի Կրթության որակի ապահովման բաժնի կողմից:

Գիտակրթական միջազգային կենտրոնում որոշումներ կայացնելիս հիմնվում են հավաստի տվյալների վրա, ինչը թույլ է տալիս ներդրված էլեկտրոնային, ավտոմատացված կառավարման տեղեկատվական համակարգը: Համակարգը առավել հստակ և վերահսկելի է դարձնում ուսումնական գործընթացը, քանի որ մուտքագրվում են ուսանողների ակադեմիական տվյալները, առաջադիմությունը, վարձավճարները գեղջելու, նպաստներ հատկացնելու, փոխատեղումները կատարելու, ուսումնական բեռնվածությունները հաշվարկելու գործընթացները:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. Քաղաքականություն և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

Հիմքեր	<u>ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի հիմնարկի զարգացման ռազմավարություն. 2014-2018 թթ.- Հավելված 1</u> <u>ՀՀ ԳԱԱ ՈԱ ձեռնարկ – էջ 5- 127 – Հավելված 3</u>
--------	--

ԳԿՄԿ որդեգրած քաղաքականությունը և վարչարարության գործունեությունը իրականացվում են որակի կառավարման «Պլանավորում, Իրականացում, Գնահատում, Բարելավում» սկզբունքի համաձայն՝ համապատասխան ընթացակարգերի միջոցով:

Կենտրոնի երկարաժամկետ պլանավորումը որոշող փաստաթուղթը զարգացման ռազմավարական ծրագիրն է, որն իրականացվում է ըստ մշակված և գիտական խորհրդի կողմից հաստատված ժամանակացույցի: Կենտրոնի ուսումնական ստորաբաժանումները (ուսումնական մաս, դեկանատ, ամբիոններ) գործում են համաձայն իրենց աշխատանքային ծրագրերի, որոնք համահունչ են ՌԾ դրույթներին: Կառուցվածքային մյուս ստորաբաժանումները (բաժիններ) իրենց գործունեությունն իրականացնում են տարեկան աշխատանքային պլանների միջոցով:

Կենտրոնի գործունեության ընդհանուր գնահատումն իրականացվում է տարեկան գործունեության վերլուծության և հաշվետվությունների միջոցով՝ ըստ գործունեության տարբեր ոլորտների համար նախանշված ցուցանիշների: Գնահատվում են Կենտրոնի գործունեության արդյունավետությունը, արձանագրված առաջընթացն ու հաջողությունները, ինչպես նաև բացահայտվում են թերություններն ու բացթողումները:

Թերությունների վերացման և գործունեության բարելավման համար կատարվում են համապատասխան փոփոխություններ հաջորդ տարվա աշխատանքային պլանում, դրանով իսկ ապահովվելով ԳԿՄԿ գործունեության շարունակական բարելավման գործընթացը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Գ. ՄՈԻԶ- ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:

Հիմքեր	Մասնագիտությունների կրթական ծրագրերի գնահատման մեխանիզմները – <u>«ԳԿՄԿ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման կարգը» - Հավելված 13</u> Կանոնակարգ ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի շրջանավարտների կողմից կրթական ծրագրի հարցում-գնահատման, ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի շրջանավարտների (առկա ուսուցմամբ) կողմից կրթական ծրագրի գնահատման հարցաշար, ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի շրջանավարտների (հեռակա ուսուցմամբ)
--------	--

	<p>կողմից կրթական ծրագրի գնահատման հարցաշար – <u>ՈԱ</u> <u>ձեռնարկ- էջ 103-122 – Հավելված 3</u> Տեղեկատվության հավաքագրման համակարգը և համապատասխան վերլուծություններ – 2011-2013 թթ. և 2012- 2014 թթ. առկան հեռակա շրջանավարտների կողմից կրթական ծրագրերի գնահատման վերլուծություն – <u>Հավելված 18</u></p>
--	---

ԳԿՄԿ կրթական ծրագրերի արդյունավետության և որակի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և կիրառման մեխանիզմները մանրամասն ներկայացված են «ԳԿՄԿ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման կարգը» - ում (տե՛ս Հավելված 13 - «ԳԿՄԿ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման կարգը»):

<p>ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ:</p>	
<p>Հիմքեր</p>	<p><u>Հայեցակարգ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ հանրային կապերի – Հավելված 22,</u> <u>ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կայք՝ www.isec.am,</u> Ֆեյսբուքյան էջեր և համանուն խումբ <u>(https://www.facebook.com/?ref=tn_tnmn#!/groups/161969827218660/,</u> <ul style="list-style-type: none"> • <u>https://www.facebook.com/vle.isec/</u> • <u>https://www.facebook.com/?ref=tn_tnmn#!/pages/International-Scientific-Educational-Center-of-NAS-RA/143649849055534</u>) Հրապարակումների մատչելիությունը և օբյեկտիվությունը գնահատող մեխանիզմները մշակման փուլում են:</p>

ԳԿՄԿ-ում կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տարածման քաղաքականությունը կոչված է ապահովելու ծրագրերի թափանցիկությունը և սովորողների տեղեկացվածությունը: Կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տարածման գործընթացը հենվում է անձի իրազեկվածության լինելու սկզբունքի վրա. այն է՝ յուրաքանչյուր ուսանողի և դասախոսի հասանելի են ծրագրերի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը:

Գիտակրթական միջազգային կենտրոնում առկա են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին տեղեկատվության հրապարակման հետևյալ միջոցները՝

- Կենտրոնի գործունեության տարեկան հաշվետվություններ, որտեղ զետեղված են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին օբյեկտիվ քանակական և որակական տեղեկատվություն,
- ինտերնետային կայքէջ (www.isec.am), կենտրոնի գործունեության լուսաբանման, թափանցիկության ապահովման ամենամատչելի և ամենակարևոր միջոցներից մեկն է: Կենտրոնում իրականացվող կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների մասին կայքում տեղեկատվությունը պարբերաբար թարմացվում է,
- դիմորդների համար նախատեսված ուղեցույցներ՝ մասնագիտական կողմնորոշման նպատակով,
- Կենտրոնի ֆեյսբուքյան էջեր,
- ուսումնառության կազմակերպման նպատակով կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումն ուսանողներին:

Միաժամանակ, իրազեկված լինելու նպատակով, թե՛ ինչպիսի մոտեցումներ ու դիրքորոշումներ են առկա ուսումնական ծրագրերի վերաբերյալ, իրականացվում է հանրային կարծիքի ուսումնասիրություն, գործատուների և այլ շահակիցների շրջանում հարցումների

անցկացում և վերլուծություն, քննարկումներ ներքին շահառուների հետ, անանուն հարցումներ ուսանողների, շրջանավարտների շրջանում կրթությունից բավարարվածության վերաբերյալ:

Ուսումնառության արդյունքների և ուսուցման արդյունավետության գնահատման հավաստիության ու որակի բարձրացման նպատակով Գիտական խորհրդի նիստերում պարբերաբար տեղի են ունենում քննարկումներ և ընդունվում որոշումներ, որոնք ուղղված են ուսանողների ընթացիկ և ամփոփիչ գնահատման ու ստեստավորման մեխանիզմների և գործընթացների արդիականացմանն ու կատարելագործմանը:

Շնորհիվ որակավորումների որակի գնահատման համար տեղեկատվական կարևոր սկզբնաղբյուր է ամփոփիչ ստեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները:

ՉԱՓԱՆԻՇ 2-Ի SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ul style="list-style-type: none"> • Կենտրոնի ղեկավարության բարձր շահագրգռվածություն որակի մշակույթի ձևավորման հարցում, • Հստակ կանոնակարգված է կենտրոնի կառավարման համակարգը, • կենտրոնը ունի համապատասխան անձնային և մասնագիտական ներուժ իր առջև դրված խնդիրներն ու նպատակները կյանքի կոչելու համար, • Կենտրոնի կողմից որդեգրված կանխատեսման ու պլանավորման երկարաժամկետ և կարճաժամկետ ձևաչափերը հնարավորություն են ընձեռում քայլ առ քայլ հասնելու կազմակերպության գերնպատակի իրականացմանը, բացահայտելով ու չեզոքացնելով ընթացքում առկա խոչընդոտներն ու բացթողումները: • Գիտական խորհրդի և տնօրենի ընդունած որոշումների թափանցիկություն և հասանելիություն: 	<ul style="list-style-type: none"> • Կենտրոնի կրթական ձևերի ու առանձնահատկությունների վերաբերյալ առավել ընդհանրական և համակողմանի տեղեկատվության տրամադրման մեխանիզմների մշակման և կիրառման անհրաժեշտություն: • Կառավարման համակարգի համար ոչ բավարար ֆինանսական միջոցներ • Կառավարման մարմինների և ուսումնական ստորաբաժանումների տարածքային ցրվածություն • Ուսանողների կողմից թույլ նախաձեռնողականություն կառավարման մարմիններում որոշումների կայացման գործում <ul style="list-style-type: none"> • Վարչակազմի ցածր վարձատրություն
Հնարավորություններ	Վտանգներ
<ul style="list-style-type: none"> • Կառավարման գործընթացներում միջազգային նախագծերի, դրամաշնորհների մասնակցություն և կապերի առկայություն: • Շրջանավարտների լայն ներկայություն Հայաստանի քաղաքական, տնտեսական, արդյունաբերական ղեկավար կազմերում, կենտրոնական և տարածաշրջանային կառավարման կառույցներում • Շարունակական աջակցություն միջազգային դրամաշնորհային կազմակերպությունների կողմից 	<ul style="list-style-type: none"> • Ժողովրդագրական բացասական միտումների վտանգ և որոշ մասնագիտությունների ցածր պահանջարկ • Ազգային կրթական օրենսդրության անհամապատասխանություն Բոլոնիայի խնդիրներին և եվրոպական ստանդարտներին:

Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:

Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման համար նախատեսվում է իրականացնել հետևյալ քայլերը.

- Կենտրոնի կրթական ձևերի ու առանձնահատկությունների վերաբերյալ լայնածավալ ու ամբողջական տեղեկատվության տրամադրման գործուն մեխանիզմների մշակում և կիրարկում:
- Այլընտրանքային ֆինանսական միջոցների ձեռքբերման ուղղությամբ լայնածավալ աշխատանքներ:
- Կառավարման մարմինների և ուսումնական ստորաբաժանումների տարածքային ցրվածության խոչընդոտը հաղթահարելու նպատակով կենտրոնի ներամբիոնային միասնական կառավարման և տեղեկատվական համակարգի զարգացում:
- Ուսանողների նախաձեռնողականության խթանում:

III. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-երը համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնամանր

Մասնագիտական կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային շարունակական արդիականացում, կրեդիտային համակարգի ընդլայնված կիրառելիություն մասնագիտաառարկական կրթական բոլոր ծրագրերում և ուսուցման ձևերում:

Ուսումնառության, դասավանդման և գնահատման գործընթացների էական բարելավման համար նպաստավոր պայմանների և խթանող մեխանիզմների ստեղծում, գիտելիքների մատուցման և գնահատման համակարգի շարունակական կատարելագործում, մասնագիտական կրթական ծրագրերում ուսուցման առաջադիմական մեթոդների և մեխանիզմների ներդրում: Մասնագիտական կրթության որակավորումներին և պահանջներին համարժեք շրջանավարտների մասնագիտական կոմպետենցիաների գնահատման գործուն համակարգի ստեղծում: [Տե՛ս ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ՌԾ.Էջ 6-8, 11-12/](#)

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈւՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

Հիմքեր [ՀՀ ԿԳ նախարարի՝ 02.07.2004, 17.08.2004, 25.06.2004, 25.05.2005, 03.05.2006., 19.07.2007, 05.05.2008, 05.05.2008., 04.05.2009, 04.05.2010, 21.06.2011, 02.05.2012, 25.01.2013, 24.03.2015, 14.04.2015, 18.04.2013 թվականների հրամանները, 22.01.2015 թ ՀՀ Կառավարության որոշումը - Հավելված 34 Հավելված 3-ՈԱ ձեռնարկ, Մաս 2 Հավելված -38-Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք 3 ՄԿԾ-ի Հավելված 35- ԳԿՄԿ Գիտ.խորհրդի որոշումներ Հավելված 36- ԳԿՄԿ կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ /առկա, հեռակա, նոր խմբագրությամբ](#)

Վերլուծել ՄԿԾ-ում նշված ուսումնառության ակնկալվող արդյունքների համահունչությունը հաստատության առաքելության հետ և համադրելիությունը պետական կրթական չափորոշիչների և Որակավորումների ազգային շրջանակի հետ:

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնը ՀՀ ԳԱԱ գիտահետազոտական

կազմակերպությունների հետ համատեղ ՀՀ Կրթության և գիտության նախարարության հաստատած մասնագիտությունների գծով առաջարկում է կրթական ծրագրերի լայն ցանկ՝ կրթական երկու մակարդակներում /մագիստրոսի և հետազոտողի կրթական աստիճաններում/, ինչը համահունչ է Կենտրոնի առաքելությամբ և ռազմավարական նպատակներով սահմանված գործունեության հիմնական ուղղություններին:

Կենտրոնի 21 ամբիոններում իրականացվում է 26 մագիստրոսական կրթական ծրագրեր, որոնցից 23-ը առկա ուսուցմամբ, 11-ը՝ հեռակա, և 62 մասնագիտություններով՝ ասպիրանտուրայի կրթական աստիճանում:

Այդ ծրագրերը, ըստ էության, գիտակրթական ծրագրեր են, որոնք ուսանողներին հնարավորություն են ընձեռում ընդգրկվելու ԳԱԱ-ում իրականացվող հետազոտություններում: Անհրաժեշտ է նշել, որ այս մոտեցումը նույնպես համապատասխանում է Կենտրոնի՝ իբրև գիտակրթական և գիտամշակութային հաստատության որդեգրած քաղաքականությանը: ԳԿՄԿ-ում իրականացվող բոլոր մասնագիտություններով կրթական ծրագրերը պարբերաբար ենթարկվում են վերանայման՝ պայմանավորված հանրապետության աշխատաշուկայի պահանջարկի ու տնտեսական գերակայությունների փոփոխմամբ և արտաքին ու ներքին շահակիցների կարիքների հաշվառմամբ, ինչպես նաև գիտական դպրոցի երիտասարդացման և պահպանման նկատառումներով: Նշվածը հնարավորություն է ընձեռում շաղկապելու Կենտրոնի կրթական ծրագրերի իրականացումը ներքին և արտաքին միջավայրային կարիքների և փոփոխությունների հետ, ինչն արտացոլվում է Կենտրոնի ռազմավարական պլանի համապատասխան նպատակներում: Այս գործընթացը Կենտրոնում սկսվել է դեռևս 2010 թվականից, երբ կրթական ծրագրերը էականորեն փոփոխվեցին՝ համաձայն կրեդիտային համակարգի պահանջների: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության «ՀՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին» որոշումը/2005թ./, ԳԿՄԿ-ում 2010 թվականից անցում է կատարվել ուսուցման կազմակերպման եվրոպական կրեդիտային համակարգի / ECTS/ /Տե՛ս ԳԿՄԿ ԳԽ 27.09.2010թ, 24.11.2010 թ. որոշումները- [Հավելված 35](#)/: Մշակվել են ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգեր /առկա և հեռակա ուսուցմամբ, նոր խմբագրությամբ, 08.04.2014/-/Տե՛ս [Հավելված 36](#)/:

Կարգը ներառում է ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացակարգերը, գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը, ակադեմիական առաջադիմության չափանիշները, ինչպես նաև եզրափակիչ ատեստավորման կազմակերպման ընթացակարգը: Կարգում տրված են նաև կրեդիտային համակարգում գործածվող առանձին տերմիններ, նկարագրված են համակարգի բնութագրիչները, բնորոշ գործառույթները և ընթացակարգերը: Կենտրոնում կարևորվել է նաև կրեդիտային համակարգին առնչվող նորմատիվային փաստաթղթերի, կրթական ծրագրերի, մեթոդական փաստաթղթերի արդյունավետության խնդիրը, որոնց բարելավման կամ արդյունավետության բարձրացման նկատառումներից ելնելով, կատարվել են բազմաթիվ փոփոխություններ: Մշակվել և հաստատվել են կրեդիտային հենքով գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաների կազմակերպման և գնահատման և մագիստրոսական թեզերի նախապատրաստման և պաշտպանության ներկայացման կարգերը, ընտրովի դասընթացների կազմակերպման ընթացակարգերը, վերամշակվել և կրեդիտային համակարգի պահանջներին են համապատասխանեցվել առարկայական դասընթացների կրթական ծրագրեր և մեթոդական մոտեցումները:

Յուրաքանչյուր կրթական ծրագրի համար պատրաստվել է կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք: Դասընթացների տեղեկագիրքը

ներառում է կրթական ծրագրի մասնագիրը և համապատասխան մոդուլ/դասընթացների մանրամասն նկարագրիչները (դասընթացի նպատակը, կրթական վերջնարդյունքներ, ուսուցման և դասավանդման մեթոդներ, գնահատման մեթոդներ և չափանիշներ): [/Տես Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք - Հավելված 38 / 3 ՄԿԾ-ի](#)

Բոլոր կրթական ծրագրերի դասընթացներն ունեն առարկայական նկարագրեր, որոնք ներառում են առարկայի նպատակը, կրթական վերջնարդյունքները (գիտելիք, կարողություն, հմտություն), դասընթացի դասավանդման, ուսումնառության և գնահատման ձևերը, ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը, ծրագրի ուսումնական պլանի քարտեզը, որի օգնությամբ ծրագրի յուրաքանչյուր կրթական վերջնարդյունք կապակցվում է իրեն ձևավորող դասընթացների կամ ուսումնական մոդուլների հետ: Կրթական ծառայությունների որակը ապահովելու և բարելավելու նպատակով, որը հիմնվում է ամբիոններում կատարվող ինքնավերլուծությունների արդյունքների վրա, գործատուների և շրջանավարտների առաջարկներով, մշակվել են կրթական ծրագրերի մշակման, հաստատման, մշտադիտարկման ու պարբերաբար վերանայման քաղաքականություն և ընթացակարգեր: Դրանք ներառում են կրթական վերջնարդյունքների ծրագրի մշակման քայլերի հաջորդականությունը, դրա պահանջարկվածության և իրականացման հնարավորության հիմնավորումը, վերջնարդյունքների լրակազմի սահմանում՝ ըստ ձևակերպված նպատակների և խնդիրների, ծրագրի բովանդակության և կառուցվածքի որոշումը, ուսումնական պլանի քարտեզի ձևավորումը, դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ընտրությունը, ծրագրի որակի գնահատման և շարունակական բարելավման միջոցառումների մշակումը, գործող կրթական ծրագրերի վերակառուցումը, նոր կրթական ծրագրի արտոնման ընթացակարգը, կրթական ծրագրի հաստատման և լիցենզավորման ներկայացման ընթացակարգը, ծրագրի մոնիթորինգի ընթացակարգը, կրթական ծրագրի պարբերաբար վերանայման և վերահաստատման ընթացակարգը [/Տես ՈԱ ԸՆԹՆԱՐԿ, Մաս 2 – Հավելված 3- 48-րդ էջից սկսած/](#):

Աշխատաշուկայի վերլուծության արդյունքում կատարված բացահայտումներին համապատասխան, հաշվի առնելով ներքին և արտաքին շահակիցների կարիքները, հետևողականորեն վերանայվում և ներդրվում են նոր մասնագիտական կրթական ծրագրերը: Օրինակ՝ 2009-2010 ուստարվանից «Տեմպուս» ծրագրի շրջանակներում մագիստրոսական կրթական համակարգում ներդրվել է «Գրադարանային տեղեկատվական աղբյուրներ» պիլոտային ծրագիրը, որը հաջողությամբ շարունակվում է առ այսօր և որի շրջանակներում ԳԿՄԿ-ն պատրաստում է ժամանակակից գրադարանավարներ՝ արդի գրադարանագիտության պահանջներին համահունչ:

Մագիստրոսի կրթական ծրագրով մասնագիտությունների անվանացանկը մշտապես համալրվում է պահանջարկ վայելող արդիական մասնագիտություններով և մասնագիտացումներով: Մասնավորապես՝ 2012 թվականից «Մոլեկուլային և բջջային կենսաբանություն», «Բիզնեսի կառավարում», 2013 թվականից՝ «Նեյրոֆիզիոլոգիա և տոքսիկոլոգիա», «Երկրաբանություն», «Տուրիզմի կառավարում», 2015 թվականից՝ «Մաքսային գործ» և «Սեյսմաբանություն և սեյսմակայուն շինարարություն»:

Մասնագիտության կրթական ծրագրի համար առաջավոր փորձի համեմատական վերլուծության (բենչմարքինգի) իրականացման քաղաքականությունը, ընթացակարգերը և կատարված աշխատանքի հիմքերը

Ներկայացնել այն կազմակերպությունների ցանկը (նշելով երկիրը), որոնց օրինակով ՄՈՒՀ-ը կատարել է մասնագիտությունների կրթական ծրագրերի առաջավոր փորձի համեմատական վերլուծություն (բենչմարքինգ):

Առաջավոր փորձի ուսումնասիրության նպատակով ամբիոնների մասնագիտական կրթական ծրագրերի պատրաստման նպատակով ուսումնասիրվել են ԱՊՀ և մի շարք այլ

<p>երկրների առաջատար ԲՈՒՀ-երի կրթական ծրագրերը, օրինակ՝ Մոսկվայի պետական համալսարանի քիմիական ֆակուլտետի մագիստրատուրայի, Կազանի պետական բժշկական համալսարանի, Բելոռուսի հանրապետության 14.04.02 «Դեղագործական քիմիա և ֆարմակոգնոզիա» մասնագիտության, Ֆլորիդայի համալսարանի (University of Florida, Pharmaceutical chemistry), Շոտլանդիայի Աբերդինի համալսարանի, Հունգարիայի Բուդապեշտի համալսարանի կրթական ծրագրերը և այլ:</p>
<p>ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈւՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:</p>
<p>Հիմքեր</p> <p>ԳԿՄԿ ՌԾ -Հավելված 1 ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի կրթական ծրագրերի հաստատման (արտոնման) կարգ – Հավելված 10 ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման կարգ – Հավելված 13 Հավատարմագրման դիմում-հայտում ամրագրված ՄԿԾ-ների համար Հավելված 37-ում բերված է ներքոհիշյալ աղյուսակների վերլուծությունը</p>
<p><i>Վերլուծել ՄԿԾ-ում նշված դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:</i></p> <p>Կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության որակի և արդյունավետության շարունակական բարձրացման նպատակով նպաստավոր պայմանների ապահովման կարևորագույն ուղղություններն ամրագրված են Կենտրոնի Ռեզոլուցիայի կողմից և պլան-ժամանակացույցում:</p> <p>Լրամշակված մասնագրերում առանձին բաժիններով ներկայացված են ծրագրերի կրթական վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդները: Օրինակ՝ մասնագիտական տեսական գիտելիքների ձեռքբերման համար մասնագրերում հիմնականում նշվում են դասախոսություններ, սեմինարներ, դասախոսի կողմից հանձնարարվող լրացուցիչ գրականության մշակում, իսկ գործնական մասնագիտական գիտելիքների համար՝ գործնական և լաբորատոր պարապմունքներ, տարբեր տեսակի պրակտիկաներ, խմբային նախագծերի կատարում, քննարկումներ, կուրսային աշխատանքներ, ավարտական և մագիստրոսական թեզերի պատրաստում և այլն:</p> <p>ԳԿՄԿ-ում առանձին դասախոսների կողմից կիրառվող դասավանդման և ուսուցման մեթոդների արդյունավետությունը գնահատվում է ինչպես քննությունների ընթացքում ուսանողների ցուցաբերած առաջադիմության արդյունքների վերլուծության օգնությամբ, այնպես էլ՝ յուրաքանչյուր կիսամյակի ավարտին անցկացվող դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների միջոցով:</p>
<p>ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈւՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:</p>
<p>Հիմքեր</p> <p>Հավելված- 38 -Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք/ Հավելված -36 -Կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ</p>
<p>Հավատարմագրման դիմում-հայտում ամրագրված 3 ՄԿԾ-ների համար ներկայացված</p>

ուսումնառության արդյունքները և համապատասխան գնահատման մեթոդները [տե՛ս](#) [Հավելված 37](#):

Վերլուծել ՄԿԾ-ում նշված ուսանողների գնահատման և գրագողության դեմ պայքարի նախատեսված մոտեցումների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ մագիստրատուրայում /2010թ./ կրեդիտային համակարգի ներդրմանը զուգահեռ վերանայվեց և վերամշակվեց գնահատման գործող կարգը, քննությունների և ստուգարքների անցկացման ձևերը և ներդրվեց գնահատման 20 միավորանոց սանդղակը: Գնահատման չափանիշները և ձևերը ներկայացվում են ուսանողներին տրամադրվող ուսումնառության ուղեցույցներում և ծրագրի տեղեկագրքերում զետեղված դասընթացների նկարագրիչներում: [/Տե՛ս Հավելված 38/](#)

Կենտրոնում ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման գործող կարգը վերջին անգամ վերանայվեց 2014 թ. [/Տես Հավելված –36/](#): Սույն կարգում սահմանված են ուսումնական մոդուլների բնույթով պայմանավորված ընթացիկ և եզրափակիչ գնահատման ձևերը/գրավոր կամ բանավոր քննություն/ստուգում./ընթացիկ և եզրափակիչ քննությունների ժամանակացույցերը և իրականացման ընթացակարգերը, քննությունների վերահանձնման ընթացակարգը և ժամանակացույցը, ինչպես նաև ավարտական ատեստավորման կարգն ու գնահատման չափանիշները: Ուսանողի արդյունարար գնահատականը ձևավորվում է կիսամյակի ընթացքում դասընթացին ուսանողի մասնակցության ակտիվությունից, դասընթացի առաջադրանքների կատարման 2 ընթացիկ գնահատումից կամ ստուգումից, դասընթացի եզրափակիչ գնահատումից:

Գնահատման չափանիշները և ձևերը ներկայացվում են ուսանողներին տրամադրվող ուսումնառության ուղեցույցներում և ծրագրի տեղեկագրքերում զետեղված դասընթացների նկարագրիչներում:

Գնահատման գործընթացում ակադեմիական ազնվությունը պահպանելու նպատակով Կենտրոնում գրավոր քննություններն անցկացվում են հատուկ տեսրերում, լուծարքները ընդունում են ամբիոնի վարիչի մասնակցությամբ, ուսանողների կողմից կատարվող հետազոտական աշխատանքները պարբերաբար լսվում, քննարկվում և վերահսկվում են համապատասխան ամբիոններում և թեզի ղեկավարների կողմից, իսկ մագիստրոսական թեզի պաշտպանությունները ձայնագրվում են:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Պ. ՄՈւՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը:

Հիմքեր [Տե՛ս Հավելված 41](#)

Մագիստրոսական կրթության կրեդիտային համակարգով ուսուցման կազմակերպման կապակցությամբ սկսած 2008 թվականից Կենտրոնում կատարվել են ՄԿԾ բովանդակային փոփոխություններ:

Մագիստրանտների շարժունությունը խթանելու նպատակով բարեփոխված ՄԿԾ-ում ներառվել են կամընտրական / առաջարկված ընտրովի առարկաների ցանկից/, հարակից առարկաների ցանկից և այլ ծրագրերի ցանկից ընտրովի դասընթացներ, որոնց համար մշակված է ընթացակարգ և հատկացված է ժամանակ այդ դասընթացներին գրանցվելու համար: Կրթական ծրագրերում ընտրովի դասընթացներին հատկացվում է առնվազն 18 ECTS կրեդիտ:

Միջբուհական և ներկենտրոնային շարժունակությունը կարգավորվում է «Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունակության

կարգով» /տես՝ [Հավելված 41](#)/ : Ըստ այդ կարգի՝ Կենտրոնի սովորողին թույլատրվում է փոխել մասնագիտությունը /մասնագիտացումը/, եթե կրթական ծրագրերի առարկաների տարբերությամբ պայմանավորված կրեդիտների թիվը չի գերազանցում 20 կրեդիտը: Սովորողների շարժունակության խթանման նպատակով Կենտրոնում արդեն ներդրվել և կիրառվում են ECTS կրեդիտային համակարգը և համաեվրոպական ձևաչափի ավարտական փաստաթղթի /դիպլոմի/ հավելվածը: Որակավորումների համադրելիության, մրցակցության ապահովման և կրթության որակի ճանաչման նպատակով Կենտրոնը ակտիվ գործունեություն է ծավալում միջազգային կրթական կառույցներին անդամակցելու և արտերկրի համալսարանների հետ գիտության և կրթության ոլորտներում համագործակցության բնագավառում: Օրինակ՝ Տեմպուս-Տասիս միջազգային ծրագրի շրջանակներում Կենտրոնը մշակել և ներդրել է «Նոր մագիստրոսական ծրագիր՝ Գրադարանային գործ և ինֆորմատիկա» ծրագիրը՝ «Գրադարանային – տեղեկատվական աղբյուրներ» մասնագիտության գծով, որը համապատասխանում է Եվրոպական կրթական չափորոշիչներին, ինչպես նաև ներկայիս աշխատաշուկայի պահանջներին և կարիքներին:

Ներկայացնել այն ուսումնական հաստատությունների ցանկը (նշելով երկիրը և ուսանողների թվաքանակն ըստ տարիների), որոնց հետ հաստատությունն ունի ուսանողների փոխանակումն ու շարժունությունն ապահովող գործող համաձայնագրեր:

Ուսանողների ներհոսք

	Երկիր, հաստատություն	2010	2011	2012	2013	2014
1	Հորդանանի համալսարան	0	0	0	0	1
2	ԵՊԼՀ	0	0	0	1	0
3	Վանաձորի պետական համալսարան	0	0	0	0	1
4	ԵՊՀ	0	1	0	1	0
5	ՀՊՄՀ	0	0	0	0	2
6	ՀՊՏՀ	0	0	0	1	0
7						

Ուսանողների արտահոսք

	Երկիր, հաստատություն	2010	2011	2012	2013	2014
1	ԵՊՃՀ	0	0	0	1	0
2						

Ներկայացնել այն ուսումնական հաստատությունների ցանկը (նշելով երկիրը և դասավանդողների թվա քանակն ըստ տարիների), որոնց հետ հաստատությունն ունի դասավանդող անձնակազմի փոխանակումն ու շարժունությունը ապահովող գործող համաձայնագրեր:

Դասավանդողների ներհոսք

	Երկիր, հաստատություն	2010	2011	2012	2013	2014
1	ՀՀ, ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպություններ	88	87	91	92	92
2	ՀՀ, ԵՊՀ	14	14	14	14	14
3	ՀՀ, Խ.Արուսյանի անվ.ՀՊՄՀ	12	12	11	11	11
4	ՀՀ, Հայ-ռուսական /Սյավոնական/ համալսարան	5	5	5	5	5
5	ՀՀ, Պոլիտեխնիկ	4	4	4	4	4
6	ՀՀ, ՀՀ Պետական կառավարման ակադեմիա	3	3	3	3	3
7	ՀՀ, Վանաձորի պետական համալսարան	1	1	1	1	1
8	ՀՀ, ԵՊԼՀ /Բրյուսովի անվ./	3	3	3	3	3
9	ՀՀ, ՀՊՏՀ	2	2	2	2	2
10	ՀՀ, Արդարադատության դպրոց	1	1	1	1	1
11	ՀՀ, ՀԱԱՀ	4	4	4	4	4

12	ՀՀ, ՀԱՊԿԻ	1	1	1	1	1
13	ՀՀ, ՀՀ վիճ. վարչություն	1	1	1	1	1
14	ՀՀ, ՀՀ նախագահի աշխատակազմ	1	1	1	1	1
15	ՀՀ, ՀՀ կենտրոնական բանկ	2	2	2	2	2
<i>Դասավանդողների արտահոսք</i>						
	<i>Երկիր, հաստատություն</i>	<i>2010</i>	<i>2011</i>	<i>2012</i>	<i>2013</i>	<i>2014</i>
1	ՀՀ, ԵՊՀ	4	4	4	4	4
2	ՀՀ, ՀՊՄՀ	3	3	3	3	4
3	ՀՀ, Հայ-ռուսական /Սլավոնական/ համալսարան	1	1	1	1	1
4	ՀՀ, Գլաձոր	1	1	1	1	1
5						
6						
7						

Ուսանողների «ներհոսք» և «արտահոսք» աղյուսակներում ներկայացված թվերը վերաբերում են այլ բուհեր տեղափոխված կամ այլ բուհերից տեղափոխված ուսանողներին: Իսկ «դասավանդողների ներհոսք» աղյուսակում բերված թվերը վերաբերում են ԳԿՄԿ-ի այն դասավանդողներին, որոնք, օրինակ, հանդիսանալով ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպությունների աշխատակիցներ, դասավանդում են տվյալ կազմակերպություններում տեղակայված մասնագիտական ամբիոններում:

Վերլուծել և հիմնավորել մասնագիտության կրթական ծրագրերի բովանդակային հուսալիությունը, ՄՈՒՀ-ի և այլ հաստատությունների համապատասխան մասնագիտական ծրագրերի հետ համադրելիությունը, ինչպես նաև այդ մոտեցումների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: Բնչքանտ՝ վ է այն նպաստում ուսումնառողների ու դասավանդողների շարժունությանը:

Կենտրոնի մասնագիտական կրթական ծրագրերը բովանդակային առումով հուսալի են, դրանք ապահովում են ուսումնառության ակնկալվող արդյունքների արդյունավետությունը: Ուսումնական դասընթացների ծրագրերի կազմման, ուսումնամեթոդական նյութերի ընտրության, գիտահետազոտական պրակտիկայի կազմակերպման, ինչպես նաև մագիստրոսական թեզերի թեմաների առաջարկման ժամանակ անպայմանորեն հաշվի են առնվում ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպությունների լաբորատոր և գիտատեխնիկական ներուժը: Այսպես օրինակ, հաշվի առնելով «Պատմություն» և «Միջազգային հարաբերություններ» մասնագիտություններով մագիստրանտ շրջանավարտների և շահագրգիռ կազմակերպությունների կարծիքները և առաջարկները՝ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ «Պատմություն և միջազգային հարաբերություններ» ամբիոնի և ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի համագործակցության արդյունքում ինստիտուտի կազմում ստեղծվել է Ընդհանուր պատմության բաժին: Մագիստրատուրայի շրջանավարտների մի մասը հնարավորություն է ստանում հետազոտական աշխատանքները շարունակել կամ որպես ասպիրանտ, հայցորդ, կամ ուղղակի աշխատել ըստ մասնագիտության: Այսպես, միայն վերջին տարիներին «Պատմություն» մասնագիտության շրջանավարտներից 4-ը հաջողությամբ պաշտպանել են թեկնածուական ատենախոսություն, իսկ տարբեր տարիների 15 շրջանավարտներ աշխատանքի են ընդունվել պատմության ինստիտուտում:

Մասնագիտության կրթական ծրագրերը պարբերաբար համադրվում են այլ ճանաչված ԲՈՒՀ-երի համապատասխան կրթական ծրագրերի հետ, բովանդակային առումով համահունչ են այդ ծրագրերին, որն էլ խթանում է մագիստրանտների և դասախոսների շարժունությանն ու միջազգայնացմանը: Ուսումնասիրվում և համադրվում են ինչպես

հայաստանյան, այնպես էլ ԱՊՀ և եվրոպական երկրների առաջատար բուհերի հետ, օրինակ՝ վերլուծության ենթարկված 3 ՄԿԾ-ների դեպքում ուսումնասիրվել են ՌԴ ընդհանուր և մասնագիտական կրթության նախարարության և ՌԴ Կրթության և գիտության նախարարության Լոմոնոսովի անվան պետական համալսարանի, Ժողովուրդների բարեկամության համալսարանի, Վոլգոգրադի բժշկական համալսարանի դեղագործական ֆակուլտետի, Բելառուսի պետական համալսարանի ուսումնական ծրագրերը և այլն:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. ՄՈւՀ-ում առկա է մասնագիտության կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

Չահակիցների կարիքները հաշվի առնող ուսումնառության ակնկալվող արդյունքների վերանայման հաստատված քաղաքականությունը – [Հավելված- 38 -Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք/](#)
[Հավելված -36 -Կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ](#)
Արտաքին և ներքին շահակիցների կարիքների ուսումնասիրության մեթոդներից են տարատեսակ հարցումները:
Մասնագիտությունների կրթական ծրագրերի պարբերաբար գնահատման քաղաքականությունը, ընթացակարգերը և մեխանիզմները (կցել կամ հղում կատարել համապատասխան կանոնակարգին) – ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կրթական ծրագրերի հաստատման (արտոնման) կարգ-
[Հավելված 10](#), ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման կարգ-
[Հավելված 13](#)

Նկարագրել վերջին 5 տարիների ընթացքում մասնագիտության կրթական ծրագրի վերանայման շրջանակներում կատարված ուսումնասիրությունների արդյունքները և դրանց հիման վրա իրականացրած բարելավումները:

ԳԿՄԿ-ում վերջին անգամ 2014 թ. են իրականացվել եկրթական ծրագրերի բովանդակային և կառուցվածքային նորացման փուլային աշխատանքներ՝ աշխատաշուկայի արդի պահանջներին և եվրոպական ծրագրային չափանիշներին համահունչ՝ ՀԲ-ի կողմից տրամադրված «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագրի շրջանակներում: ԳԿՄԿ ամբիոններում կազմակերպվել են քննարկումներ, դասախոսական կազմին ներկայացվել է կրթության ոլորտում կրթական բարեփոխումների և կրթության որակի ապահովման համատեքստում կրթական ծրագրերի փոխարեն գործածության մեջ մտնող նոր առարկայական նկարագրերը: /[Տե՛ս համապատասխան ուս.պլանները և ամբիոնների նիստերի արձանագրությունները –Հավելված 26](#) /:

Օրինակ՝ Կրթական ծրագրերում առկա բացթողումների շտկում և վերանայում է կատարվել մասնավորապես «Ռադիոտեխնիկա և կապ», «Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա» մասնագիտությունների կրթական ծրագրերում: Քննարկումների արդյունքում ամբիոններում առաջարկություններ են եղել որոշ առարկաներ հանել ուսումնական պլաններից ու նոր ուսումնական պլաններում ներառել աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ առարկաներ: /[Տե՛ս համապատասխան ուս.պլանները և ամբիոնների նիստերի արձանագրությունները-](#)

Հավելված 26/

Վերլուծել Չափանիշ 3-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:

ՉԱՓԱՆԻՇ 3-Ի SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ul style="list-style-type: none"> • Կրթական ծրագրերը համապատասխանում են հաստատության առաքելությանը: • Կրթական ծրագրերը ձևավորվում են՝ համաձայն պետական կրթական չափորոշիչների պահանջների: • Դասավանդման և ուսումնառության ժամանակակից մեթոդների կիրառման հնարավորությունների և փորձի առկայություն: • Յուրաքանչյուր ուստարվա ավարտին հաշվի առնելով շրջանավարտների կողմից կրթական ծրագրերի գոհունակության հարցումները, գործատուների շրջանում կրթական ծրագրերի գնահատման արդյունքները, համապատասխան մասնագիտական ամբիոնների առաջարկները, ինչպես նաև պետական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի հաշվետվությունը՝ կրթական ծրագրերի ուս.պլաններում կատարվում են համապատասխան փոփոխություններ: • Նոր դասընթացների հաստատումը կատարվում է փորձաշրջանով: • Մագիստրոսական թեզի թեմաների ընտրության ժամանակ հաշվի են առնվում համապատասխան ակադեմիական կազմակերպություններում կատարվող գիտահետազոտական աշխատանքները: • Ուսանողների գիտելիքների գնահատման մշտապես կատարելագործվող համակարգ: • Կրթական ծրագրերը կազմվում են համապատասխան ակադեմիական գիտական կազմակերպությունների ներկայացրած դասընթացների հիման վրա: • Մասնագիտական կրթական ծրագրերի իրագործման համար ժամանակակից լաբորատոր բազայի, գիտատեխնիկական միջոցների և գրադարանային ֆոնդի բավարար ապահովվածություն: 	<ul style="list-style-type: none"> • ԿԾ-երի տարեկան մոնիթորինգի փորձի բացակայություն: • ԿԾ-երի լրիվ շրջափուլի արդյունքների գնահատման և վերանայման մշտական գործող մեխանիզմների բացակայություն, արդյունքում՝ ոչ բոլոր ծրագրերի բավարար հիմնավորվածություն աշխատաշուկայի պահանջների տեսանկյունից: • Կրթական վերջնարդյունքների հստակ սահմանման և գնահատման բավարար փորձի բացակայություն: • ԿԾ-ի և նրա առանձին բաղադրիչների որակի գնահատման և վերանայման գործընթացներում ուսանողների և արտաքին շահակիցների ոչ բավարար հետաքրքրվածություն: • Առաջատար մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ մագիստրանտների, ասպիրանտների, դասավանդողների և ղեկավար անձնակազմի փորձի փոխանակման և ձեռքբերման սակավություն: • Ուսանողակենտրոն քաղաքականության սկզբունքի կիրառման նպատակով դասախոսների և սպասարկող անձնակազմի վերապատրաստման և գնահատման հայեցակարգերի բացակայություն: •
Հնարավորություններ	Վտանգներ

<ul style="list-style-type: none"> • Կենտրոն - գործընկեր կազմակերպություններ գործընկերային և պայմանագրային կապերի առկայություն և ընդլայնման հնարավորություններ: • Միջհամալսարանական պայմանագրերով Կենտրոնի միջազգային կապերի ընդլայնում: • Բոլոնիայի գործընթացների զարգացմանը միտված պայմանների շարունակական բարելավում: • ԿԾ-երի միջազգային և ազգային հավատարմագրման հնարավորություններ: • Համատեղ ԿԾ-երի մշակում /հեռավարը/: • Մի շարք մասնագիտությունների նկատմամբ աշխատաշուկայում աճող պահանջարկը: 	<ul style="list-style-type: none"> • Արտասահմանյան կազմակերպություններից առաջատար մասնագետներ հրավիրելու սահմանափակ հնարավորություններ: • Անկայուն և չկարգավորված աշխատաշուկա և չկանխատեսվող զարգացումներ: • Արտաքին շահակիցների /հիմնականում գործատուների/ ոչ բավարար շահագրգռվածություն և մասնակցություն ԿԾ-երի իրականացմանը և շարունակական բարելավմանը: • ԿԾ մեծամասնության մենաշնորհային դիրք • Աշխատաշուկայի պահանջարկի հարափոփոխ պահանջները: • ՀՀ աշխատաշուկայում գործող պահանջարկի փոփոխություններով պայմանավորված արտաքին շահակիցների թույլ արձագանքը և անտարբերությունը:
--	---

Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:

Նախատեսվում է թույլ կողմերի և վտանգների հաղթահարման համար իրականացնել հետևյալ քայլերը.

- Կրթական ծրագրերի մոնիթորինգի, ինչպես նաև գնահատման և վերանայման գործուն մեխանիզմների ներդրում:
- Կրթական վերջնարդյունքների սահմանման և գնահատման միջազգային փորձի ուսումնասիրություն, տեղայնացում և ներդրում:
- Ուսանողների և արտաքին շահակիցների հետաքրքրվածության և ներգրավվածության ապահովում կրթական ծրագրերի առանձին բաղադրիչների որակի գնահատման և վրանայման գործընթացում:
- Միջազգային դրմաշնորհային ծրագրերից ֆինանսական և այլընտրանքային այլ միջոցների շնորհիվ արտասահմանյան առաջատար բուհերից և գիտակրթական կենտրոններից առաջատար մասնագետներ հրավիրելու հնարավորությունների ստեղծում:
- Ուսանող – գործատու կապի սերտացում, գործատուների շահագրգռվածության բարձրացում և նրանց մասնակցության ապահովում ուսումնառության գործընթացում:
- Իրազեկման և բացատրական աշխատանքի միջոցով ապահովել մագիստրանտների, ասպիրանտների, դասավանդողների և ղեկավար աշխատողների մասնակցությունը միջազգային ծրագրերին:
- Առաջարկություններ ներկայացնել ՀՀ ԿԳՆ՝ դասախոսների և սպասարկող անձնակազմի վերապատրաստման և գնահատման միասնական հայեցակարգի մշակման ուղղությամբ:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Ուսանողների հավաքագրման, ընտրության մեխանիզմների արդյունավետության բարձրացում, ընդունելության արդարության և ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացի

լիարժեք թափանցիկության ապահովում, գնահատման համակարգի, չափանիշների և ընթացակարգի վերաբերյալ ուսանողների իրազեկվածության մակարդակի բարձրացում, ուսումնական գործընթացի վերահսկելիության ապահովում: Ուսանողների կարիքների վերհանման հստակ մեխանիզմների կիրարկում և կանոնակարգված ուսանողանպաստ միջոցառումների ձեռնարկում: Ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների շարունակական զարգացում, Կենտրոնի գիտաուսումնական գործունեության որակի ապահովման գործընթացներում ուսանողների դերի բարձրացում
[/Տե՛ս ՌԾ, էջ 14, 15/:](#)

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:	
Հիմքեր	Կանոնակարգ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ասպիրանտուրայի, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման – Հավելված 14, Կարգ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ մագիստրատուրայի առկա ուսուցմամբ ընդունելության /նոր խմբագրությամբ/ - Հավելված 8, Ուսման նպաստների հատկացման կանոնակարգը - Հավելված 9 Յուրաքանչյուր մասնագիտության կրթական ծրագրում ընդգրկված ուսանողների թիվը և վերլուծությունը՝ ստորև:

Բարելավմանն ուղղված ծրագրեր.

Ուսումնական հաստատությունում ուսանողների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի:							
Ուսանողների թիվը			2010	2011	2012	2013	2014
Մագիստրոսի		առկա	350	406	347	303	251
		հեռակա	110	161	262	271	316
Հետգոտտողի		առկա	105	98	91	86	116
		հեռակա	60	55	63	55	67
Ուսումնառողների շարժունությունը							
Ուսումնառողների շարժը վերջին 5 տարվա կտրվածքով							
Ուսանողների արտահոսք							
Հաստատություն/երկիր			2010	2011	2012	2013	2014
1	Չեխիայի Հանրապետություն		1				
2	Գերմանիա						1
3							
Ուսանողների ներհոսք							
Հաստատություն/երկիր			2010	2011	2012	2013	2014
1	Երևանի պետական համալսարան					4	4
2	Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետ. մանկ.ինստիտուտ			1			1
3	Վ. Բրյուսովի անվան պետ. լեզվբ. համալսարան					1	1
4							
Հեռացումներ և վերականգնումներ							
Ուսանողների թիվ			2010	2011	2012	2013	2014

1	Դուրս մնացած ուսանողների տոկոսը/ թիվը	73	85	117	108	112
2	Վերականգնված ուսանողների տոկոսը/թիվը	15	17	24	13	19

Ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման նպատակով Կենտրոնում գործում են ընդունելության արդյունավետության գործընթացի բարելավման նպատակադրված հստակ ծրագրեր, որոնք բխում են ԳԿՄԿ 2014-2018թթ. զարգացման ռազմավարական ծրագրի դրույթներից (հավելված 1-ՌՕ, Մաս 4, նպատակ 5 –էջ 14):

Կենտրոնում մագիստրոսի կրթական ծրագրով /առկա, հեռակա/ ընդունելությունն ու մրցույթը իրականացվում են ՀՀ ԿԳ նախարարության հաստատած պահանջներին և չափանիշներին համապատասխան՝ ՀՀ ԿԳ նախարարության ու Կենտրոնի կողմից՝ համապատասխանաբար «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգ»-ի, «ՀՀ պետական բուհերի հեռակա ուսուցման ընդունելության» կանոնների, կանոնակարգի և ընթացակարգի և Կենտրոնում գիտխորհրդի կողմից հաստատված մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կանոնակարգի համաձայն (Հավելված 8- Կանոնակարգ ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման): Մրցույթն իրականացվում է ըստ մասնագիտությունների ՀՀ կառավարության և ՀՀ ԿԳ նախարարության կողմից /ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի/ հաստատված քննությունների ցանկին և տեղերին համապատասխան:

Ասպիրանտի ընդունելության մասին որոշումը կայացնում է ՀՀ ԳԱԱ Նախագահությունը, ընդունումը կատարվում է համապատասխան գիտական կազմակերպության տնօրենի հրամանով:

Դոկտորանտուրա ընդունվում են ՀՀ այն քաղաքացիները, ովքեր ունեն գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: (Հավելված 14 -Ասպիրանտուրայի ընդունելության, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման կանոնակարգ)

Յուրաքանչյուր կրթական ծրագրի և համապատասխան ուսուցման ձևի ընդունելության հայտարարությունները սահմանված ժամկետներում տեղադրվում են հաստատության կայք-էջում և հրապարակվում զանգվածային լրատվության միջոցներով:

Կենտրոնը ընդունելության գործընթացի աշխատանքները կազմակերպում է յուրաքանչյուր ուստարվա համար՝ ՀՀ ԿԳ նախարարություն համապատասխան առաջարկ է ներկայացնում մասնագիտությունների ցանկի, քննությունների, ընդունելության տեղերի և վարձավճարների չափերի վերաբերյալ, ինչպես նաև ընդունում է բոլոր կրթական ծրագրերով ու ուսուցմամբ ձևերով դիմած դիմորդների փաստաթղթերը:

Յուրաքանչյուր տարվա ընդունելության գործընթացի ավարտից հետո (ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի) գիտխորհրդում ամփոփված արդյունքներով մանրամասն քննարկվում և վերլուծվում են տվյալ տարվա ընդունելության կազմակերպման, անցկացման և իրականացման աշխատանքները:

Վերհանել հեռացումների և վերականգնումների պատճառները և տրամադրել տվյալ խնդիրների լուծման տարբերակները / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից Ուսանողների հեռացումների պատճառ են հանդիսանում հիմնականում երկու գործոններ.

1. Սոցիալական,
2. Ուսման առաջադիմություն

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ն ջանքեր է գործադրում շտկելու երկու ուղղությամբ առկա իրադրությունը, նախ՝ ջանքեր է գործադրում տարբեր բարեգործական ընկերություններից /օրինակ՝ Բարեպաշտ սերունդ հիմնադրամ և այլն/ հայթաթելու համապատասխան դրամական միջոցներ սոցիալապես անապահով շերտերին աջակցելու համար: Միաժամանակ ԳԿՄԿ-ում գործում է ուսման վարձավճարների զեղչերի ձևով համակարգ (Տե՛ս Ուսման նպաստների հատկացման կանոնակարգը - Հավելված 9):

Ուսման առաջադիմության բարձրացման հետ կապված ԳԿՄԿ ամբիոններում առկա է ուսումնական խորհրդատուի հաստիք, որոնց հիմնական գործառույթն է աշխատանքներ տանել ուսանողների առաջադիմությունը բարձրացնելու ուղղությամբ, ինչպես նաև վերջիններիս տրամադրել համապատասխան տեղեկատվություն:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր:	
Հիմքեր	Կանոնակարգ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ –ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման – <u>Տե՛ս ՈԱ ձեռնարկ, էջ 103, . էջ 103 - Հավելված 3</u> <u>ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ուսանողական խորհրդի գործունեության կանոնակարգ –Հավելված -30</u> Վերհանված խնդիրների լուծումների և նրանց արտահայտման հասին տե՛ս ամբիոնների նիստերի արձանագրությունների, ԳԽ որոշումների մեջ:

Գիտակրթական միջազգային կենտրոնում 2014-2018թթ. զարգացման ռազմավարական ծրագրի մի շարք դրույթներով ուսանողների շրջանում նախատեսում է նրանց կրթական կարիքների բացահայտում և վերլուծություններ: Այդ նպատակով Կենտրոնի կողմից մշակվել և գիտական խորհրդի կողմից հաստատվել է «ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման» կանոնակարգը – /Տե՛ս ՈԱ ձեռնարկ, էջ 103, Հավելված 3/:

Մագիստրոսների շրջանում կատարված հարցումները նպատակաուղղված են ուսանողների կողմից դասախոսի գործունեության որակի, դասընթացի, ընթացիկ քննության կազմակերպման որակի, ամփոփիչ ատեստավորման քննության և ավարտական աշխատանքի պաշտպանության որակի գնահատմանը:

Մագիստրոսների կրթական կարիքների վերահանմանն անմիջականորեն նպաստում է նաև ՀՀ օրենսդրությամբ և կենտրոնի ներքին կանոնակարգերով սահմանված ուսանողների ներգրավվածության մասնաբաժինը կառավարման մարմիններում, որտեղ և ներկայացվում ու քննարկվում են ուսանողների արձագանքները կենտրոնի կողմից մատուցվող կրթական ծառայությունների, ինչպես նաև՝ կենտրոնի գործունեության տարբեր ոլորտներին առնչվող հարցերի շուրջ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:	
Հիմքեր	Լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների նկարագրությունը, նպատակները և ժամանակացույցը – Լրացական դասընթացներ, որոնք առկա են ուսումնական պլաններում Լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների բարելավման մեխանիզմները և ծրագրերը մշակման փուլում են /օրինակ՝ «Իրավագիտություն» /հեռակա/ մասնագիտության ուսումնական պլանը: Խորհրդատուների աշխատանքի ժամանակացույցը՝ ըստ ուսումնական պլանի:

<i>Պատասխանել հետևյալ հարցին:</i>	%
Ուսանողների ^ո թ տոկոսն է տեղեկացված խորհրդատվական ծառայությունների մասին:	82 %
Ուսանողների ^ո թ տոկոսն է ընդգրկված լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներում:	75 %
Ուսանողների ^ո թ տոկոսն է բավարարված խորհրդատվական	

ծառայություններից:	79 %	
Հետևյալ հարցերին պատասխանել այո կամ ոչ:	ԱՅՈ	ՈՉ
Արդյոք ուսումնառողներին հատկացվում են խորհրդատուներ:	+	
Եթե ոչ, արդյոք դա նախատեսվում է:		

ԳԿՄԿ ամբիոնները կազմակերպում են լրացուցիչ պարապմունքներ, տրամադրում են խորհրդատվություն, ինչը նպաստում է ուսանողների կրթական կարիքները բավարարելու լրացուցիչ հնարավորություններ:

ԳԿՄԿ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի կողմից պարբերաբար կազմակերպվում են տարբեր սեմինարներ, դասընթացներ, խորհրդատվական հանդիպումներ կամ անհատական խորհրդատվություններ՝ ուղղված աշխատաշուկայում ուսանողների և շրջանավարտների մրցունակության բարձրացմանը:

Ուսանողների կրթական կարիքների վերհանմանը զուգահեռ նախատեսվում է ընդլայնել և զարգացնել նրանց առաջարկվող լրացուցիչ պարապմունքների և խորհրդատվության տեսականին: Մասնավորապես, ուսանողների կրթական կարիքների վերհանմանն ուղղված հարցումների և ուսումնասիրությունների պիլոտային ծրագրի արդյունքների հիման վրա նախատեսվում է բարձրացնել ուսանողներին առաջարկվող լրացուցիչ պարապմունքների և խորհրդատվության արդյունավետությունը (հարստացնել դրանց բովանդակությունը, բազմազանեցնել առաջարկվող հնարավորությունների մասին տեղեկատվության տարածման խողովակները), ինչպես նաև հնարավորության դեպքում ավելացնել նոր առաջարկություններ:

ԶԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈԻՀ-ում սահմանված է ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց:	
Հիմքեր	Կանոնակարգ <u>ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ուսանողական նպաստների հատկացման մասին – Հավելված 9</u>
Պատասխանել հետևյալ հարցին:	%
Ուսանողների ո՞ր տոկոսն է տեղեկացված իրեն վերաբերող վարչական ծառայությունների մասին:	98 %
Ուսանողների ո՞ր տոկոսն է օգտվում այդ ծառայություններից:	95%
Ուսանողների ո՞ր տոկոսն է բավարարված այդ ծառայություններից:	82%

ԳԿՄԿ-ում ուսանողների կողմից վարչական աշխատակազմին դիմելու պրակտիկան գործում է, ձևավորված են որոշակի մեխանիզմներ, իսկ առանձին հարցերի պարագայում՝ սահմանված են նաև համապատասխան ընթացակարգեր, այդ թվում՝ ժամանակացույցեր: Ուսանողներն իրենց հուզող տարբեր հարցերով ու խնդիրներով բանավոր և գրավոր կարգով դիմում են ուսումնական մասին և դեկանին:

Բազմաթիվ խնդիրներ (վարձերի գեղչեր, տեղափոխություններ, վերականգնում, այլ կրթական հարցեր) լուծվում են համապատասխան կանոնակարգերի համաձայն: Մի շարք խնդիրների լուծման համար սահմանված են ուսանողների կողմից դիմումներ ներկայացնելու հստակ ընթացակարգեր:

ԳԿՄԿ-ում պարբերաբար կազմակերպվում են ուսանողների հանդիպումներ վարչական աշխատակազմի (տնօրեն, փոխտնօրեն, ուսումնական մասի պետ, դեկան և այլն) ներկայացուցիչների հետ: Այդ հանդիպումների ընթացքում ուսանողները բարձրաձայնում են իրենց հուզող խնդիրները և ստանում պատասխաններ:

Ուսանողները վարչական աշխատակազմին իրենց հուզող հարցերով հաճախ դիմում են նաև միջնորդավորված՝ Ուսանողական խորհրդի միջոցով, իսկ վերջիններիս

ներկայացուցիչները համապատասխան հարցադրումներով հանդես են գալիս Կենտրոնի կառավարման մարմինների կամ գիտական խորհրդի նիստերում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

Հիմքեր	Շրջանավարտների հետ կապի և զբաղվածության բաժնի կանոնակարգ - <u>Հավելված 23</u> Ուսանողական խորհրդի կանոնադրություն – <u>Հավելված -30</u>
--------	--

Պատասխանել հետևյալ հարցերին:	%
Ուսանողների ո՞ր տոկոսն է տեղեկացված կարիերային նպաստող ծառայությունների մասին:	100 %
Ուսանողների ո՞ր տոկոսն է օգտվում այդ ծառայություններից:	50-60 %
Ուսանողների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ ծառայություններից:	50 %

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ի ուսանողները պարբերաբար հնարավորություն են ունենում մասնակցել տարբեր սեմինարների, քննարկումների, վերապատրաստման դասընթացների, գիտաժողովների, որն իր հերթին նպաստում է ոչ ֆորմալ կրթության լիարժեք կազմակերպմանը: Տարբեր պոտենցիալ գործատուների,զբաղվածության կենտրոնների, այլ ԲՈՒՀ-երի կարիերայի կենտրոնների, տեղական և արտասահմանյան կազմակերպությունների հետ համագործակցելով՝ շրջանավարտների միավորման կենտրոնը հնարավորություն է ընձեռնում նրանց աշխատանքի տեղավորման գործընթացում՝ վճարովի կամ կամավոր հիմունքներով:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Գ. ՄՈՒՀ-ը աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

Հիմքեր	<u>ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ՌԾ. 2014-2018թթ. – Հավելված 1, ամբիոնների նիստերի արձանագրություններ Թեզերի թեմաներ</u>
--------	--

Ամբիոնի համար գերակա գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված ուսանողների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի

	2010	2011	2012	2013	2014
Ուսումնառողներ	10	18	18	7	8
Մագիստրոս			9	7	7
Հետազոտող			4	1	1

Ուսումնառողների մասնակցությամբ իրականացվող ծրագրերի ցանկը և դրանցում ներգրավված ուսանողների թիվն ըստ տարիների – բերվում է «**Բնապահպանություն և բնօգտագործում**» մագիստրոսական մասնագիտական ծրագրի օրինակը

	Գիտահետազոտական ծրագիր	2010	2011	2012	2013	2014
1	Շրջակա միջավայրի երկրաբնապահպանական և էկոլոգիական անվտանգության հիմնահարցեր (բազային ծրագիր)					2
2	Գյումրի քաղաքի էկոլոգաերկրաքիմիական առանձնահատկությունների բացահայտում (թեմատիկ/պայմանագրային ծրագիր)					1

Ուսումնառողների հեղինակությամբ և/կամ համահեղինակությամբ տպագրված աշխատանքների թիվը՝ ըստ «**Բնապահպանություն և բնօգտագործում**» մագիստրոսական մասնագիտական ծրագրի օրինակի՝ 9:

	Տպագրված աշխատանք	2010	2011	2012	2013	2014

1	Հովհաննիսյան Հ.Ա., Ներսիսյան Գ. Ս., Խաչոյան Հ. Գ. , Երևան քաղաքի օդակաձև այգու կանաչ տնկարկների վիճակի գնահատում: Ագրոգիտություն, Երևան, 2012, № 3-4, էջ 251-254			1		
2	Хачоян А. Г. , Оганесян А. А., Нерсисян Г. С., Бужделев В. В. Биогеохимическое исследование Кольцевого парка г.Еревана// Матер. межд.школы-семинара мол.ученых “Научные чтения памяти Н.Ф.Реймерса и Ф.Р.Штильмарка: Антропогенная трансформация природной среды”, 2012, Пермь, Россия, с.198-202			1		
3	Оганесян А.А., Чобанян А.А. , Хачатрян Л.Р. Экотоксикологическая оценка овощей, выращиваемых на территории города Ванadzor. Известия Национального Аграрного университета Армении, Ереван, 2013, № 4, с. 29-33				1	
4	Muradyan V., Asmaryan Sh., Hovhannisyan T. [2013] Using remote sensing technologies for the research of the transformation of ecosystems (Case study Lake Sevan basin).- Earth Science and Engineering international journal, 3, N6, 363-370. http://www.davidpublishing.com/show.html?14117				1	
5	Ասմարյան Շ., Սուրադյան Վ., Բուժդելև Վ. , Երևան քաղաքի կանաչ գոտիների էկոլոգիական իրավիճակի գնահատում հեռագնման տեխնոլոգիաների կիրառմամբ (Օդակաձև այգու և Արոլյանի անվան պուրակի օրինակով), Ագրոգիտություն, N 11-12, 2012, էջ 752-755			1		
6	<i>Saghatelyan A.K., Sahakyan L.V., Belyaeva O.A., Tepanosyan G.H., Maghakyany N.R., Kafyan M.H.</i> Dust and stream of heavy metals in the atmosphere of the city of Yerevan, National Academy of Sciences of RA, <i>Electronic Journal of Natural sciences, Ecology</i> 1(20), 2013, p. 38-44				1	
7	<i>Магакян Н.Р., Кафян М.О., Тепаносян Г.О., Беляева О.А.</i> Эколого-геохимическая и санитарно-гигиеническая оценка почв территорий дошкольных учебных учреждений г. Еревана, Международная молодежная научная конференция “Проблемы окружающей среды и выделение групп риска среди населения”, Сборник статей, Ереван 2013, ст. 118-126 (in Russian)				1	

8	Саакян Л.В., Беляева О.А., Тепаносян Г.О., Кафян М.О. Оценка уровня загрязнения недифференцированной пылью воздушного бассейна города Еревана и выявление групп риска среди населения, Международная молодежная научная конференция “Проблемы окружающей среды и выделение групп риска среди населения”, Сборник статей, Ереван 2013, ст. 152-161(in Russian)				1	
9	Саакян Л.В., Беляева О.А., Тепаносян Г.О. Магакян, Н.Р. , Кафян М.О. Оценка уровня загрязнения недифференцированной пылью воздушного бассейна города Ереван, ГИУА (Политехник) Вестник, том 16 N2, Ереван 2013, ст. 58-67 (in Russian).				1	

Վերլուծել հաստատության գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածության արդյունավետությունը, կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից:

Ինչպես նշվել է, որ ԳԱԱ ԳԿՄԿ տրամադրած կրթության առավելություններից ամենակարևորն այն է, որ ԳԿՄԿ-ում առկա է կրթություն-գիտություն սերտ կապը, ԳԿՄԿ մագիստրոսները անմիջականորեն մասնակից են դառնում ԳԱԱ համակարգի գիտահետազոտական աշխատանքներին, ներգրավվում գիտահետազոտական կազմակերպություններում իրականացվող թեմաներում: Որպես օրինակ ներկայացնենք «Բնապահպանություն և բնօգտագործում» մասնագիտության ուսանողների ներգրավվածությունը հաստատության՝ «ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնի» գիտահետազոտական աշխատանքներում:

Ամբիոնի գիտահետազոտական աշխատանքներում ուսանողները ներգրավված են 1-ին կուրսից սկսած: Գրել և պաշտպանել են կուրսային աշխատանքներ, որոնք մագիստրոսական թեզերի անմիջական մաս են կազմել: Աշխատանքը մագիստրոսական թեզերի շրջանակում ընդգրկում է հետազոտական էքսպերիմենտալ աշխատանք, գիտական գրականության վերլուծություն, ստացված հետազոտության արդյունքների վերլուծություն, առաջադրանքներ և հանձնարարականներ՝ թեզերի թեմաների ուղղությամբ:

2010 թ.-ից մինչև այժմ «Բնապահպանություն և բնօգտագործում» մասնագիտության ամբիոնի մագիստրատուրայի շրջանավարտների թիվը կազմել է 24:

2010 թ.-ից սկսած մինչև այժմ մագիստրատուրայի 5 շրջանավարտ աշխատել են ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնի հետազոտական բաժիններում, իսկ 3 շրջանավարտ սովորում են ասպիրանտուրայում:

ՀՀ ԳԱԱ գիտական հայտարարությունների կարևորագույն գործառնություններից է Գիտակրթական միջազգային կենտրոնի ուսանողական համակազմի գիտահետազոտական աշխատանքներում լիովին ներգրավվածությունն ապահովելը: Այն ամրագրված է Գիտակրթական միջազգային կենտրոնի զարգացման ռազմավարական ծրագրում՝ ընդլայնել ուսանողների ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում, ապահովել գիտական ծրագրերում ասպիրանտների ու ուսանողների մասնակցությունը, խրախուսել ուսանողների գիտահետազոտական աշխատանքների կատարումը, նրանց ներգրավվածությունը պետական բյուջեից ֆինանսավորվող գիտահետազոտական ծրագրերում:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ մագիստրոսական և հետբուհական կրթական ծրագրերը նախատեսում են ուսանողների ներգրավվածության ապահովում տարբեր գիտահետազոտական աշխատանքներում: Գիտահետազոտական աշխատանքների կատարումը մագիստրատուրայի և ասպիրանտուրայի համար պարտադիր կրթական բաղադրիչ է:

Լինելով ՀՀ ԳԱԱ կառույցի՝ Գիտակրթական միջազգային կենտրոնի ուսանողներ, այս տեսանկյունից գտնվում են գերշահեկան վիճակում, որովհետև Կենտրոնի մասնագիտական ամբիոնները տեղակայված են ՀՀ ԳԱԱ գիտական ինստիտուտներում և գիտական հաստատություններում: Գիտակրթական միջազգային կենտրոնի ուսանողները՝ կապված մասնագիտական առանձնահատկություններից և ամբիոնների տեղաբաշխվածությունից իրենց ուսումնառության ողջ ընթացքը անց են կացնում տվյալ գիտական և մասնագիտական ուղղվածության հաստատության գիտամշակութային մթնոլորտում, շփվում, հաղորդակցվում, մասնակցում կամ անմիջական կատարողը դառնում գիտահետազոտական աշխատանքների, կիրառում առկա նյութատեխնիկական, լաբարատոր հնարավորությունները, իրագեկվում մասնագիտական բնագավառի նորարարություններին, պարբերաբար հետազոտական աշխատանքներում ներգրավվում և գիտական հետազոտությունների տեսքով տպագրվում ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ արտերկրի հեղինակավոր գիտական պարբերականներում:

Քանի որ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ամբիոնները տեղակայված են ԳԱԱ համակարգի գիտահետազոտական ինստիտուտներում և կենտրոններում, ուստի հետազոտական աշխատանքները տարվում են համապատասխան ինստիտուտներում, ուսանողները ներգրավված են տվյալ գիտական հաստատության գիտահետազոտական ծրագրերում և անմիջականորեն մասնակցում են գիտահետազոտական աշխատանքի ողջ գործընթացին:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:	
Հիմքեր	<u>Ուսանողական խորհրդի կանոնադրությունը – չավելված 30</u>
Պատասխանել հետևյալ հարցերին: Դեռևս նմանօրինակ հարցումներ ԳԿՄԿ-ում չեն իրականացվել: Նախատեսվում է առաջիկայում կազմել հարցաշար և կազմակերպել հարցումներ մագիստրոսների շրջանում:	%
Ուսանողների որ տոկոսն է տեղեկացված համապատասխան ծառայությունների վերաբերյալ: Ուսանողների ^ո ր տոկոսն է օգտվում համապատասխան ծառայությունից: Ուսումնառողների ^ո ր տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացից:	
Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող ուսումնառողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմնի աշխատանքների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: Կենտրոնի ուսանողական խորհուրդն ապահովում է ուսանողական ինքնակառավարման գործընթացները հաստատության սովորողների շրջանում, արտահայտում և պաշտպանում է նրանց շահերը, իսկ խորհրդի հարաբերությունները կենտրոնի կառավարման մարմինների, ստորաբաժանումների, այլ կազմակերպությունների և անհատ անձանց հետ իրականացվում է կենտրոնի կանոնադրության, ուսխորհրդի կանոնակարգի կամ պայմանագրերի հիման վրա:	
ՉԱՓՈՐՈՇԻՉ Ը. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:	
Հիմքեր	ՄՈՒՀ-ում գործող ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառայությունների մատուցման գնահատման և որակի ապահովման քաղաքականությունը, ընթացակարգերը և մեխանիզմները

	<p>Հաստատության գործունեության որակի ապահովման գործընթացներում ուսումնառողների դերը սահմանող կանոնակարգերը Ուսումնական գործընթացների վերաբերյալ ուսումնառողների արձագանքի օրինակները - «Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցում» (<u>տ՛ես Հավելված 3 - Գիտակրթական միջազգային կենտրոնում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կանոնակարգ, ՈԱ ձեռնարկ, էջ 103</u>)</p>																																																															
	<p>Ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ օժանդակ ծառայությունների գնահատման և որակի ապահովման համար իրականացվում է «Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցում» (<u>տ՛ես Հավելված 3 - Գիտակրթական միջազգային կենտրոնում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կանոնակարգ, ՈԱ ձեռնարկ, էջ 103</u>):</p> <p>Հարցման մեջ ներառված բովանդակային գաղափարները նպատակ են հետապնդում բացահայտել, վերհանել և իմաստավորել ուսանողների դիրքորոշումներն ու կարծիքները կրթական, խորհրդատվական և այլ օժանդակ ծառայությունների մատուցման վերաբերյալ:</p> <p>Շրջանավարտների հարցումը իրականացվում է համաձայն «Գիտակրթական միջազգային կենտրոնում ստացված կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցման կանոնակարգի» (<u>Հավելված 3- ՈԱ ձեռնարկ, տ՛ես համապատասխան կանոնակարգեր, էջ 110</u>):</p> <p>Ուսանողների և շրջանավարտների հարցման արդյունքները և վերհանած հիմնախնդիրները քննարկվում են Գիտակրթական միջազգային կենտրոնում:</p>																																																															
	<table border="1"> <thead> <tr> <th data-bbox="487 940 938 982"></th> <th data-bbox="938 940 1068 982">Զբաղվածություն/ուսման շարունակություն</th> <th data-bbox="1068 940 1182 982">2010</th> <th data-bbox="1182 940 1295 982">2011</th> <th data-bbox="1295 940 1409 982">2012</th> <th data-bbox="1409 940 1526 982">2013</th> <th data-bbox="1526 940 1620 982">2014</th> </tr> </thead> <tbody> <tr> <td data-bbox="487 982 938 1024">1</td> <td data-bbox="938 982 1068 1024">Ավարտելուց անմիջապես հետո</td> <td data-bbox="1068 982 1182 1024">51.4 %</td> <td data-bbox="1182 982 1295 1024">26.5%</td> <td data-bbox="1295 982 1409 1024">39.4%</td> <td data-bbox="1409 982 1526 1024">49.7%</td> <td data-bbox="1526 982 1620 1024">32.8</td> </tr> <tr> <td data-bbox="487 1024 938 1066">2</td> <td data-bbox="938 1024 1068 1066">Նախքան ավարտելը</td> <td data-bbox="1068 1024 1182 1066"></td> <td data-bbox="1182 1024 1295 1066"></td> <td data-bbox="1295 1024 1409 1066"></td> <td data-bbox="1409 1024 1526 1066"></td> <td data-bbox="1526 1024 1620 1066"></td> </tr> <tr> <td data-bbox="487 1066 938 1108">3</td> <td data-bbox="938 1066 1068 1108">Մասնագիտությամբ</td> <td data-bbox="1068 1066 1182 1108">37.9%</td> <td data-bbox="1182 1066 1295 1108">12.1%</td> <td data-bbox="1295 1066 1409 1108">22.7%</td> <td data-bbox="1409 1066 1526 1108">24.6%</td> <td data-bbox="1526 1066 1620 1108">17.9%</td> </tr> <tr> <td data-bbox="487 1108 938 1150">4</td> <td data-bbox="938 1108 1068 1150">Ոչ-մասնագիտությամբ</td> <td data-bbox="1068 1108 1182 1150">13.5%</td> <td data-bbox="1182 1108 1295 1150">14.4%</td> <td data-bbox="1295 1108 1409 1150">16.7%</td> <td data-bbox="1409 1108 1526 1150">25.1%</td> <td data-bbox="1526 1108 1620 1150">14.9%</td> </tr> <tr> <td data-bbox="487 1150 938 1234">5</td> <td data-bbox="938 1150 1068 1234">Ավարտելուց հետո ուսումը շարունակող ուսանողների տոկոսը</td> <td data-bbox="1068 1150 1182 1234"></td> <td data-bbox="1182 1150 1295 1234"></td> <td data-bbox="1295 1150 1409 1234"></td> <td data-bbox="1409 1150 1526 1234"></td> <td data-bbox="1526 1150 1620 1234"></td> </tr> <tr> <td data-bbox="487 1234 938 1318">6</td> <td data-bbox="938 1234 1068 1318">Ավարտելուց 2-5 տարի հետո զբաղվածության մակարդակը</td> <td data-bbox="1068 1234 1182 1318">54.3%</td> <td data-bbox="1182 1234 1295 1318">35.8%</td> <td data-bbox="1295 1234 1409 1318">38.8%</td> <td data-bbox="1409 1234 1526 1318"></td> <td data-bbox="1526 1234 1620 1318"></td> </tr> <tr> <td data-bbox="487 1318 938 1360">7</td> <td data-bbox="938 1318 1068 1360">Գործազուրկ ուսանողների տոկոսը</td> <td data-bbox="1068 1318 1182 1360">48.6%</td> <td data-bbox="1182 1318 1295 1360">73.5%</td> <td data-bbox="1295 1318 1409 1360">60.6%</td> <td data-bbox="1409 1318 1526 1360">50.3%</td> <td data-bbox="1526 1318 1620 1360">67.2%</td> </tr> <tr> <td data-bbox="487 1360 938 1432">8</td> <td data-bbox="938 1360 1068 1432">Ավարտելուց 5 տարի հետո զբաղվածության մակարդակը</td> <td data-bbox="1068 1360 1182 1432">55.7%</td> <td data-bbox="1182 1360 1295 1432"></td> <td data-bbox="1295 1360 1409 1432"></td> <td data-bbox="1409 1360 1526 1432"></td> <td data-bbox="1526 1360 1620 1432"></td> </tr> </tbody> </table>		Զբաղվածություն/ուսման շարունակություն	2010	2011	2012	2013	2014	1	Ավարտելուց անմիջապես հետո	51.4 %	26.5%	39.4%	49.7%	32.8	2	Նախքան ավարտելը						3	Մասնագիտությամբ	37.9%	12.1%	22.7%	24.6%	17.9%	4	Ոչ-մասնագիտությամբ	13.5%	14.4%	16.7%	25.1%	14.9%	5	Ավարտելուց հետո ուսումը շարունակող ուսանողների տոկոսը						6	Ավարտելուց 2-5 տարի հետո զբաղվածության մակարդակը	54.3%	35.8%	38.8%			7	Գործազուրկ ուսանողների տոկոսը	48.6%	73.5%	60.6%	50.3%	67.2%	8	Ավարտելուց 5 տարի հետո զբաղվածության մակարդակը	55.7%				
	Զբաղվածություն/ուսման շարունակություն	2010	2011	2012	2013	2014																																																										
1	Ավարտելուց անմիջապես հետո	51.4 %	26.5%	39.4%	49.7%	32.8																																																										
2	Նախքան ավարտելը																																																															
3	Մասնագիտությամբ	37.9%	12.1%	22.7%	24.6%	17.9%																																																										
4	Ոչ-մասնագիտությամբ	13.5%	14.4%	16.7%	25.1%	14.9%																																																										
5	Ավարտելուց հետո ուսումը շարունակող ուսանողների տոկոսը																																																															
6	Ավարտելուց 2-5 տարի հետո զբաղվածության մակարդակը	54.3%	35.8%	38.8%																																																												
7	Գործազուրկ ուսանողների տոկոսը	48.6%	73.5%	60.6%	50.3%	67.2%																																																										
8	Ավարտելուց 5 տարի հետո զբաղվածության մակարդակը	55.7%																																																														

ՀԱՓԱՆԻՇ 4-ի SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ul style="list-style-type: none"> Գիտակրթական միջազգային կենտրոնի մասնագիտական ամբիոնները տեղակայված են ՀՀ ԳԱԱ գիտական հաստատություններում և ինստիտուտներում, ինչը ապահովում է կրթություն-գիտություն կամրջականությունն ու կապը: Գիտակրթական միջազգային կենտրոնում շրջանավարտների հետ կապերի և զբաղվածության բաժնի առկայություն: Ուսանողների հավաքագրման և ընդունելության 	<ul style="list-style-type: none"> Որոշ ուսանողների ուսուցման ցածր մոտիվացիա: ԿԾ-ի որակի ապահովման գործընթացներում Ուսանողական խորհրդի պասիվ մասնակցություն: Ուսխորհրդի կազմի հաճախակի փոփոխություն՝ կապված մագիստրոսական կրթության 2-ամյա ծրագրերից:

<p>իրականացման քաղաքականությունն և հստակ մեխանիզմներ:</p> <ul style="list-style-type: none"> • Գիտակրթական միջազգային կենտրոնը ապահովում է ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների որակը գնահատող մեխանիզմներ • Ուսանողների իրավունքների պաշտպանության պատասխանատու մարմնի առկայություն՝ ի դեմս ՈւԽ-ի: • Գիտահետազոտական աշխատանքներում մագիստրոսների մասնակցության բարձր մակարդակ: • Ուսանողների շրջանում անցկացվող պարբերական հարցումներ, որոնց շնորհիվ ամրապնդվում է հետադարձ կապը: • Որակի ապահովման հարցերում ուսանողների իրազեկության բավարար մակարդակ 	
Հնարավորություններ	Վտանգներ
<ul style="list-style-type: none"> • ՀՀ-ում միջազգային նախագծերի առկայություն՝ միտված ուսանողության շարժունության խթանմանը: • Միջազգային կազմակերպությունների ֆինանսական օժանդակությամբ կենտրոնի ուսումնալաբորատոր տարածքների արմատական վերազինում գերժամանակակից տեխնիկական միջոցներով: 	<ul style="list-style-type: none"> • ԳԿՄԿ-շրջանավարտ թույլ կապ: • Աշխատաշուկայի ներկայիս անկայուն վիճակ, ինչը բացասական է անրադառնում իրականացվող որոշ մասնագիտությունների պահանջարկվածությանը և ընդունելության հոսքերի վրա:

Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները: Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման համար նախատեսվում է իրականացնել հետևյալ քայլերը.

- *Ուսման նկատմամբ ուսանողների մոտիվացիայի և շահագրգռվածության մակադակի բարձրացում, խրախուսման մեխանիզմների կիրառում, այդ ուղղությամբ ուսանողական խորհրդի ակտիվ մասնակցության ապահովում:*
- *ԳԿՄԿ – շրջանավարտ կապի հզորացում, ԳԿՄԿ-ի գործունեության ընթացքում շրջանավարտների հնարավորինս ներգրավում, հարաբերությունների զարգացում և շարունակականության ապահովում:*

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: *ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունը ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:*

Կենտրոնի պրոֆեսորադասախոսական համակազմի մասնագիտական ներուժի շարունակական զարգացում, հետազոտական, ստեղծագործական նախաձեռնության աճին նպաստում, պրոֆեսորադասախոսական պաշտոնների տեղակալման չափանիշների և

գործընթացների կատարելագործում, դասախոսների ինքնակրթության և գիտամանկավարժական շարժունության խրախուսում, պրոֆեսորադասախոսական համակազմի կադրային ներուժի անհատական և մասնագիտական ինքնահաստատման համար բարենպաստ կորպորատիվ միջավայրի ստեղծում: Կենտրոնի կադրային ներուժի աշխատակիցների սոցիալական բավարարվածության մակարդակի բարձրացում: Մոցիալական օգնության նպատակային ֆոնդի ստեղծում /Տե՛ս ՌԾ, էջ 10 – Հավելված 1/:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:	
Հիմքեր	Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի աշխատանքի ընդունման և հեռացման քաղաքականությունը և ընթացակարգերը – Հավելված 15 – Կանոնակարգ պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման /նոր խմբագրությամբ/ Հիմնական և համատեղությամբ դասավանդողների կազմը՝ քստ որակավորումների—Հավելված 31 Դասավանդողների խրախուսման քաղաքականությունը և ընթացակարգերը մշակման փուլում են:

ԳԿՄԿ առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների իրականացման համար Կենտրոնը ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և օժանդակ անձնակազմով:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ հիմնական պրոֆեսորադասախոսական կազմը ներառում է 253 մասնագետներ, որոնցից 22-ը՝ ակադեմիկոսներ, 55-ը՝ դոկտոր- պրոֆեսոր, 176 թեկնածուներ, դոցենտներ:

Գիտակրթական միջազգային կենտրոնում գործում են մի շարք կանոնակարգեր և ընթացակարգեր, որոնք կոչված են նպաստելու անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրությանը և պահպանմանը: Այս գործընթացում առաջնահերթ նշանակություն ունի պրոֆեսորադասախոսական կազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակայման կարգը:

«Պրոֆեսորադասախոսական համակազմի ձևավորման» նոր կանոնակարգը սահմանում է դասախոսական կազմի մրցութային ընտրության, պաշտոնների տեղակայման կարգն ու պայմանները, տարբեր տարակարգերի (պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ, դասախոս) որակական և քանակական բնութագրերը, ինչպես նաև տրամադրում է դասախոսների հետ կնքվող պայմանագրերի ճկուն համակարգը: Առաջնորդվելով սույն կարգի հիմնադրույթներով՝ դասախոսական կազմի ընտրության և պաշտոնների տեղակայման մրցույթների կազմակերպման ընդհանուր վերահսկողության նպատակով նախատեսվում է ստեղծել որակավորման մանդատային հանձնաժողով, որը սահմանում է դասախոսների հետ կնքվող աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը՝ հիմք ընդունելով տվյալ պաշտոնի համար սահմանված պահանջներին հավակնորդի համապատասխանության գնահատման արդյունքները: Մրցութային ընտրության գերակա նպատակը Կենտրոնի հիմնական դասախոսական կազմի ձևավորումն է: Լրացուցիչ դասախոսական կազմի (Ժամավճարով, 0,25 կամ 0,5 դրույքաչափով դասավանդողների դեպքում) մրցութային ընտրություն չի անցկացվում. նրանք հրամանագրվում են ԳԿՄԿ տնօրենի կողմից մինչև մեկ տարի ժամկետով:

Պաշտոնների տեղակայման այս չափանիշները հանդիսանում են դասախոսների մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականության հիմքը:

Կենտրոնում դասախոսների մասնագիտական և մանկավարժական առաջընթացի ապահովման միասնական քաղաքականության բաղադրիչներն են՝ դասախոսական կազմի

մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման, դասախոսների որակավորման բարձրացման և նրանց աշխատանքի գնահատման ու խրախուսման ընթացակարգերը (Հավելված 15- Կանոնակարգ պրոֆեսորադասախոսական անձնակազմի ձևավորման /նոր խմբագրությամբ/):

ԳԿՄԿ-ում իրականացվող ուսանողական հարցումների արդյունքները նույնպես էական դերակատարություն ունեն դասախոսների մասնագիտական առաջընթացի և խրախուսման գործում(Հավելված 3, էջ 94-122):

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

Հիմքեր	<u>ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերապատրաստումների և մասնագիտական որակավորումների բարձրացման կանոնակարգ - Հավելված 15</u>
--------	---

Կրթական ծրագրերը համապատասխան որակավորում ունեցող դասախոսական կազմով ապահովում են Գիտակրթական միջազգային կենտրոնի ամբիոնները: Յուրաքանչյուր ամբիոն, քաջատեղյակ լինելով իր ռեսուրսներին, կարողանում է ապահովել ուսումնական մոդուլները համապատասխան հիմնական դասախոսական կազմով, ինչպես նաև կազմակերպել նրանց կարճաժամկետ և երկարաժամկետ փոխարինումը: Կրթական ծրագրերը երիտասարդ դասախոսներով համալրելու ԳԿՄԿ ռազմավարություններից մեկն է ասպիրանտների նպատակային պատրաստումը: Գիտակրթական միջազգային կենտրոնում դասախոսական կազմով ապահովվածության կայունությունը երաշխավորվում է մի շարք ընթացակարգերով:

Գիտակրթական միջազգային կենտրոնի կրթական ծրագրերը համապատասխան դասախոսական կազմով ապահովելու համար նախատեսված են նաև աշխատանքային պայմանագրերի տարբեր ձևեր՝ հիմնական, ներքին և արտաքին համատեղություն: Գործում է նաև ժամավճարային հիմունքով և հրավիրյալ դասախոսների համակարգը, ինչը թույլ է տալիս երաշխավորելու կրթական ծրագրերի ապահովվածությունը նեղ մասնագիտացում և գործնական հմտություններ ունեցող մասնագետներով:

Ուսումնական գործընթացին արդյունավետ կերպով օժանդակելու համար Գիտակրթական միջազգային կենտրոնում առկա է նաև ուսումնասօժանդակ կազմի հաստիքների ձևավորման նորմատիվային բազա:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

Հիմքեր	Դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման քաղաքականությունը և ընթացակարգերը -(տ՝ես Հավելված 3 - Գիտակրթական միջազգային կենտրոնում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կանոնակարգ, ՈԱ ձեռնարկ, էջ 103) <u>Հավելված 15- Կանոնակարգ պրոֆեսորադասախոսական անձնակազմի ձևավորման /նոր խմբագրությամբ/):</u> <u>Հավելված 18 – Ուսանողական հարցումների վերլուծություններ</u>
--------	---

Գիտակրթական միջազգային կենտրոնում գործում են դասախոսական կազմի գնահատման մեխանիզմներ, որոնցից կարևորվում են դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումները և դասալսումները: Հիմք ընդունելով «Կրթության մասին» ՀՀ օրենքի (28-րդ հոդված, 4-րդ կետ), ինչպես նաև Կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված ուսանողական հարցումների վերաբերյալ օրինակելի կանոնակարգի դրույթները՝ Գիտակրթական միջազգային կենտրոնը 2013 թ.-ին ներդրեց

դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների համակարգը՝ որպես ուսանողների կողմից դասախոսական կազմի գիտամանկավարժական գործունեության և բարոյահոգեբանական հատկանիշների գնահատման մեխանիզմ: Այդ մեխանիզմի կիրառումը նպաստեց Գիտակրթական միջազգային կենտրոնի դասախոսական հանրության շրջանում նոր դիրքորոշումների ձևավորմանը, ինչպես նաև դասավանդման գործընթացի բարելավմանը:

Ուսանողների կողմից դասախոսական կազմի գնահատման մեխանիզմի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ հարցման մեթոդաբանությունը, ընթացակարգը և չափանիշները (հարցաշարը) պարբերաբար վերամշակվում և կատարելագործվում են:

2013-2014 ուստարում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումներին մասնակցել է Կենտրոնի մագիստրոսի կրթական ծրագրերում ընդգրկված ուսանողական համակազմի 90%-ը: Գնահատվել է դասախոսների դասավանդման որակը: Ամփոփելով ուսանողական հարցումների անցկացման ԳԿՄԿ փորձը՝ կարելի է արձանագրել, որ հարցումների արդյունքների վերլուծությունը և բարելավող միջոցառումների իրականացումը կնպաստեն դասախոսների աշխատանքի որակի և արդյունավետության բարձրացմանը:

Հարցման միջոցով ստացված անհատական տվյալները պետք է արդյունավետ կերպով կիրառվեն դասախոսների մասնագիտական և մանկավարժական հմտությունների զարգացման գործընթացում: Այդ արդյունքների վերլուծությունը պետք է հիմք հանդիսանա նաև դասախոսների կատարելագործման ծրագրի համար, ինչը հետևողականորեն իրականացվում է:

Նախատեսվում է դասալսումների իրականացում ամբիոնի վարիչների և պրոֆեսորների կողմից: Մակայն դասալսումների իրականացման, արդյունքների վերլուծության և դրանց կիրառման համար դեռևս մշակված չեն հստակ պահանջներ և ընթացակարգեր:

Դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համակարգի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Գիտակրթական միջազգային կենտրոնը նախատեսել է մի շարք լրացուցիչ միջոցառումներ, որոնք ուսանողական հարցումներին և դասալսումներին զուգահեռ կապահովեն դասախոսների համակողմանի գնահատումը, ինչպես նաև դասավանդման որակի շարունակական բարելավումը: Դրանցից են, մասնավորապես, անմիջական ղեկավարի և գործընկեր դասախոսների կողմից պարբերաբար գնահատումը, ինչպես նաև ինքնագնահատման գործընթացի ներմուծումը, որոնք կստեղծեն աշխատանքի նկատմամբ նոր մոտեցում և կապահովեն դասավանդման գործընթացի առավել թափանցիկություն:

ԶԱՓՈՐՈՇԻՉ ղ. Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքներին համապատասխան՝ ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:	
Հիմքեր	<p>Հավելված 19 - ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերապատրաստումների և մասնագիտական որակավորումների բարձրացման կանոնակարգ</p> <p>Հավելված 25 – Վերապատրաստումների ժամանակացույց և թեմաներ</p> <p>Հավելված 1-Գիտակրթական միջազգային կենտրոնի Ռազմավարական ծրագիր</p>

Բարձրորակ դասախոսական կազմի ներգրավումը և նրանց շարունակական կատարելագործման հնարավորությունների տրամադրումը Գիտակրթական միջազգային կենտրոնը որակյալ կադրային ներուժի ձևավորման կարևորագույն սկզբունքն է ([Հավելված 1-Գիտակրթական միջազգային կենտրոնի Ռազմավարական ծրագրեր, ռազմավարական](#)

նպատակ մաս 2, էջ 10): Այդ նպատակով ԳԿՄԿ-ում ստեղծվել և գործում են դասախոսների որակավորման բարձրացման տարբեր ծրագրեր:

Դասախոսների որակավորման բարձրացման ծրագրերն առավելապես կողմնորոշվեցին դեպի Բոլոնիայի գործընթացի համատեքստում տեղի ունեցող բարձրագույն կրթության բարեփոխումները: Այդ դիտանկյունից ելնելով՝ վերամշակվեցին դասախոսների կատարելագործման ծրագրերը, դասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի շրջանակներն ընդլայնվում են՝ ապահովելով դասախոսական կազմի կատարելագործումը չորս հիմնական ուղղություններով՝ որակավորման բարձրացում մասնագիտության շրջանակներում, մանկավարժական հմտությունների կատարելագործում, ուսումնական գործընթացի իրականացում կրեդիտային համակարգով և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը դասապրոցեսում:

ԶՍՓՈՐՈՇԻՉ Է. ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:	
Հիմքեր	Հիմնական և համատեղությամբ պրոֆեսորադասախոսական կազմի ցանկերը տե՛ս Հավելված 31

Դասախոսների որակավորման բարձրացման գործընթացում, Գիտակրթական միջազգային կենտրոնում դասախոսական կազմը հնարավորություն ունի ձեռք բերելու անհատական հետաքրքրություններով ու կրթական ծրագրերի պահանջներով պայմանավորված հմտություններ:

Կենտրոնում իրականացվում է դասախոսական կազմի ձևավորման, համալրման և երիտասարդացման նպատակային ծրագիր՝ հաշվի առնելով մասնագիտությունների ցանկի փոփոխությունները: Մասնավորապես առկա են ասպիրանտների մանկավարժական պրակտիկայի և հետագա աշխատանքի նպաստավոր պայմաններ:

Ասպիրանտուրա ընդունվելուց հետո սահմանված ժամկետում Գիտական Խորհրդի որոշմամբ հաստատվում են ասպիրանտների ատենախոսությունների թեմաները և գիտական ղեկավարները՝ Ակադեմիական համակարգի գիտահետազոտական կազմակերպությունների առաջատար գիտամանկավարժական կադրերից: Ամբիոններում ապահովվում են անհրաժեշտ պայմաններ և օգնություն ինչպես մասնագիտական խորհրդատվության, այնպես էլ նյութատեխնիկական միջոցների տրամադրման առումով: Ցուցաբերվում է աջակցություն գիտաժողովներում աշխատանքի արդյունքների ներկայացման և գիտական պարբերականներում հոդվածների տպագրության առումներով: Եվ պատահական չէ, որ Ցունեսկոյի տվյալների համաձայն հայաստանյան գիտնականների տպագրած հոդվածները քանակով և որակով զբաղեցնում են առաջին հորիզոնականը:

ԶՍՓՈՐՈՇԻՉ Գ. ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:	
Հիմքեր	Պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը մշակման փուլում են: Սկանակ դասավանդողների խրախուսման և մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը մշակման փուլում են: Սկանակ դասավանդողների մենթորության քաղաքականությունը և ընթացակարգերը մշակման փուլում են:

Ինչպես նշվեց, ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ն, իբրև գիտակրթական հաստատություն, բնօրոշվում է այն առանձնահատկությամբ, որ նրա ուսումնական գործընթացն իրականացնող պրոֆեսորադասախոսական համակարգը ներառում է ԳԱԱ համակարգի ինստիտուտների և կենտրոնների գիտնականներին և գիտաշխատողներին, ըստ այդմ՝ պրոֆեսորադասախոսական

համակարգի մասնագիտական առաջընթացի ապահովումն անմիջականորեն իրականացվում է այն գիտահետազոտական հաստատությունում, որտեղ տվյալ դասախոսն իրականացնում է իր գիտական-մասնագիտական գործունեությունը: Եվ պատահական չէ, որ վերջիններիս մասնագիտական առաջընթացը պայմանավորված է տվյալ ինստիտուտի միջազգային գիտահետազոտական ծրագրերում ներգրավածության հանգամանքով: Ընդգրկված լինելով տարբեր գիտահետազոտական միջազգային և ներպետական ծրագրերում պրոֆեսորադասախոսական կազմին հնարավորություն է ընձեռվում մասնակցել տարաբնույթ մասնագիտական որակավորումների բարձրացման, վերապատրաստումների և վերաորակավորումների ծրագրերի, ստանալ հավաստագրեր և այլ վկայականներ:

ԳԿՄԿ-ն, իր հերթին, 2014 թ. ընթացքում կազմակերպել և իրականացրել է վերապատրաստումների 3 կուրսեր՝ ուսումնական ծրագրերի բարելավման, համակարգչագիտության և մանկավարժական հմտությունների զարգացման ուղղություններով:

Պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականության և ընթացակարգերի, սկսնակ դասավանդողների խրախուսման և մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականության, ինչպես նաև սկսնակ դասավանդողների մենթորության քաղաքականության և ընթացակարգերի մեկ միասնական տարբերակ մշակելու ուղղությամբ ԳԿՄԿ-ում դեռևս նոր-նոր աշխատանքներ են տարվում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ ռազմավարական նպատակների իրականացման համար:

Հիմքեր	<p>Վարչական աշխատակազմի ցանկը՝ ըստ հաստատության կառուցվածքային ստորաբաժանումների</p> <p>Ուսումնաօժանդակ աշխատակազմի գործառույթները</p> <p>Վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի կայունության ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը</p> <p>Վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի գործունեության որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը</p> <p>Աշխատակազմի գործունեության որակն ապահովող մեխանիզմները և գործիքները – մշակման փուլում են:</p>
--------	---

Վարչական և ուսումնաօժանդակ կառույցների գործունեության արդյունավետության շարունակական կատարելագործումը ամրագրված է Գիտակրթական միջազգային կենտրոնի Ռազմավարական ծրագրերի մաս 5 խնդիրների գործողություններում /Հավելված 1 – էջ 15/:

Վարչական աշխատակիցների մասնագիտական որակները բարձրացվում են վերապատրաստման մի շարք դասընթացներով՝ համակարգչագիտություն, գործավարություն, էլեկտրոնային կառավարման համակարգ, տեղեկատվության պաշտպանություն, կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպում, հետազոտական աշխատանքների կազմակերպում և այլն:

Ուսումնաօժանդակ աշխատակազմը գործում է ամբիոնների կառույցներում, ուսումնական մասում և հաշվետու է ղեկավարությանը:

Գիտակրթական միջազգային կենտրոնի վարչական կազմի աշխատանքի արդյունավետությունը գնահատվում է մագիստրոսների կողմից ստացված կրթությունից բավարարվածության հարցումների օգնությամբ:

ՉԱՓԱՆԻՇ 5-Ի SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ul style="list-style-type: none"> Գիտական հարուստ ներուժ, առաջատար դիրքեր և ճանաչված գիտնականների 	<ul style="list-style-type: none"> Դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրում դեռևս ներառված

<p>առկայությունն տարբեր ասպարեզներում:</p> <ul style="list-style-type: none"> • Գիտամանկավարժական կադրերի պատրաստման երկարամյա արդյունավետ փորձ և ատենախոսությունների գիտական ղեկավարման մեծ ներուժ: • Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ անցկացվող ուսանողական հարցումներ • Դասախոսական կազմի որակավորման բարձրացման դասընթացներ: • Դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական արդիական ծրագրի առկայություն՝ հիմնված կրեդիտային համակարգի վրա: 	<p>չեն այնպիսի մոդուլներ, որոնք կնպաստեն դասախոսական կազմի նեղ մասնագիտական որակներին ներկայացվող պահանջների զարգացմանը:</p> <ul style="list-style-type: none"> • Ուսանողական հարցումների արդյունքները դեռևս լիարժեք չեն օգտագործվում: • Բացակայում են վարչական և ուսումնա-օժանդակ կազմի ատեստավորման մասնագիտական չափանիշները և կատարելագործման մեխանիզմները: • Տարեց դասախոսների աճող մասնաբաժնի միտում:
Հնարավորություններ	Վտանգներ
<ul style="list-style-type: none"> • Բազմաթիվ միջազգային գիտաժողովների, փոխանակման և գիտակրթական համագործակցության ծրագրերի առկայություն: • ՀՀ ԿԳՆ ԳՊԿ, ՀՀ ԿԳՆ-ին, ՀՀ նախագահի, կողմից առաջարկվող ամենամյա գիտահետազոտական, գիտության բնագավառի նվիրյալներին խրախուսման ծրագրեր, ինչպես նաև երիտասարդ գիտնականների համար նախատեսված մրցույթներ 	<ul style="list-style-type: none"> • Երկրի սոցիալ-տնտեսական վիճակով պայմանավորված՝ բարձր որակավորմամբ երիտասարդ կադրերի արտահոսք: • Միջազգային ԿԾ-ում դասախոսների մասնակցության ցուցանիշների նվազում՝ պայմանավորված օտար լեզուների իմացության ոչ բավարար մակարդակով: • Խրախուսման համակարգի ոչ լիարժեք գործունեություն՝ պայմանավորված պետական ֆինանսական միջոցների սակավությամբ:

Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:

Նախատեսվում է թույլ կողմերի և վտանգների հաղթահարման ուղղությամբ իրականացնել հետևյալ քայլերը.

- Պրոֆեսորադասախոսական անձնակազմի շարունակական վերապատրաստման ու նեղ մասնագիտական որակավորումների բարձրացման ծրագրերի իրականացում:
- Ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով վարչական և ուսումնաօժանդակ կազմի ատեստավորման և մասնագիտական որակավորումների բարձրացման մեխանիզմների կիրարկում:
- Երիտասարդ կադրերի խրախուսում:

Պրոֆեսորադասախոսական համակազմի օտար լեզուների իմացության մակարդակի բարձրացում, վերապատրաստումների իրականացում:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ

ԶԱՓԱՆԻՇ: *ՄՈՒԻ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:*

- *Գիտահետազոտական աշխատանքներում ու նախագծերում դասախոսական և ուսանողական կազմերի ներգրավվածության ընդլայնման համար նախադրյալների և նպաստող պայմանների ստեղծում: Մագիստրոսական ծրագրերի հետազոտական ուղղվածության ու կողմնորոշման միտվածություն: ՀՀ ԳԱԱ համակարգի գիտական*

հաստատություններում իրականացվող գիտահետազոտական նախագծերում Կենտրոնի մասնագիտական ամբիոնների ուսանողական համակարգի զգալի ներգրավում, հետազոտական և ուսումնական գործունեության սերտ շաղկապում, պրակտիկաների կիրառական-հետազոտական ուղղվածության խրախուսում. հետազոտական աշխատանքների միջազգայնացման խթանում, Եվրոպական հետազոտական տարածքին ինտեգրման միտում: /Տե՛ս ՌԾ. էջ 8-9 – Հավելված 1/

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

Հիմքեր

[ՀՀ ԳԱԱ կանոնադրություն – Հավելված 4,](#)
[ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ռազմավարական ծրագիր – Հավելված 1](#)

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիան Հայաստանի Հանրապետության հիմնադրած՝ հատուկ կարգավիճակ ունեցող, ինքնակառավարվող բարձրագույն գիտական կազմակերպություն է, որը կազմակերպում, իրականացնում և համակարգում է գիտելիքի վրա հիմնված տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացման համար անհրաժեշտ հիմնարար և կիրառական հետազոտություններ:

Ակադեմիայի խնդիրներից են, մասնավորապես ֆիզիկամաթեմատիկական, բնական, տեխնիկական գիտությունների, հայագիտական և հասարակական գիտությունների, կարևորագույն ուղղություններով հիմնարար և կիրառական գիտական հետազոտությունների և մշակումների կազմակերպումը և համակարգումը:

Լինելով հանրապետության հզոր գիտական հաստատություն ՀՀ ԳԱԱ իր մեջ ներառում է բազմաթիվ ինստիտուտներ և գիտահետազոտական կենտրոններ, որոնցից 32- ում իրականացվում է ասպիրանտական կրթություն: ԳԱԱ գիտական կազմակերպությունների գիտական և գիտատեխնիկական, ինչպես նաև գիտահետազոտական հսկայական փորձը, բարենպաստ պայմաններ են բարձրորակ կադրերի պատրաստման համար:

ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպություններում ասպիրանտական կրթություն են ստանում 400 ավելի ասպիրանտ և հայցորդ: Կատարելով համատեղ հետազոտական աշխատանք համապատասխան ինստիտուտների և կենտրոնների գիտաշխատողների հետ նրանք լիիրավ ներգրավվում են տվյալ գիտական կազմակերպության բոլոր միջոցառումներին՝ գիտաժողովներին, սեմինարներին, ամառային դպրոցներին և գործուղումներին, միջազգային ծրագրերին: Ստացված գիտական ձեռքբերումները վավերացվում են համատեղ հոդվածների, ներդրումների, զեկուցումների ձևով (տես՝ ՀՀ ԳԱԱ տարեկան հաշվետվությունները):

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ն հետազոտական համալսարանի նախատիպ է, որտեղ հնարավոր է առավել բարձր արդյունավետությամբ զուգակցել ուսուցման գիտական և կրթական բաղադրիչները՝ ակտիվ գիտական միջավայրում հնարավոր է պատրաստել բարձր որակավորում ունեցող և գիտության ժամանակակից պահանջներին համապատասխանող մասնագետներ: ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպությունների հենքի վրա ԳԿՄԿ-ն իրականացնում է մագիստրոսական կրթություն, մինչև նույն ժամանակ ապահովելով ասպիրանտի և հայցորդի ծրագրերով հետբուհական մասնագիտական կրթություն: Մասնագիտական ամբիոնների տեղակայումը ՀՀ ԳԱԱ համապատասխան գիտական կազմակերպություններում մանրամասն ներկայացված է [Հավելված 24](#):

Մագիստրոսական ծրագրերն իրականացվում են հետևյալ գիտահետազոտական կազմակերպություններում.

- Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ
- Մեխանիկայի ինստիտուտ

- Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն
- Արևելագիտության ինստիտուտ
- Պատմության ինստիտուտ
- Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ
- Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոն
- Հր.Աճառյանի անվ. լեզվի և Մ.Աբեղյանի անվ.գրականության ինստիտուտներ
- Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ
- Լ.Օրբելու անվ.ֆիզիոլոգիայի ինստիտուտ
- Երկրաբանական գիտությունների ինստիտուտ
- Հիմնարար գիտական գրադարան

ԳԿՄԿ-ում գործում է 2 գիտական խումբ գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրի շրջանակներում՝ գերհաղորդականության և կենսահինֆորմատիկայի ուղղությամբ և 1 խումբ՝ թեմատիկ ֆինանսավորմամբ՝ բանասիրական ուղղվածությամբ:

Ներկայացնում ենք Կենտրոնի մասնագիտական ամբիոններում կատարվող գիտահետազոտական և ուսումնամեթոդական աշխատանքների հիմնական ուղղությունները.

«Արևելագիտություն» ամբիոնի դասախոսների կողմից կատարվող աշխատանքները նվիրված են Մերձավոր և Միջին Արևելքի երկրների և ժողովուրդների պատմության հին շրջանին, միջին դարերին, նոր և նորագույն շրջանին, միջազգային և տարածաշրջանային հարաբերություններին:

«Մոլեկուլային և բջջային կենսաբանություն» ամբիոնի դասախոսների կողմից ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի գիտական լաբորատորիաներում կատարվող աշխատանքները ուղղված են ուսումնասիրելու բջջային ակտիվության կարգավորման մեխանիզմները և նրանց խանգարումները օրգանիզմի տարբեր ախտաբանական վիճակներում, ներառյալ աուտաիմունային, աուտաբորբոքային, վարակիչ, օնկոլոգիական, հոգեկան և ուղեղանոթային հիվանդություններ: Ուսումնասիրությունները անցկացվում են *in vivo*, *in vitro*, *in situ* և *in silico* և տարվում գենետիկական, բջջային, թաղանթային և ենթաբջջային մակարդակներում: Առանձին ուշադրություն է բևեռված իմունային և ազդանշանային համակարգերի միջնորդանյութերին: Հետազոտություններում օգտագործվում են փորձարարական կենդանիներ, բջջային կուլտուրաներ, կլինիկական նյութ և համակարգչային մոդելներ: Տարվող հետազոտությունների կարևորագույն ուղղություն է հայերի գենոմի ուսումնասիրությունը՝ պաթոգենոմիկայի, էկոգենոմիկայի, իմունագենոմիկայի և պոպուլյացիոն գենոմիկայի մոտեցումների կիրառմամբ:

«Ռեղագործական քիմիա» ամբիոնի դասախոսների կողմից ՀՀ ԳԱԱ Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի (ՕԴՔԳՏԿ) գիտական լաբորատորիաներում կատարվող աշխատանքները նվիրված են նոր, պոտենցիալ կենսաբանորեն ակտիվ միացությունների սինթեզին և ակտիվության ուսումնասիրություններին:

«Մանկավարժության և սոցիոլոգիայի» ամբիոնի դասախոսների կողմից աշխատանքները նվիրված են բարձրագույն դպրոցի մանկավարժության, սոցիալական և պենիտենցիար մանկավարժության, մանկավարժական սոցիոլոգիայի հիմնախնդիրների ուսումնասիրությանը:

«Բնապահպանություն և բնօգտագործում» մասնագիտության ամբիոնի դասախոսների կողմից ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնի գիտական բաժիններում կատարվող աշխատանքները վերաբերվում են շրջակա միջավայրի երկրաբնապահպանական ուսումնասիրություններին:

«Ռադիոտեխնիկա և կապ» ամբիոն

Ուսումնասիրվել է տերահերցային ալիքների գեներացումը փուլային դիմակի միջոցով ձևավորված պարբերական ոչ գծային կառուցվածքներում, միադոմեն լիթիումի նեոբաթի բյուրեղներում՝ աստիճանային դիմակի միջոցով, կատարվել են պլազմոնային ճեղքային նանոանտենաների տեսական և փորձարարական հետազոտություններ և այլն:

«Տնտեսագիտության և կառավարման» ամբիոնի դասախոսների կողմից ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում կատարվող գիտահետազոտական աշխատանքները նվիրված են ՀՀ տնտեսության տարբեր բնագավառներում առկա հիմնախնդիրների հետազոտություններին և վերլուծություններին:

«Ներքառնաֆիզիկա և տոքսիկոլոգիա» ամբիոնի դասախոսները ընդգրկված են ՀՀ ԳԱԱ ակադ. Լ.Ա. Օրբելու անվ. ֆիզիոլոգիայի ինստիտուտում կենտրոնական նյարդային համակարգի ֆիզիոլոգիայի, վեգետատիվ նյարդային համակարգի ֆիզիոլոգիայի, ԿՆՀ-ի ֆունկցիաների կոմպենսացման, նյարդա-ներզատչական փոխհարաբերությունների, զգայաշարժ ինտեգրման, հարթ մկանների ֆիզիոլոգիայի, մարդու հոգեֆիզիոլոգիայի, նյարդային համակարգի ֆունկցիաների մաթեմատիկական մոդելավորման, թունաբանության, ֆիզիոլոգիապես ակտիվ նյութերի պուրիֆիկացման ու ստանդարտիզացման, ինտեգրալ կենսաբանության և այլ լաբորատորիաներում տարվող գիտահետազոտական աշխատանքներում:

«Պատմության և միջազգային հարաբերություններ» ամբիոնի դասախոսների կողմից գիտահետազոտական աշխատանքներ են տարվել ինչպես Հայոց և Համաշխարհային պատմության, այնպես էլ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության պատմության տարաբնույթ հիմնահարցերի ուսումնասիրության ուղղությամբ:

«Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա» ամբիոնի դասախոսների կողմից ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի (ՀՀ ԳԱԱ ԻԱՊԻ) գիտական և գիտատեխնիկական ստորաբաժանումներում իրականացվող աշխատանքները ընդհանուր առմամբ տարվում են տեսական կոմպյուտերագիտության զարգացման և գիտատար գործիքային տեխնոլոգիաների ստեղծման ուղղությամբ:

«Գրադարանային տեղեկատվական աղբյուրներ» ամբիոնի դասախոսների կողմից ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի (ՀԳԳ) մատենագիտության բաժնում կատարվող աշխատանքները նվիրված են «Հայ գիրք» և «Հայ մամուլ» շտեմարանների ձևավորման, ինդեքսավորման, «Հեղինակավոր գրառումների» և «Խորագրերի» շտեմարանների լեզվաբանական համատեղելիության հետազոտմանը:

Հոգեբանության ամբիոնի պրոֆեսորադասախոսական համակազմի մասնագիտական ներուժը ներգրավված է ամբիոնի գիտական առաջատար «Մոցիալ-հոգեբանական մարզինալացման հիմնախնդիրը և հաղթահարման հոգեբանական մեխանիզմները» վերստառությամբ թեմայի շրջանակներում իրականացվող գիտահետազոտական աշխատանքներում: Թեմայի պրոբլեմային տրոհման արդյունքում հետազոտություններ են իրականացնում ամբիոնի թե՛ դասավանդող դասախոսները, թե՛ մագիստրանտները: Ամբիոնում առաջարկվող թեզերի թեմաները անմիջականորեն շաղկապված են ամբիոնային գիտական առաջատար թեմային, ինչը հնարավորություն է ընձեռում մագիստրանտներին հետազոտել ներկայացված հիմնախնդիրը, իրականացնել հետազոտությունն ու մասնագիտական վերլուծություններ:

«Քաղաքագիտություն» ամբիոնի դասախոսներն ակտիվ զբաղվում են հետազոտական գործունեությամբ և պարբերաբար հանդես են գալիս համապատասխան հրապարակումներով: Ներկայումս Հայաստանի Հանրապետության շուրջ ձևավորված ներպետական ու արտաքին աշխարհաքաղաքական իրադրությունները պահանջում են նաև հայ քաղաքագիտական ներուժի օգտագործում, գիտական հետազոտությունների միջոցով բազմաթիվ հիմնախնդիրների վերհանում ու դրանց հնարավոր կարգավորումների առաջարկում: Նշված գործընթացը ամբողջապես ներբեռնված է ամբիոնի դասախոսների հետազոտական գործունեության մեջ:

«Հայոց լեզու և գրականություն» ամբիոնի դասախոսների կողմից կատարվող գիտական

աշխատանքները նվիրված են հայ միջնադարյան, նոր և նորագույն շրջանի գրականության, գրաբարի, միջաին հայերենի և ժամանակակից արևելահայերենի և արևմտահայերենի, հայոց լեզվի անադարտ պահպանման հիմնախնդիրներին:

«Իրավագիտություն» ամբիոնի դասախոսների կողմից ամբիոնում կատարվող աշխատանքները նվիրված են իրավունքի տեսության հիմնախնդիրների, միջազգային հանրային և մասնավոր հիմնախնդիրների, սահմանադրական բարեփոխումների կոնտեքստում իրականացվող պետաիրավական կառուցակարգերի, քաղաքացիաիրավական հարաբերությունների հիմնախնդիրների ուսումնասիրություններին:

Հետազոտության արդյունքները՝ ըստ տարիների ներկայացված են [Հավելված 40-ում](#) :

Գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրի շրջանակներում ԳԿՄԿ գերհաղորդականության խմբի կողմից հետազոտվել է բարձրջերմաստիճանային նյութերի հիմնարար հատկությունները կախված խառուրդա-դեֆեկտային բաղադրությունից և արտաքին ազդակներից, ինչպես նաև ձերացման երևույթը գերհաղորդիչ նյութերում: Ստացված գիտական արդյունքների հիման վրա հրապարակվել է 12 հոդված: Կենսաինֆորմատիկայի խմբի կողմից մոլեկուլային դինամիկայի մեթոդով ուսումնասիրել են բարդ մոլեկուլային համակարգեր՝ օգտագործելով բարձր արտադրողականության կլաստերներ: Ստացված արդյունքների հիման վրա տպագրվել է 19 հոդված արտասահմանյան բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում /ավելին՝ տես <http://bioinformatics.am/hy/>:

2013-2015թթ. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ն իրականացրել է բանասիրական ուղղվածությամբ՝ «Արդի հայ հեքիաթի հիմնախնդիրները» հետազոտական նախագիծը, որի շրջանակներում Հայաստանի տարբեր շրջաններում կատարվել են բանահավաքչական աշխատանքներ, գրառվել են արդի հայ հեքիաթի նմուշներ, կատարվել է ինչպես հավաքված նյութի, այնպես էլ հրապարակի վրա առկա գրական հեքիաթի ա/ բանագիտական, բ/ գրականագիտական, գ/լեզվաբանական հետազոտություն: Հրատարակվել է 4 հոդված, արդյունքներն ամփոփվել են մենագրությամբ՝ հայերեն և անգլերեն լեզուներով /Նվ. Վարդանյան, Ա. Սեմիրջյան-Բեքմեզյան, Նար. Վարդանյան «Արդի հայ հեքիաթի հիմնախնդիրները», Երևան, 2015:

ԶՄՓՈՐՈՇԻԶ ք. ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

Հիմքեր	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ռազմավարական պլան ժամանակացույց – Հավելված 2 Հետազոտության արդյունքները՝ ըստ տարիների ներկայացված են Հավելված 40-ում ԳԽ որոշումներ
--------	--

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ մասնագիտական ամբիոնները տեղակայված են ԳԱԱ համակարգի գիտահետազոտական կազմակերպություններում և Կենտրոնի մագիստրանտները և ասպիրանտները, ըստ էության, անմիջականորեն մասնակցում են տվյալ կազմակերպություններում տարվող գիտական աշխատանքներին, կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերին, որոնց արդյունքները հրապարակվում են ԳԱԱ տարեկան զեկույցներում: Մագիստրոսական թեզերի թեմաների ընտրությունը կատարվում է հետևյալ կերպ. ընդունվելուց հետո մագիստրանտները մասնակցում են այն գիտական կազմակերպության սեմինարներին, որտեղ տեղակայված է կամ որին կցված է տվյալ ամբիոնը: Ծանոթանալով տվյալ կազմակերպությունում կատարվող աշխատանքներին, մագիստրանտներն իրենց նախասիրությամբ կցվում են համապատասխան գիտական բաժիններին՝ ընտրելու արդեն իսկ առաջադրված թեզի թեմաները:

Գիտական աշխատանքների արդյունքները կարելի է տեսնել մագիստրոսական թեզերի և թեկնածուկական ատենախոսությունների կառուցված թեմաներում:

ՉԱՓՈՂՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարագացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

ԳԿՄԿ 2015 թ. նախահաշիվը - Հավելված 5

Հիմքեր

[Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին օրենք - Հավելված 42](#)

[Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի կանոնադրություն - Հավելված 42](#)

[Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման ռազմավարություն և միջոցառումների ժամանակացույց - Հավելված 42](#)

Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագիր (ԵԳԱԾ)

ՀՀ ԳԱԱ բոլոր գիտական կազմակերպությունները՝ ներառյալ ԳԿՄԿ-ն, առաջնորդվում են ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի մասին ՀՀ օրենքով, ՀՀ ԳԱԱ կանոնադրությամբ և ՀՀ կառավարության կողմից հաստատված Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման ռազմավարությամբ և միջոցառումների ժամանակացույցով՝ [/տես՝ Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման ռազմավարություն և միջոցառումների ժամանակացույց/](#), որի համաձայն պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվում են նպատակային-ծրագրային հետազոտություններ, գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում և զարգացում, հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների ծրագրեր, ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանություն և պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ:

Իսկ երիտասարդներին գիտության ոլորտում աջակցելու և խրախուսելու նպատակով 2011թ. ՀՀ ԳԱԱ-ն ակտիվորեն մասնակցում է երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրին (ԵԳԱԾ), որը գործում է ՀՀ Նախագահի հովանու ներքո և իրականացվում է Հայաստանի երիտասարդական հիմնադրամի միջոցով:

Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի յոթ հիմնական ուղղություններն են՝ երիտասարդ գիտնականներին միջազգային գիտական գործուղումների ֆինանսական աջակցության տրամադրում, երիտասարդ գիտնականների գիտաժողովների, սիմպոզիումների, դպրոցների, սեմինարների կազմակերպման ֆինանսական աջակցության տրամադրում, գիտական դրամաշնորհների տրամադրում, երիտասարդ գիտնականների հեղինակած գրքերի տպագրության համար ֆինանսական աջակցության տրամադրում, երիտասարդ գիտնականներին գիտական սարքերի և/կամ նյութերի ձեռքբերման համար ֆինանսական աջակցության տրամադրում, ազդեցության գործակից ունեցող պարբերականներում երիտասարդ գիտնականների գիտական հոդվածների տպագրության համար ֆինանսական աջակցության տրամադրում և մրցանակաբաշխության կազմակերպում: ԵԳԱԾ-ի գործունեության մասին առավել մանրամասն՝ ԵԳԱԾ-ի ֆեյսբուքյան պաշտոնական էջում՝ <https://www.facebook.com/groups/yssp.am/>

ՀՀ Նախագահի հովանու ներքո գործող ծրագրին ակտիվորեն մասնակցում են ՀՀ ԳԱԱ դասախոսները և երիտասարդ հետազոտողները, սակայն ԳԿՄԿ-ն չունի վիճակագրական տվյալներ մասնակցության թվի վերաբերյալ:

ՉԱՓՈՂՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

Լինելով պետության կողմից հովանավորվող, ինքնակառավարվող գիտական հաստատություն Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան միավորում է Ակադեմիայի անդամներին, համակարգի գիտաշխատողներին և արտասահմանյան անդամներին, կոորդինացնում է հանրապետությունում հիմնարար գիտական հետազոտությունները:

ԳԱԱ միջազգային գործունեությունը նպատակաուղղված է նպաստելու ակադեմիայի գիտնականների առավել ակտիվ մասնակցությանը համատեղ միջազգային գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերին և միջազգային միջոցառումներին: Ակադեմիան կուտակել է գիտագործնական հսկայական փորձ, արժանացել է միջազգային գիտական հանրության բարձր գնահատականին, վայելում է մեծ հեղինակություն:

Հատկապես մեծ է ակադեմիայի համակարգող դերը հայագիտության, հասարակական այլ, հիմնարար ու կիրառական, բնական գիտությունների բնագավառներում:

(ԳԱԱ հետազոտության ուղղությունների և ձեռքբերումների մասին մանրամասն տե՛ս «ՀՀ ԳԱԱ տարեկան հաշվետվություն-2014»-Հավելված 6)

Ներկայումս ՀՀ ԳԱԱ-ն մասնակցում և իրականացնում է տարբեր միջազգային գիտական ծրագրեր այդ թվում՝ ՆԱՏՕ-ի անհատական գործընկերության գործողությունների ծրագիրը, Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի (ISTC) ծրագրերը, Եվրոպական՝ Յոթերորդ շրջանակային ծրագիրը (FP7), ՏԵՄՊՈՒՄ Համաեվրոպական շարունակական ծրագիրը համալսարանական կրթության համար (TEMPUS), Սնծովյան տնտեսական համագործակցություն (BSEC) և այլ ծրագրեր: Բավականին ակտիվ կերպով ՀՀ ԳԱԱ հիմնարկները մասնակցում են նաև ԱՄՆ ծրագրեր՝ Քաղաքացիական հետազոտությունների և մշակումների (CRDF Global), Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամի (ANSEF), Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի (NFSAT), Գերմանական Ֆոլկսվագեն հիմնադրամների/Volkswagen Foundation և այլ հիմնադրամների ծրագրերի:

ՀՀ ԳԱԱ-ն միջազգային համագործակցության հետ մեկտեղ անդամակցում է մի շարք միջազգային կառույցների: 1993թ.-ից ի վեր ՀՀ ԳԱԱ-ն հանդիսանում է Գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիայի MAAH-ի (Международная ассоциация академий наук) հիմնադիր անդամ: Կառույցի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ն նախկին ԽՍՀՄ երկրների հետ մեկտեղ իրականացնում է միջազգային միջոցառումներ: ՀՀ ԳԱԱ-ն անդամակցում նաև <<Գիտությունների Ակադեմիաների Եվրոպական ֆեդերացիա>> All European Academies (ALLEA), <<Գիտական միջազգային խորհուրդ>> International Council of Science (ICSU), <<Երրորդ աշխարհի գիտությունների ակադեմիաներ>> The Third World Academy of Sciences (TWAS) կառույցներին:

Միջազգային տարբեր գիտական կառույցների անդամակցում են նաև ՀՀ ԳԱԱ-ի տարբեր ինստիտուտներ և կառույցներ, որտեղ տեղակայված են ԳԿՄԿ մասնագիտական ամբիոնները՝ օրինակ ՀՀ ԳԱԱ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտը անդամակցում է Հեռահաղորդակցման միջազգային միությանը՝ International Telecommunication Union (ITU), ՀՀ ԳԱԱ ֆիզոլոգիայի ինստիտուտը՝ Մտքի փորձագիտական միջազգային կազմակերպությանը International Brain Research Organization (IBRO):

Իսկ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ միջազգային գործունեության մասին մանրամասն տես Չափորոշիչ IX՝ արտաքին կապեր և միջազգայնացում:

Գրախոսվող ամսագրերում ԳԿՄԿ պրոֆեսորադասախոսական անձնակազմի հրապարակումների մասին մանրամասն տե՛ս [Հավելված 40](#), իսկ ստորև ներկայացվող աղյուսյակներում տվյալները ներկայացված են ընտրողաբար:

ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկ							
Ամսագիրը (երկիրը)	Վարկանիշը	2010	2011	2012	2013	2014	

1	Вестник московского университета						2
2	Journal of Inorganic Biochemistry						2
3	Сборник научных трудов «Липидология – наука XXI века						1
4	Генетика						1
5	Молекулярная Биология						1
6	Письма в ЖЭТФ						1
7	Химия и фармакология						2

Օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկը

	Ամսագիրը (երկիրը)	Վարկանիշը	2010	2011	2012	2013	2014
1	International Journal of Advanced Applied Physics Research						1
2	Superconductor and Superconductivity						1
3	International Conference «Chess and Education. London						1
4	Materials Science and Engineering					1	
5	Solid State Phenomena					1	
6	Journal of Scientific & Engineering Research						1
7	Mathematical Problems of Computer Science						2
8	Neuroscience and Behavioral Physiology						2
9	European Neuropsychopharmacology						1
10	Neuroscience and Behavioral Physiology						1
11	European Journal of Human Genetics						2
12	Journal of Cell and Molecular Research						1
	Journal of Biophysical Chemistry						

ՀՀ-ում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկի

	Ամսագիրը	Վարկանիշը	2010	2011	2012	2013	2014
1	Electronic Journal of Natural Science						3
2	FEBS Journal						5
3	Journal of Physics						3
4	Journal of Contemporary Physics						1

5	Изв. НАН РА и ГИУА. Сер. техн. наук					1
6	«Արդարադատություն» գիտական հանդես, Երևան					1
7	Հանրային կառավարում գիտ.հանդես, Երևան					2
8	«Մանկավարժության և հոգեբանության հիմնահարցեր» Միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես					4
9	Химический журнал Армении					6
10	Научно-практический журнал					11

Վերլուծել ՄՈՒՀ-ի հետազոտական գործունեության միջազգայնացման քաղաքականության արդյունավետությունը և վերջին հինգ տարիների նվաճումները /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԳԱԱ միջազգային գործունեությունը նպատակաուղղված է նպաստելու ակադեմիայի գիտնականների առավել ակտիվ մասնակցությանը համատեղ միջազգային գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերին և միջազգային միջոցառումներին:

Ակադեմիան կուտակել է գիտագործնական հսկայական փորձ, արժանացել է միջազգային գիտական հանրության բարձր գնահատականին, վայելում է մեծ հեղինակություն:

Ակադեմիան համագործակցում է ԱՊՀ երկրների գիտությունների ակադեմիաների, Ֆրանսիայի, Հնդկաստանի, Չինաստանի, Ռումինիայի ակադեմիաների, ՌԴ «Հարավային գիտական կենտրոնի», Գերմանիայի Տրիբ համալսարանի հետ: Համագործակցության զուգընթաց ստեղծվել են համատեղ լաբորատորիաներ՝ ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտը Ֆրանսիայի Բուրգունդիայի համալսարանի հետ, Կլոդ Բեռնար համալսարանի հետ, Երկրաբանական գիտությունների ինստիտուտը Լիոնի համալսարանի հետ: Գիտական կապերի և համագործակցության սերտացման շնորհիվ կիրառական բնույթի հետազոտություններում օգտագործվում են նաև նրանց լաբորատորիաների ժամանակակից սարքավորումները և հնարավորությունները միջազգային չափանիշներին համապատասխան հետազոտություններ կատարելու համար:

Վերջին տարիների նշանակալի գիտական իրադարձություններից են՝

- ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի կազմակերպած երիտասարդ գիտ աշխատողների հերթական՝ XXXVI նստաշրջանը նվիրված էր Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին, որին մասնակցել են ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ դասախոսներ և մագիստրանտներ / <http://lraber.asj-oa.am/6471/1/439.pdf/>
- ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտը «Միջազգային մեթոդների տեղայնացումը երկրաքիմիական հետազոտություններում» թեմայի շրջանակներում երկրաքիմիական հետազոտություններում միջազգային նորագույն մեթոդների, օպերացիոն ստանդարտ գործընթացների և անալիտիկ սարքավորումների կիրառման փորձի ուսումնասիրումը հնարավորություն է տվել մշակել անալիտիկ տարբեր մեթոդներով տարբեր տարիներին ստացված երկրաքիմիական տվյալների համադրության հիմնավորման գիտամեթոդական հենք: /Տե՛ս էջ 164/ ([Տե՛ս «ՀՀ ԳԱԱ տարեկան հաշվետվություն -2014 – Հավելված 6](#)):
2014թ. նշանալից գիտական իրադարձությունների մասին մանրամասն [Տե՛ս «ՀՀ ԳԱԱ](#)

տարեկան հաշվետվություն -2014 – Հավելված 6 էջ 293 :

ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

Հիմքեր

Տե՛ս Հավելված 39 - Կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ - Հետազոտողի (ասպիրանտի, հայցորդի) պատրաստման կրթական ծրագիր
ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում հետազոտողի պատրաստման (ասպիրանտուրայի) հետազոտողի պատրաստման գիտակրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը
Ասպիրանտի ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլան –Հավելված 39
Հետազոտողի գիտակրթական ծրագրով ուսումնառող ասպիրանտի, հայցորդի ամփոփիչ ատեստավորման և աստիճանաշնորհման կարգ
Ասպիրանտական կրթության որակի ապահովման չափանիշների նախագիծ – Հավելված 39
Ասպիրանտական ՄԿԾ-ի ռազմավարական զարգացման պլան /Մոլեկուլային և բջջային կենսաբանություն/ - Հավելված 39

	%
Պատասխանել հետևյալ հարցերին: Ուսումնառողների n° ր տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացներից:	
Դասավանդողների n° ր տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացներից:	
Գործատուների n° ր տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացներից:	
Նման հետազոտություն դեռևս չի իրականացվել:	

Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ՀՀ ԳԱԱ-ն կարևորում է հետբուհական /մագիստրատուրա, ասպիրանտուրա և դոկտորանտուրա/ կրթության որակը և դրա նշանակությունը բարձրորակ կադրերի և հետագա մասնագիտական կարիերայի զարգացման հարցում: ԳԱԱ առկա հզոր գիտահետազոտական միջավայրը ապահովում է կրթության բարձր մակարդակ: ՀՀ ԳԱԱ գործունեության հիմնական ուղղություններից է կրթական համակարգի գիտական մակարդակի բարձրացումը, բարձրագույն կրթությունն ապահովող հաստատությունների պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացումը կրթական ծրագրերի ստեղծումը (տես՝ [ՀՀ ԳԱԱ կանոնադրությունը](#)):

2012թ. ՀՀ ԳԱԱ ասպիրանտուրայում ներդրվել է կառուցավորված գիտակրթական ծրագրի՝ կրթական և հետազոտական բաղադրիչներով: Այժմ ՀՀ ԳԱԱ-ում ասպիրանտական կրթությունը նպատակաուղղված է դեպի արդյունավետ հետազոտական և մասնագիտական աշխատանք կատարելու ունակ երիտասարդ հետազոտողների պատրաստմանը, նրանց համար ապահովելով՝ ապագա կարիերայի և աշխատանքի ընդլայնված հնարավորություններ ինչպես ակադեմիական միջավայրում, այնպես էլ դրանից դուրս:

«Վերիտաս՝ Զալցբուրգյան սկզբունքների հիման վրա կրթության 3-դ մակարդակի կառուցվածքային զարգացում» ծրագրի շրջանակներում իրականացվել է ՀՀ ԳԱԱ ասպիրանտական կրթության համապատասխանելիությունը Զալցբուրգյան սկզբունքներին /տես՝ [ՀՀ ԳԱԱ SWOT վերլուծություն](#)/, կազմվել և թարգմանվել է «[Զալցբուրգյան սկզբունքների իրականացումը Հայաստանում](#)» ուսումնական նյութերի փաթեթը, որը տրվել է ՀՀ ԳԱԱ ներակադեմիական վերապատրաստման բոլոր մասնակիցներին՝ ծանոթացման և կիրառման համար, ինչպես նաև մշակվել է [Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ասպիրանտական կրթության զարգացման պլան \(Ճանապարհային քարտեզ\)](#), որը սահմանում է ասպիրանտական կրթական ծրագրի նպատակները, ասպիրանտների կարողությունների զարգացման գործողությունները՝ մեթոդոլոգիա և վերջնական հմտություններ, ասպիրանտական ծրագրի ենթակառուցվածքը շրջանակը, ծրագրի չափանիշները և գնահատումը: Տվյալ փաստաթղթում սահմանվել է, որ յուրաքանչյուր ասպիրանտական կրթական ծրագրի նպատակն է՝

- տվյալ մասնագիտության ոլորտում յուրաքանչյուր սովորողի համար ապահովել անհատական պրակտիկ գիտելիք, փորձառություն և հմտություն
- ընտրված մասնագիտության բնույթի և տրամաբանության ընկալում որպես ամբողջություն
- հիմնարար գիտության ոլորտի բավարար գիտելիք , որը թույլ է տալիս զբաղվել ինքնակրթությամբ պարտադիր կրթության ավարտից հետո և լինել զարգացող մասնագիտությունների առաջատար դիրքերում
- ապահովել մասնագիտական կարիերայի ընթացքում արդյունավետ գործելու մոտիվացիա:

Միննույն ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ն շահակիցների քննարկման է ներկայացրել ՈԱԱԿ-ի կողմից մշակված ասպիրանտական կրթության որակի ապահովման չափանիշների նախագիծը: Նախատեսվում է հնարավորինս տեղայնացնել տվյալ չափանիշները և համապատասխանաբար կազմել ասպիրանտների գոհունակության հարցաթերթիկներ՝ պարզելու ուսումնառողների, դասավանդողների, գործատուների գոհունակությունը ՀՀ ԳԱԱ ասպիրանտական կրթության և հետազոտության գործընթացից:

Միննույն ծրագրի շրջանակներում ընտրվել է մեկ մասնագիտական ասպիրանտական կրթական ծրագիր «Մոլեկուլային և բջջային կենսաբանություն» մասնագիտությամբ /գիտական կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ/ և վերլուծվել է մասնագիտական ասպիրանտական կրթական ծրագիրը՝ ըստ միջազգային որակի ապահովման չափանիշների և համապատասխանաբար կազմվել է տվյալ ՄԿԾ-ի ռազմավարական զարգացման պլան: ՄԿԾ-ի ռազմավարական զարգացման պլան ընդգրկված են այնպիսի հիմնադրույթներ, ինչպիսիք են՝ մասնագիտական ասպիրանտական կրթական ծրագրի ռազմավարությունը և կանոնակարգը, կառուցվածքը, ռեսուրսները և ֆինանսավորումը, կարողությունների զարգացմանն ուղղված գործողությունները, ընդունելության կանոնակարգը, ուսումնական պլանը, գիտական ղեկավարին ներկայացվող պահանջները, թեկնածուական աշխատանքի գնահատման չափանիշները, ուսանողի գնահատման չափանիշները, շարժունություն և ծրագրի գնահատում: Յուրաքանչյուր հիմնադրույթին զուգահեռ ներկայացվել է ներկա իրավիճակը, բարելավմանն ուղղված քայլերը և համապատասխան ցուցիչները /տես՝ ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն [Արսեն Առաքելյանի զեկույցը – Հավելված 39](#): Ծրագրի շրջանակներում իրականացված վերլուծությունները նախադրյալներ են ստեղծում մագիստրոսական կրթական ծրագրերի ելքի և մուտքի պահանջների վերանայման համար:

Բենչմարքինգ է կատարվել Գերմանիայի Հայդելբերգի համալսարանի «Մոլեկուլային և բջջային կենսաբանություն» մասնագիտության հետ /<http://www.hbiggs.uni-heidelberg.de/>:

Վերլուծել Չափանիշ 6-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:

ՀԱՓԱՆԻՇ 6-Ի SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ul style="list-style-type: none"> • ՀՀ ԳԱԱ-ն՝ իր ողջ գիտական և գիտատեխնիկական հարուստ ներուժով, կազմակերպություններով, ենթակառուցվածքներով: • ԳԱԱ գիտագործնական հսկայական փորձը: • ԳԱԱ կողմից իրականացվող հիմնարար գիտական հետազոտությունների կոորդինացնող դիրքը: • ԳԱԱ համակարգի գիտական հաստատությունների և կազմակերպությունների ընձեռած մարդկային, գիտական, տարածքային և գիտատեխնիկական հնարավորությունները ԳԿՄԿ-ին: • ԳԿՄԿ մագիստրոսական և 	<ul style="list-style-type: none"> • ԳԿՄԿ վարչակազմի և ինստիտուտներում տեղակայված ամբիոնների տարածքային հեռավորությունը: • Կարևոր կիրառական խնդիրների լուծման, ստացված արդյունքների ապրանքայնացման ու ներդրման ոչ բավարար ծավալներ: • Ֆինանսավորման և արդիական ռեսուրսների ոչ բավարար մակարդակ: • Տարեց մասնագետներ

<p>ասպիրանտական համակազմի ամբողջական ներգրավվածությունը գիտական հաստատությունների գիտահետազոտական աշխատանքներում</p>	
<p>Հնարավորություններ</p>	<p>Վտանգներ</p>
<ul style="list-style-type: none"> • Արդիական ուսումնական և գիտահետազոտական լաբորատոր բազայի ստեղծում և զարգացում՝ առաջատար գիտատեխնոլոգիական և արտադրական ընկերությունների մասնակցությամբ: • Պետական պատվերով և նպատակային ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և տեխնոլոգիական հետազոտությունների խթանում: • Արդյունաբերական ձեռնարկությունների հետ համատեղ հետազոտությունների և ծրագրերի իրականացում, • Միջազգային գիտատեղեկատվական ցանցերում հեղինակավոր գիտավերլուծական շտեմարաններում և տարաբնույթ վարկանիշային ցանկերում ԳԱԱ գիտական աշխատանքների առավելագույնս ներկայացում: • Հայաստանի բուհերի հետ համատեղ ծրագրերի իրականացում: • Տարաբնույթ երիտասարդական միջազգային գիտաժողովների մասնակցություն: 	<ul style="list-style-type: none"> • Գիտահետազոտական աշխատանքների ոչ բավարար մակարդակի ֆինանսավորում պետության կողմից: • Հետազոտությունների պատվիրատուների ոչ բավարար ներգրավվածություն: • Որոշ հետազոտությունների ոլորտների պահանջարկի անկում: • Գիտական հետազոտությամբ զբաղվող կադրերի ծերացում: • Երիտասարդ կադրերի արտահոսք: • Համաշխարհային տեխնոլոգիական առաջընթացին ոչ համահունչ զարգացում:

Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:

- ԳԿՄԿ-ի վարչակազմի և ՀՀ ԳԱԱ ինստիտուտներում տեղակայված ամբիոնների ամբողջականության ապահովման նպատակով կենտրոնի ներամբիոնային միասնական կառավարման և տեղեկատվական համակարգի զարգացում:
- Հետազոտությունների արդյունքում ստացված արդյունքների ապրանքայնացման և ներդրման ծավալների ընդլայնման հնարավորությունների ստեղծում, հասարակայնության հետ կապերի և հանրայնացման մեխանիզմների գործարկում:
- Արտաբյուջետային և ֆինանսավորման այլ աղբյուրների հայթայթման հնարավորությունների որոնում, պատվիրատուների ներգրավվածության ընդլայնում երիտասարդ կադրերի խրախուսում:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության և նպատակների արդյունավետ իրականացման համար:

Տեխնոլոգիապես հագեցած ժամանակակից ուսումնական և աշխատանքային միջավայրի ստեղծում, ուսումնական գործընթացի իրականացման նյութատեխնիկական պայմանների բարելավում, Կենտրոնի ուսումնական և գիտական լաբորատոր բազայի զարգացում և արդիականացում, հեռավար ուսուցման համար նպաստավոր պայմանների ստեղծում, վիրտուալ միջավայրի ստեղծում, բարձրորակ օժանդակ ծառայությունների տրամադրում, տեղեկատվական ռեսուրսների զարգացում, ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության մեխանիզմների զարգացում /Տե՛ս ՌԾ, էջ 8, 10-11 – Հավելված 1/:

ԶՄՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:	
Հիմքեր	Վերլուծությունը ներկայացված է ստորև:
Պատասխանել հետևյալ հարցերին:	%
Արդյո՞ք ուսումնառողները բավարարված են ռեսուրսների ապահովվածությունից:	85%
Արդյո՞ք դասավանդողները բավարարված են ռեսուրսների ապահովվածությունից:	90%

Որակյալ ենթակառուցվածքների առկայությունը ԳԿՄԿ-ում ապահովված է կապված այն հանգամանքի հետ, որ ԳԿՄԿ-ի ուսումնական գործընթացին են ծառայում բոլոր այն ենթակառուցվածքներն ու ռեսուրսները, որոնք առկա են ՀՀ ԳԱԱ գիտական հաստատություններում: ԳԿՄԿ ամբիոնները տեղակայված են նշյալ գիտական հաստատություններում, հետևապես ուսանողները օգտվում են բոլոր ռեսուրսներից՝ թե մարդկային, թե նյութական: ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ն լինելով ակադեմիական համակարգի հաստատություններից մեկը, ուսումնական գործունեության իրականացման համար մեծապես օգտագործում է ԳԱԱ տարածքային, լաբորատոր և տեխնիկական հնարավորությունները:

Գիտակրթական միջազգային կենտրոնի գերիսնդիքներից է տեխնոլոգիապես հագեցաված ժամանակակից ուսումնական աշխատանքային միջավայրի ստեղծումը՝ մագիստրոսների ու աշխատողների արդյունավետ գործունեությունը խթանելու նպատակով, մասնավորապես ուսումնական գործընթացի իրականացման նյութատեխնիկական պայմանների բարելավումը, ուսումնագիտական-լաբորատոր բազայի լսարանային ֆոնդի արդիականացումն ու վերազինումը:

Կենտրոնի կրթական ծրագրերի իրականացման նախադրյալները այս տեսանկյունից ապահովված են, ստեղծված է նրանց համար հագեցած գիտակրթական միջավայր: Իսկ ԳԿՄԿ վարչական մասնաշենքում ուսումնառության և այլ նպատակներով տրամադրված տարածքներն են՝

Թիվ	Կրթական գործունեության համար հատկացվող տարածքը	Տարածքի տնօրինման ձևը	Թիվը	Ընդհանուր մակերեսը /քառ. մ/
1	2	3	4	5
1.	Լսարաններ, այդ թվում	սեփական	48	1958
1.1	Դասախոսությունների համար	սեփական	30	1587
1.2	Գործնական և սեմինար	սեփական	19	421

	պարապունքների համար			
2.	Լաբորատորիաներ, ուսումնական և հնչյունային /լինգվաֆոնային/ կաբինետներ	սեփական	19	806
3.	Համակարգչային դասարաններ	սեփական	4	268
4.	Գրադարան, այդ թվում`	սեփական	30	14134
4.1	Գրապահոց	սեփական	12	6707
4.2	Ընթերցարաններ	սեփական	18	7427
5.	Վարչական	սեփական	18	359
6.	Օժանդակ	սեփական	5	92
	Ընդամենը		125	17667

Չորս համակարգչային լսարաններում տեղադրված են 17 Pentium III, I Pentium II, 40 Pentium IV և 3 Celerom համակարգիչներ, ինչպես նաև երեք համակարգչային լսարաններում` 28 հատ Dell Vostro 220 մոդելի համակարգիչներ: Յոթ լսարաններում տեղադրված են PROJECTOR ACER X1261 P մոդելի պրոեկտորներ:

<i>Գիտական կազմակերպություն</i>	<i>Հիմնական ն ֆոնդ</i>	<i>Պարբերական հրատարակչությ ուն</i>	<i>Փոխանակվ ան ֆոնդ</i>
Գիտակրթական միջազգային կենտրոն /ԳԱԱ ֆունդամենտալ գրադարան	3.000.000	1.500.000	90000
ԳԱԱ Ինֆորմատիկայի և ավտոմատացված պրոբլեմների ինստիտուտ	57300	30000	5000
ԳԱԱ Տնտեսագիտության ինստիտուտ	4500	4000	590
ԳԱԱ Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտ	9500	35	1000
ԳԱԱ Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտ	118749	97504	300
ԳԱԱ Պատմության ինստիտուտ	8100	650	2200
ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ	2100	20	300
ԳԱԱ Մեխանիկայի ինստիտուտ	10229	27309	-
ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ ԳԱԱ	34810	-	22190
ԳԱԱ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնային ինստիտուտ	10030	71306	
ԳԱԱ Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոն ԳԱԱ	1402	22	260
ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ	5000	12	1000
ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ	3000	10	1000

ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ	19118	21200	697
ԳԱԱ Լ. Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտ	33567	27419	296
Ընդամենը	3317405	1779487	124833

ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանը, որը պարբերաբար համալրվում է արդի մասնագիտական գրականությամբ, մշտապես Գիտակրթական միջազգային կենտրոնի ուսանողների տրամադրության տակ է, որը տեխնիկական հագեցվածությամբ և տեղեկատվության տրամադրման որակի առումով մոտ է միջազգային և եվրոպական չափանիշներին և ՀՀ առաջատար գրադարանն է, որը հանդիսանում է տարբեր ձևաչափով և գիտության տարբեր ճյուղերը արտացոլող մոտ երեք միլիոն ֆիզիկական փաստաթղթերի պահոց, թվային բովանդակության ստեղծման խորհրդատվական կենտրոն, գրադարանային գործի ոլորտում մասնագիտացած գրադարանավարներով, հայերեն, ռուսերեն, եվրոպական և արևելյան լեզուներով բազմաթիվ հավաքածուներ, հայ հնատիպ գրքերի հավաքածու սկսած 16-րդ դարից և հայ պարբերական մամուլի հավաքածու՝ սկսած 19-րդ դարից, տարբեր թվային պաշարների կուտակման հանգույց է, ԳԱԱ -ի ինստիտուտների գրադարանների հետ միասին գիտական հասարակայնության շրջանում գիտելիքի և հետազոտական աշխատանքների արդյունքները տարածող օղակ:

ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանն ունի 27 անհատական հավաքածու՝ ստեղծված գիտության և մշակույթի երախտավորների նվիրատվությունների հիման վրա, մասնագիտացված 3 ընթերցասրահ, անհատական ֆոնդեր, գրապահոցներ, տարեկան ավելի քան 17000 այցելու:

Գրադարանից օգտվողների համար հասանելի են նաև մի շարք ռեսուրսային բազաներ. Elibrary.ru, mathnet.ru, SPRINGER, EBSCO, DOAJ:

Գրադարանի տարածքում գործում է WIFI կապ: Գրադարանն ուսումնական ֆոնդի սպասարկումն իրականացնում է բաց դարակների սկզբունքով, որտեղ ընթերցողներն ընտրում են գրքերը գրադարակներից, ապա գրանցվում էլեկտրոնային համակարգում:

ԳԿՄԿ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումներում (որոնք, համաձայն վերլուծության արդյունքների, հիմնականում դրական են – [տե՛ս Հավելված 18](#)) գնահատվում է նաև ուսումնական միջավայրը՝ ուսումնական տարածքները, ուսումնասության ռեսուրսները և օժանդակ ծառայությունները, որոնց արդյունքների վերլուծությունն ու կարիքների վերհանումը հնարավորություն է ընձեռում հնարավորինս բարելավելու և կատարելագործելու նյութատեխնիկական բազան և ռեսուրսները, մատչելի դարձնել ուսանողական համակազմին ուսումնասության գործընթացն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով: Օրինակ՝ 2014 -2015 թթ ընթացքում Համաշխարհային բանկի նորարարությունների մրցակցային հիմնադրամի ֆինանսավորմամբ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում բացվել է առցանց ուսուցման սենյակ, որը վերազինվել է կրթության ժամանակակից պահանջներին համահունչ տեղեկատվական-տեխնիկական միջոցներով:

ԳԿՄԿ և այլ աղբյուրներից հատկացվող /օրինակ՝ դրամաշնորհներից/ միջոցներով վերանորոգվել և վերազինվել են լսարանային ֆոնդը, լսարանները հագեցվել են վիրտուալ գրատախտակներով և տեսածրող սարքերով՝ ուսանողների համար ապահովելով դասընթացների ընկանունակության առավել բարձր մակարդակ:

ՉՍՓՈՐՈՇԻՉ ք. ՄՈՒՀ-ը , իր առաքելությունն և նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:	
Հիմքեր	<u>Բյուջեի բաշխման նախագիծը տե՛ս հավելված 5-ում</u>

ԳԱԱ համակարգի գիտահետազոտական հաստատությունների կադրային, տեխնիկական և տարածքային հնարավորությունները լիարժեքորեն ապահովում են կրթական ծրագրերի արդյունավետ կազմակերպումը, իսկ ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանը, որը հանրապետության ամենամեծ գիտական գրադարանն է, ամբողջությամբ ԳԱԱ ԳԿՄԿ մագիստրոսների և ասպիրանտների տրամադրության տակ է:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ բյուջեն գոյանում է բազային ֆինանսական միջոցներից, արտաբյուջետային միջոցներից և գիտահետազոտական /թեմատիկ/ և դրամաշնորհային ծրագրերից:

Բյուջեի 2015 թ. բաշխվածությունը ներկայացված է հավելված 5-ում: Հաշվի առնելով ԳԿՄԿ առանձնահատկությունն այն իմաստով, որ ԳԿՄԿ-ն իր կրթական ծրագրերի իրականացնելիս օգտվում է ՀՀ ԳԱԱ գիտահետազոտական հաստատությունների /այդ թվում՝ ինստիտուտներ, կենտրոններ, գրադարան/ տեխնիկական, տարածքային և այլ ռեսուրսներից, ուստի տոկոսային տվյալներ համապատասխան տողերով նպատակահարմար չէ ներկայացնել, ուստի հավելվածով ներկայացված 2015 թ. նախահաշիվը վերաբերում է բացառապես ԳԿՄԿ բազային, արտաբյուջետային և թեմատիկ ֆինանսական մուտքերի բաշխվածությանը: Համաձայն թվային բաշխվածության տվյալների՝ այն բաշխված է համամասնորեն և համապատասխանում է հաստատության ռազմավարական նպատակներին:

ԶԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:	
Հիմքեր	Հաստատության կրթական նպատակների իրականացման համար ֆինանսական միջոցները կառավարելու և դրանք նպատակներին համապատասխան բաշխելու մեխանիզմները, Ֆինանսական միջոցներին համապատասխան հաստատության գործունեության պլանավորման, կառավարման և մշտադիտարկման քաղաքականությունը, Ֆինանսական միջոցների օգտագործման նպատակայնությունը երաշխավորող մեխանիզմները (աուդիտներ, հաշվետվություններ) – մշակման փուլում են:

ԳԿՄԿ-ում ֆինանսական միջոցները բաշխվում են քայլերի հետևյալ հաջորդականությամբ. բյուջեի նախագիծը կազմվում է տնօրենի, փոխտնօրենի և գլխավոր հաշվապահի կողմից՝ հիմքում ունենալով հաշվապահության կողմից հաշվարկված եկամուտները, կատարվելիք ընդհանուր ծախսերը (աշխատավարձ, սոցիալական վճարներ, պետական հարկեր, կոմունալ վճարումներ և այլն) և ԳԿՄԿ-ի ստորաբաժանումների կարիքներից բխող հայտերը:

Բյուջեի նախագիծը քննարկվում է ԳԿՄԿ-ի գիտական խորհրդի նիստում և հավանության արժանանալու դեպքում հաստատվում:

ԳԿՄԿ բյուջեի եկամուտները կենտրոնացվում են և այնուհետև բաշխվում ըստ նախահաշվի, աշխատավարձերի մասը՝ պրոֆեսորադասախոսական կազմի հաստիքների քանակի համապատասխան, անկախ այն հանգամանքից, թե դասախոսի ուսումնական բեռնվածությունը որ ամբիոնում է իրականացվում: Դասախոսի աշխատավարձի չափը որոշվում է համաձայն հաստիքի չափի, գիտական աստիճանի, կոչման և պաշտոնի: Գործում է նաև դասախոսների տարբերակված հավելավճարի համակարգը:

Յուրաքանչյուր ուստարվա ավարտին՝ ամբիոնները ԳԿՄԿ-ի ղեկավարությանն են ներկայացնում հաջորդ ուստարվա իրենց ուսումնական ծանրաբեռնվածությունները, որոնց հիման վրա էլ կատարվում է դասախոսների հաստիքների ձևավորումը և աշխատանքի վարձատրությունը:

Ռեսուրսների բաշխման մեխանիզմ է նաև առանձին ստորաբաժանումների հայտերի հիման վրա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումը:

ԳԿՄԿ գործունեության աուդիտի անցկացումը բխում է ՀՀ օրենսդրության պահանջից:

ԶԱՓՈՐՈՇԻՉ Պ. ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:	
Հիմքեր	<u>տե՛ս և Հավելված 3 ՈԱ ձեռնարկ, «ԳԿՄԿ կրթական ծրագրերի հաստատման կարգ», բաժին 2, էջ 48.</u> <u>Հավելված 13 - «ԳԿՄԿ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման կարգ»</u>

ԳԿՄԿ-ում կրթական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների պլանավորումը կատարվում է Կենտրոնի առանձին ստորաբաժանումների վարչական կազմի կողմից՝ սեփական կարիքների բացահայտման հիման վրա: Դրամաշնորհային ծրագրերի իրականացման ժամանակ ԳԿՄԿ-ն նախապես պլանավորում է ռեսուրսները՝ դրանց գնման գործընթացն ըստ օրենքի պահանջի (մրցույթի հայտարարում, մատակարարների ընտրություն և այլն) իրականացնելու համար:

ԳԿՄԿ կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների բացահայտման մեխանիզմներ կան նաև «ԳԿՄԿ կրթական ծրագրերի հաստատման կարգում», որը կարգավորում է նոր բացվող կրթական ծրագրերի ռեսուրսային ապահովվածության հետ կապված հարցերը: Մասնավորապես, նոր ստեղծվող ծրագրերի արտոնման գործընթացում տրվում է առաջարկվող ծրագրի ռեսուրսային ապահովվածության նախնական գնահատականը և բացահայտվում լրացուցիչ ռեսուրսների ձեռքբերման անհրաժեշտությունը (տե՛ս և Հավելված 3 ՈԱ ձեռնարկ, «ԳԿՄԿ կրթական ծրագրերի հաստատման կարգ», բաժին 2, էջ 48.):

Գործող կրթական ծրագրերի ռեսուրսային ապահովվածության գնահատման մեխանիզմ է հանդիսանում կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգը, համաձայն որի՝ մեկամյա պարբերականությամբ գնահատվում է նաև ծրագրի ռեսուրսային ապահովվածությունը, որի հիման վրա, անհրաժեշտության դեպքում, լրացուցիչ ռեսուրսների ձեռքբերման հայտերը հասցեագրվում են ԳԿՄԿ վարչակազմին (տե՛ս և Հավելված 3-ՈԱ ձեռնարկ, էջ 30, ինչպես նաև Հավելված 13 - «ԳԿՄԿ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման կարգ»):

Ռեսուրսների ձեռքբերումն իրականացվում է կենտրոնացված ձևով՝ բոլոր կրթական ծրագրերի համար համատեղ, իսկ դրանց բաշխումը՝ ըստ առանձին ծրագրերի ռեսուրսային կարիքների:

Ռեսուրսների պլանավորման և ձեռքբերման տեսանկյունից կարևորագույն փոփոխականը հանդիսանում է ուսանողների թիվը: Քանի որ ընդունելությունը կազմակերպվում է ըստ պլանավորված թվի, ուստի ռեսուրսների կարիքների կտրուկ ավելացումներ կամ նվազումներ, որպես կանոն, տեղի չեն ունենում: Այդուհանդերձ, ուսանողների թվի որոշակի ավելացման դեպքում էլ Կենտրոնը կարողանում է համապատասխան քանակի ռեսուրսներ ապահովել, օրինակ՝ լրացուցիչ ծանրաբեռնել դասավանդողներին կամ նոր դասավանդողներ ընդունել աշխատանքի:

ԶԱՓՈՐՈՇԻՉ Ե. ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:	
Հիմքեր	www.isec.am ԳԿՄԿ տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարումն իրականացվում է հետևյալ գործիքամիջոցներով.

	<p>Էլեկտրոնային տեղեկատվական կառավարման համակարգով (որի գործիքամիջոցներին կարելի է ծանոթանալ տեղում գործնական կիրառելիության գործընթացում), ԳԿՄԿ կայքէջով, վարչական գործընթացների ավտոմատացման համակարգով:</p>
--	--

ԳԿՄԿ-ում ստեղծվել է միասնական կենտրոնական տեղեկատվական համակարգ և ապահովել վերջինիս մատչելիությունը ուսանողների և աշխատակիցների համար: Տեղեկատվական ռեսուրսների ժամանակակից չափանիշներին համապատասխան զարգացումը և դրանց արդյունավետ օգտագործման ու մատչելիության ապահովումը ևս ռազմավարական խնդիր է, որի լուծման ուղղությամբ տարվել և տարվում են համապատասխան աշխատանքներ (տե՛ս Հավելված 1- Գիտակրթական միջազգային կենտրոնի ռազմավարական ծրագիրը, մաս 1, նպ. 5, էջ 8):

ԳԿՄԿ տեղեկատվության տարածումն ու կառավարումն իրականացվում է հետևյալ գործիքամիջոցներով. Էլեկտրոնային տեղեկատվական կառավարման համակարգով, ԳԿՄԿ կայքէջով, վարչական գործընթացների ավտոմատացման համակարգով:

ԳԿՄԿ-ում տեղեկատվության հավաքման և կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով 2014 թ-ից ներդրվել է տեղեկատվության կառավարման բազմաֆունկցիոնալ ցանցային համակարգը, որն ունի հետևյալ բաժինները. ուսանողներ, դասացուցակ, քննական և ստուգարքային տեղեկագրեր, ակադեմիական տեղեկագիր, աշխատանքային ուսումնական պլան, ամբիոնային և անհատական բեռնվածություններ, ուսանողական հարցումներ, դիպլոմի հավելված, շրջանավարտների տվյալներ, որոնում և այլն: ԳԿՄԿ կայքէջում զետեղվում են. 1) կանոնադրությունները, կանոնակարգերը և կարգերը, հայեցակարգերը, այլ նորմատիվ փաստաթղթեր, տարբեր մրցութների վերաբերյալ հայտարարություններ և այլն: Տեղեկատվության տարածման նպատակով ԳԿՄԿ-ում գործում է հանրային կապերի հայեցակարգը /Տե՛ս Հավելված 22/:

Պետք է նշել, որ այս գործընթացները ԳԿՄԿ-ում դեռևս նոր-նոր են սաղմնավորվում, 2014 թ. ընթացքում Որակի ապահովման ներբուհական համակարգի մեխանիզմների մշակման շրջանակներում բազմաթիվ կանոնակարգեր և կարգեր են մշակվել, մի շարք կանոնակարգեր էլ ենթարկվել են մշակման և բարելավման: 2015 թ.-ից սկսել է գործել ԳԿՄԿ նոր կայք-էջը, որն առավել ինտերակտիվ է, տեղեկատվական, առավել գրավիչ և նոր դիզայնով:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Գ. ՍՈՒՀ-ը ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

<p>Հիմքեր</p>	<p>Առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայություններն ապահովող անձնակազմի և դրա անդամների աշխատանքային նկարագրերը մշակման փուլում են:</p>
---------------	--

ՀՀ ԳԱԱ համակարգի ինստիտուտներում գործող առողջության և անվտանգության պահպանման ենթակառուցվածքները /պահակային և պարետային ծառայություններ, ժօգնության ծառայություն/ անվտանգության համակարգեր, առաջին շտապօգնության և բուժ և այլն/ ծառայում են նաև ԳԿՄԿ ուսանողական և պրոֆեսորադասախոսական համակազմին: Կենտրոնում պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողների և աշխատակիցների անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումներն են՝

- կենտրոնի համապատասխան վայրերում հակահրդեհային գույքի առկայության ապահովումը և դրա պարբերաբար ստուգումը,
- կենտրոնի մասնաշենքերի, գույքի հակահրդեհային պաշտպանության իրականացումը,

- կենտրոնի տարածքում պրոֆետրադասախոսական, ուսանողական կազմի և աշխատակիցներին տարահանման պլաներին ծանոթացումը,
- բնական աղետների և արտակարգ իրավիճակների ժամանակ պրոֆետրադասախոսական կազմի, ուսանողների, աշխատակիցների անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ հրահանգումը,
- կենտրոնում հերթապահության ապահովումը և կատարված ընթացիկ աշխատանքների ստուգումը:

Կենտրոնի տարածքը վերահսկվում և նկարահանվում է տեսախցիկների միջոցով շուրջօրյա ռեժիմում, իսկ տեղեկատվությունը գրանցվում է սերվերների վրա:

Առողջության և անվտանգության (հաշվի առնելով առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսումնառողներին) պահպանմանն ուղղված ծառայությունների քաղաքականությունն ու ընթացակարգերը դեռևս մշակված չեն, դեռևս նոր-նոր են այս ուղղությամբ աշխատանքներ ձեռնարկվում:

Նախատեսվում է առաջիկայում շահակիցների կարիքների վերաբերյալ տեղեկատվության ձեռքբերման նպատակով իրականացնել հարցումներ անվտանգ միջավայրի, առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների վերաբերյալ:

ԶՄՓՈՐՈՇԻՉ Է. ՄՈՒՅ- ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:	
Հիմքեր	<p>- Հավելված 38</p> <p>Հավելված 13 - «ԳԿՄԿ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման կարգը»,</p> <p>Հավելված 27 -Կանոնակարգ</p> <p>ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի դեկանատի գործունեության</p>

Կրթական գործընթացների կարգավորմանն ուղղված ծրագրերից են 2014 թ-ից ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ՈԱ Բաժնի կողմից կազմակերպվող և անցկացվող հարցումները, որոնք վերաբերում են նաև առկա նյութատեխնիկական ռեսուրսներից բավարարվածության, դրանց հասանելիության և արդյունավետության և այլնի մասին: Որպես գործիքներ՝ կիրառվում են տարաբնույթ հարցումները (Հարցաթերթիկների նմուշները առկա են ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ Որակի ապահովման ձեռնարկում – /[Հավելված 3, էջ 103-120](#)/), հանդիպումները, քննարկումներ և հետադարձ կապն ապահովող այլ մեխանիզմներ, որոնց հիման վրա պարբերաբար վերանայվում և բարելավվում են կրթական ծրագրերը և տրամադրվող ծառայությունները: Օրինակ՝ թարմացվել են համակարգչային լսարանները, ձեռք են բերվել նոր ժամանակակից համակարգիչներ և սարքավորումներ, ավելացվել են ինտերակտիվ գրատախտակներ և տեսաձայն սարքերը, համալրվել է անվտանգության համակարգը, Կենտրոնը ամբողջությամբ ապահովվել է անլար կապի WIFI ծածկույթով:

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնը 2014 թ. սկզբին պայմանագիր է կնքել զբոսաշրջության ոլորտում միջազգային ճանաչում ունեցող AMADEUS ընկերության հետ /<http://www.isec.am/articles/news/contract-with-amadeus-company.html> /, որը հիմնադրվել է 1987թ.: Համակարգը ապահովում է ավիատոմսերի, հյուրանոցների, ավտոմեքենաների վարձակալության ամրագրում: AMADEUS ցանցի միջոցով հնարավորություն է ընձեռնվում մուտք գործել շուրջ 104 հազար տուրիստական ընկերությունների, 36 հազար տարբեր ավիաընկերությունների ավիատոմսերի ամրագրման և վաճառքի համակարգեր, ինչպես նաև ստանալ ամբողջ աշխարհի ավիաընկերությունների չվերթներում առկա տեղերի քանակի 95%-ի

վերաբերյալ տեղեկատվություն: ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնը համագործակցության վերաբերյալ պայմանագիր է կնքել AMADEUS-ի Ռուսաստանի Դաշնության կենտրոնի հետ/տես պայմանագիրը – Հավելված 32/, որի շնորհիվ տուրիզմի կառավարում բաժնի ուսանողները հնարավորություն են ստացել մուտք գործել AMADEUS համակարգ՝ ծրագրով աշխատելու համար: Միաժամանակ Կենտրոնի աշխատակիցները և դասախոսները մասնակցել են վերապատրաստման դասընթացների և ստացել համապատասխան հավաստագրեր AMADEUS ծրագրով աշխատելու վերաբերյալ:

ՉԱՓԱՆԻՇ 7-Ի SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ul style="list-style-type: none"> • ՀՀ ԳԱԱ-ի հարուստ նյութատեխնիկական բազայի օգտագործում, • Նյութատեխնիկական բազայի արդիականացման և ֆինանսական մուտքերի ռազմավարական պլանավորում • Տեղեկատվական լայնածավալ բազաների առկայություն, դրանց ճկուն օգտագործում • ԳԱԱ առողջարանային համալիրի առկայություն պրոֆեսորադասախոսական կազմի հանգստի կազմակերպման համար մատչելի սակագներ 	<ul style="list-style-type: none"> • Առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների քաղաքականություն ու ընթացակարգերը ԳԿՄԿ-ում դեռևս մշակված չեն: • Լաբորատոր սարքավորումների նորացման համար Կենտրոնի միջոցների սակավություն: • Կենտրոնի հանրակացարանի բացակայություն: • Կոմունալ հարմարությունների բարոյապես մաշվածություն: • Բուժապասարկման ծառայությունների բացակայություն: • Ուսումնական վարձավճարի ոչ կանոնավոր վճարումներ:
Հնարավորություններ	Վտանգներ
<ul style="list-style-type: none"> • Գործարար միջավայրի հետ փոխշահավետ համագործակցություն՝ ենթակառուցվածքները առավել արդիական նյութատեխնիկական բազայով և սարքավորումներով վերազինելու համար: • Ուսանողական համակազմի ավելացում, լրացուցիչ կրթության (այդ թվում՝ հեռավար)՝ վճարովի ծառայությունների ավելացում: 	<ul style="list-style-type: none"> • Պետբյուջեից հատկացվող միջոցների ոչ կանոնավոր տրամադրում: • Արտարժույթի անկանխատեսելի փոփոխություն: • Հաճախակի փոփոխություններ օրենսդրական դաշտում:

Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:

Նախատեսվում է թույլ կողմերի և վտանգների հաղթահարման ուղղությամբ իրականացնել հետևյալ քայլերը.

- Սոցիալական ծառայությունների քաղաքականության և ընթացակարգերի մշակում և կիրարկում:
- Կենտրոնի՝ ժամանակավոր կացարանի անհրաժեշտություն ունեցող պրոֆեսորադասախոսական համակազմի և ուսանողության համար աջակցության մեխանիզմների որոնում:

- Ուսումնական վճարների կանոնակարգման մեխանիզմների արդիականացում:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Հասարակության մտավոր, կրթական, տնտեսական, գիտական և մշակութային առաջընթացին աջակցում, հասարակության հետ կապերի շարունակական զարգացում և հանրային ծրագրերում Կենտրոնի առավելագույնս ներգրավվածություն, սոցիալական համագործակցության համակարգի զարգացում, սոցիալական ոլորտի գործընկերների շրջանակի ընդլայնում. հանրային կարիքներին ուղղված տեղական, տարածաշրջանային և համազգային ծրագրերում Կենտրոնի ներգրավվածության ապահովում, հիմնական գործատու կազմակերպությունների և հանրային կառույցների հետ համագործակցային կապերի ստեղծում, ԳԿՄԿ – աշխատաշուկա փոխկապակցության գործուն համակարգի ստեղծում ԳԿՄԿ-ի շրջանավարտների և կարիերայի կենտրոնի կարողությունների զարգացում /Տե՛ս ՌԾ, էջ 11-12 – Հավելված 1/:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:

<p>Հիմքեր</p>	<p>Շահակիցների առջև հաշվետվողականությունն ապահովող քաղաքականությունը, ընթացակարգերը և մեխանիզմները մշակման փուլում են:</p> <p>Հասարակությանը տրամադրվող ծառայությունների ռազմավարական նպատակները և քաղաքականությունը մշակման փուլում է, թեև մասնագիտական զարգացման/վերապատրաստման դասընթացներ, խորհրդատվական ծառայություններ, օժանդակում հանրակրթական հաստատություններին, միջավայրի բարելավմանը միտված գործունեություններ Կենտրոնում իրականացվում են:</p> <p>Տարեկան հաշվետվություններ</p>
---------------	--

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ն՝ որպես ազգային և տարածաշրջանային դերակատարությամբ գիտակրթական և գիտամշակութային հաստատություն, իր գործունեությամբ հաշվետու է հասարակությանը և իր հիմնադրին՝ Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս ՀՀ ԳԱԱ-ի: Սույն պահանջը սահմանվում է Կենտրոնի կանոնադրությամբ:

Պետության, հասարակության և մյուս շահակիցների առջև Կենտրոնն իր իրականացրած գործունեության, տրամադրած կրթության և օգտագործած ռեսուրսների վերաբերյալ հաշվետվողականությունն ապահովում է սահմանված ձևաչափերով՝ ՀՀ ԳԱԱ նախագահության, բաժանմունքների, ամբիոնների ուսումնական և գիտական տարեկան հաշվետվությունների, ինչպես նաև՝ վարչատնտեսական ստորաբաժանումների հաշվետվությունների հիման վրա ձևավորվող մեկ ընդհանուր տարեկան հաշվետվության միջոցով, որն արտացոլում է պլանավորած ու փաստացի արդյունքների համապատասխանությունը: Հաշվետվությունը ԳԿՄԿ տնօրենը ներկայացնում է ՀՀ ԳԱԱ նախագահությանը, որը հետագայում տպագրվում է ՀՀ ԳԱԱ տարեկան զեկույցներում, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Գիտական և Գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքների մասին հաշվետվությունում, որը տպագրվում է և բաշխվում ներքին և արտաքին շահակիցներին /տե՛ս [հավելված 6](#)/:

Յուրաքայտուր տարեվերջ կենտրոնը ներկայացնում է նաև տարեկան ֆինանսական եկամուտների և ծախսերի հաշվետվությունը, որի ներկայացման ժամանակացույցը սահմանված է ՀՀ հարկային օրենսդրությամբ:

Այս երկու հաշվետվությունները թույլ են տալիս հստակ պատկերացում կազմել կենտրոնի ընթացիկ տարվա գործունեության արդյունքների վերաբերյալ և գնահատել դրանց իրականացման կատարողականը՝ տարեկան կտրվածքով: Բացի այդ վեր են հանվում բացթողումներն և անկատար աշխատանքները, ինչը թույլ է տալիս պլանավորել հաջորդ տարվա բարելավման գործողությունները:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ք. ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը:	
Հիմքեր	www.isec.am , (https://www.facebook.com/?ref=tn_tnmn#!/groups/161969827218660/ , https://www.facebook.com/?ref=tn_tnmn#!/pages/International-Scientific-Educational-Center-of-NAS-RA/143649849055534) , http://www.isec.am/science/in the world of science.html), http://www.isec.am/science/scientific-publications.html), ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ և ՀՀ ԳԱԱ տարեկան հաշվետվություններ – Հավելված 6 , ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ էլեկտրոնային կառավարման համակարգ

Վերլուծել հասարակությանը հաշվետվողականությունն ապահովող մեխանիզմների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Կենտրոնի հիմնական նպատակներից է գիտակրթական գործընթացի անընդհատության, թափանցիկության և հրապարակայնության ապահովումը, ինչպես նաև տեղեկատվական ռեսուրսների բազմազանության ապահովումը և հասանելիությունը ներքին և արտաքին շահակիցներին:

Կենտրոնն իր գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը, կանոնակարգային և ընթացակարգային փաստաթղթերը, նորությունները և հայտարարությունները հասարակության լայն շրջանակներին, այդ թվում նաև՝ ներքին շահակիցներին հասցնելու նպատակով օգտագործում է մի շարք մեխանիզմներ, դրանք են.

- Կենտրոնի էլեկտրոնային կայք (www.isec.am), որտեղ պարբերաբար տեղադրվում են նյութեր ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի ուսումնական գործընթացների, նոր մասնագիտությունների, Գիտակրթական միջազգային կենտրոնի ձեռքբերումների, ուսանողների իրականացրած միջոցառումների, միջազգային համագործակցության և այլնի վերաբերյալ:
- Ֆեյսբուքյան էջեր և համանուն խումբ
[\(https://www.facebook.com/?ref=tn_tnmn#!/groups/161969827218660/](https://www.facebook.com/?ref=tn_tnmn#!/groups/161969827218660/),
<https://www.facebook.com/vle.isec/>
[https://www.facebook.com/?ref=tn_tnmn#!/pages/International-Scientific-Educational-Center-of-NAS-RA/143649849055534\)](https://www.facebook.com/?ref=tn_tnmn#!/pages/International-Scientific-Educational-Center-of-NAS-RA/143649849055534),
 ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ թվիթերի էջ՝ https://twitter.com/GAA_GKMK?lang=en
 որոնք պարբերաբար համալրվում են բազմաբնույթ տեղեկատվությամբ:
- Յութուբյան ալիք, որտեղ տեղակայված են ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գործունեությունը լուսաբանող տեսանյութեր և հաղորդումներ, որոնք էթեր են հեռարձակվել տարբեր ժամանակներում էլեկտրոնային տարբեր ՁԼՄ-ներով.
<https://www.youtube.com/channel/UCr30ocTlbrCUmFgKrRp4csg>

- «Գիտության աշխարհում» (http://www.isec.am/science/in_the_world_of_science.html) գիտահանրամատչելի հանդես, որտեղ գիտության բնագավառի վերջին ձեռքբերումներն ու նորությունները հանրամատչելի կերպով մատուցվում են հանրությանը, ներառյալ՝ Գիտակրթական միջազգային կենտրոնի պրոֆեսորադասախոսական կազմին և ուսանողությանը:
- «Գիտական հոդվածների ժողովածու» (<http://www.isec.am/science/scientific-publications.html>) գիտական տարեգրքում տպագրվում են ինչպես ԳԿՄԿ, այնպես էլ հանրապետության առաջատար գիտահետազոտական հաստատությունների և կենտրոնների պրոֆեսորադասախոսական համակազմի, ասպիրանտների և մագիստրանտների գիտական հոդվածները /Գիտական հոդվածների ժողովածու-տարեգիրքը ներառված է ՀՀ ԲՈՀ-ի կողմից ընդունելի թեկնածուական և դոկտորական աստենախոսությունների համար նախատեսված պարբերականների ցուցակում/
- Ուսումնական աշխատանքների կազմակերպման և կառավարման էլեկտրոնային համակարգ, որը հնարավորություն է տալիս ապահովելու տվյալների հավաքագրման, պահպանման, վերլուծման, մեկնաբանման տարածման գործընթացները՝ կրթական համակարգի որոշումներ կայացնողներին անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովելու նպատակով
- Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք, որը 2014 թ. վերանշակվել է և հասանելի է ուսանողներին և ներքին ու արտաքին այլ շահեկիցներին էլեկտրոնային և առցանց տարբերակներով: Այն ամբողջական տեղեկատվություն է տրամադրում Կենտրոնում ուսման կազմակերպման, կրթական ծրագրերի ու առանձին դասընթացների վերաբերյալ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:	
Հիմքեր	Հանրային կապերի հայեցակարգ –Հավելված 22 ((https://www.facebook.com/?ref=tn_tnmn#!/groups/161969827218660/), · https://www.facebook.com/vle.isec/ · https://www.facebook.com/?ref=tn_tnmn#!/pages/International-Scientific-Educational-Center-of-NAS-RA/143649849055534)

Կենտրոնում գործում է հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ: Ցանկացած հասարակական կազմակերպության, միջազգային, թե տեղական կազմակերպության հետ համագործակցելիս տվյալ կազմակերպությունը պարբերաբար և կանոնավոր կերպով կապի մեջ է լինում թե տվյալ բաժնի, թե Կենտրոնի կազմում գտնվող այլ բաժինների հետ: ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ունենալով պաշտոնական ինտերնետային կայք, ֆեյսբուքյան էջ և ԳԿՄԿ Ուիս-ի ֆեյսբուքյան էջ, ամեն օր թարմացվում և տեղադրվում են տարատեսակ տեղեկություններ, հայտարարություններ, միջոցառումների հրավերները և ԳԿՄԿ –ում տեղի ունեցող միջոցառումները լուսաբանված նյութերը: ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ վեբկայքը ունի հետադարձ կապի բաժին, որի միջոցով շահակիցները հղում են իրենց հուզող հարցերը և սեղմ ժամկետներում ստանում համապատասխան պատասխան: Հետադարձ կապն առավել ակտիվ է մասնավորապես ընդունելության ժամանակահատվածում՝ շաբաթական միջինը 10 էլ-նամակ- հարցում:

Անհրաժեշտության և ցանկալի փոխհամագործակցության արդյունք ապահովելու նպատակով տվյալ կազմակերպության հետ քննարկվում է խնդիրը, որից հետո անհրաժեշտության դեպքում նրանց է տրամադրվում արխիվային նյութերից, որը կարող է լինել ուսանողների զբաղվածության մակարդակի տոկոսային հարաբերակցության վերաբերյալ

նյութեր՝ ըստ ուսումնական տարեթվերի , որի հիման վրա էլ հետագայում կառուցվում և իրականացվում է ուսանողի զբաղվածությունը:

ԶՄՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքի (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:	
Հիմքեր	<p>ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի կիրառական հոգեբանության կենտրոնի կանոնադրություն – Հավելված 28 Հեռավար շարունակական լրացուցիչ կրթության տրամադրում՝ https://vle.sci.am Հասարակությանը մատուցվող լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների ներքին և արտաքին գնահատման գործիքները մշակման փուլում են:</p>

Վերլուծել հաստատության կողմից լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների իրականացման արդյունավետությունը և արդիականությունը:

2013թ. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում մեկնարկեց ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնում լրացուցիչ հեռավար շարունակական կրթության կազմակերպում ծրագիրը, որի հիմնական նպատակն է՝ շարունակական կրթության համատեքստում հեռավար լրացուցիչ կրթության կազմակերպումը ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում, որը նախատեսվում է իրականացնել հեռավար ուսուցման հարթակի կատարելագործմամբ և դրա արդյունավետ կիրարկմամբ: Պարմայի համալսարանը դարձավ սույն ծրագրի ռազմավարական գործընկերը:

Ծրագրի շրջանակներում անցկացվեց թեյնինգավարների և/կամ դասախոսների վերապատրաստում (TOT-training of trainers) արտերկրի գործընկեր համալսարաններում՝ Պարմայի համալսարանում և Աթենքի ազգային տեխնիկական Կենտրոնի Էլեկտրոնիկայի և համակարգչային համակարգերի ինստիտուտում:

Կենտրոնի դասախոսները սովորեցին կազմել ծրագրեր հեռավար ուսուցման համար, որոնք տրամադրվեցին ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ին՝ հեռավար ուսուցման հարթակում տեղադրելու և ազատ կիրարկելու համար /<https://vle.sci.am/>: Ծրագրով նաև ստեղծվեց առցանց գիտաժողովի դահլիճի, որտեղ ուսանողները հնարավորություն ունեն լսելու դասախոսություն արտերկրի և տեղի առաջատար մասնագետների կողմից:

Ընդհանուր առմամբ, այս ծրագրի բարեհաջող իրագործումը լուծեց մի շարք խնդիրներ, մասնավորապես. ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնում ներդրվեց զարգացած և տեխնիկապես ապահովված հեռավար ուսուցման հարթակ, ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնում ստեղծվեց հեռավար կրթություն անցկացնելու համար տեխնիկապես հարմար և վերազինված լսարան և առցանց գիտաժողովի դահլիճ, ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի մասնագետները վերապատրաստվեցին արտասահմանյան գործընկեր հեղինակավոր բուհերում, կազմվեցին համապատասխան ուսանողակենտրոն ուսումնական ծրագրերի ցանկ, ձեռք բերվեց համապատասխան նորագույն մասնագիտական գրականություն, ընտրված ծրագրերը և հարակից նյութերը տեղադրվում են ՀՀ ԳԱԱ հեռավար ուսուցման հարթակում, ինչպես նաև հայերեն թարգմանվեց [«ՄՈՒՂ» հեռավար ուսուցման հարթակ. Դասախոսների և ուսանողների ուղեցույցը](#):

2014 թ. դեկտեմբերին մեկնարկեցին 20 հեռավար դասընթաց, որոնց մասնակցեցին մոտ 750 դիմորդ, իսկ 2015թ. մարտի 25-ին ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնում տեղի ունեցավ հեռավար դասընթացների հավաստագրերի շնորհումը դասընթացների շրջանավարտներին, որտեղ 70% և բարձր առաջադիմությամբ մոտ 250 հեռավար դասընթացների շրջանավարտ ստացան հավաստագրերը /տես՝ [ծրագրի բուկլետ](#)/: Սույն ծրագրի

շրջանակներում 13 ԳԿՄԿ դասախոսներին շնորհվեց հավաստագրեր «Ինչպես կազմել դասընթաց MOODLE հեռավար հարթակում» դասընթացից, ինչպես նաև այլ դասախոսներ մասնակցեցին իրենց մասնագիտական վերապատրաստմանը նպաստող դասընթացներին:

2013թ. ՀՀ Ազգային ժողովի հետ կնքվեց վերապատրաստման ծառայությունների մատուցման պայմանագիր, որի շրջանակներում ՀՀ Արտաքին կապերի բաժնի պետը և գլխավոր մասնագետը անցկացրեցին ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի անգլերեն լեզվի վերապատրաստում /տես՝ պայմանագիրը – Հավելված 32/:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կազմում գործում է նաև «Հոգեբանական դիտարանը», որը ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ հոգեբանության ամբիոնի պրակտիկ աշխատանքների բազային կենտրոնն է, որի ծառայություններից օգտվում են հոգեբանական աջակցության կարիք ունեցող հասարակական կյանքի տարբեր ոլորտների ներկայացուցիչներ և

որտեղ քննարկվում են հասարակական կյանքի տարբեր ոլորտներում առկա հոգեբանական հիմնախնդիրներ՝ դասընթացների ընթացքում ձեռքբերված տեսական գիտելիքները վերածելով գործնական հմտությունների, իրականացվում են հոգեբանական ծառայություններ ու մասնագիտական թրեյնինգներ /մանրամասները՝ http://www.isec.am/hogebanakan_ditaran/:

Կարևորելով և արժեքավորելով ուսանողներ գիտական, մտավոր, հոգևոր և ժամանցային հագեցվածությունն ու զարգացվածությունը, որոնք միտված են ազգայահայասնան արեժքների դաստիարակությանն, ամրապնդմանն ու տարածմանը՝ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ի ուսանողների և շրջավարտներ հետ տարվող աշխատանքների համակարգող բաժնի կողմից պարբերաբար փորձի փոխանակում ձեռք բերելու նպատակով կազմակերպվում են սեմինարներ, նեղ մասնագետների հետ հանդիպումներ, թեմատիկ քննարկումներ և պատմական, գիտահանրամատչելի, գեղարվեստական ժանրի ֆիլմերի դիտումներ: Հյուրերից են եղել նախկին արտգործնախարար Վարդան Օսկանյանը, Արտյոմ Երկանյանը՝ «Թոռներ հանդիպում» ֆիլմով, Մարքեթինգի ասոցիացիայի նախագահ Արամ Նավասարդյանը, Անեթ Շամիրյանը «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» ՀԿ, Ջինա Մարկիստովան ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի UNFPA գեղարվեստային բռնությունների դեմ կովկասյան տարածաշրջանի ծրագրի ղեկավար, Կոմիտաս վարդապետը, Տեր Եսայի քահանա Արթենյանը՝ հոգևոր կրթություն թեմայով, ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության պետ Սեդրակ Սեդրակյանը՝ «Հայրենասիրության դասեր» սեմինարով և ուրիշներ:

Համագործակցելով Հայաստանի պետական ֆիլիարմոնիկ, Հայաստանի պետական երիտասարդական և Հայաստանի պետական կամերային նվագախմբերի, ինչպես նաև Երևանի մի շարք թատրոնների, ցուցասրահների տնօրինության հետ, ամեն շաբաթ անվճար մեր ուսանողները հաճախում են դասական համերգների, ներկայացումների և ցուցահանդեսների:

Ուսանողության միջազգային օրվան նվիրված կազմակերպվում է «Հայաստանը դու ես» խորագրով ցուցահանդես, որտեղ բացահայտվում են տարբեր բաժինների տաղանդավոր ուսանողների մասնագիտական հմտություններն ու կարողությունները: Ավարտին տրվում են խրախուսական մրցանակներ և պատվոգրեր:

Ամիսը 2 անգամ կիրակի օրերին կազմակերպվում են Հայաստանի տեսարժան վայրերով ճանաչողական արշավներ՝ գիղերի և պատմաբան ուսանողների ուղեկցությամբ: Այսօրինակ արշավների բազմաբովանդակ և օգտակար լինելու փաստն արտահայտվում է շարունակականությամբ՝ միախառնված հայրենասիրության, ազգային արժեքների պահպանման գաղափարի բարձրացմամբ և նոր ընկերներ, ծանոթների ձեռքբերմամբ:

Կենտրոնը պայմանավորվածություն է ձեռք բերել FYCA երիտասարդական ակումբի հետ, որը ինտելեկտի և տաղանդավոր ուսանողներին հնարավորություն է տալիս աշխարհի մի շարք երկրներում մասնակցել ամենատարբեր սեմինարների, կոնֆերանսների, իրենց փորձով կիսվել այլ ազգերի ուսանողների հետ և իրականացնել իրենց ոչ ֆորմալ կրթությունը:

ՉԱՓԱՆԻՇ 8-Ի SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ul style="list-style-type: none"> • Դասավանդման արդյունավետության և որակի վերաբերյալ ուսանողական հարցումների և ԳԱԱ ԳԿՄԿ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումների արդյունքների ամենամյա վերլուծությունների առկայություն, որոնց շնորհիվ նաև հաշվվի է առնվում ուսսանողության կարծիքը: • Ուսումնական աշխատանքների կազմակերպման և կառավարման էլեկտրոնային համակարգի առկայություն, որը մատչելի է դարձնում ուսումնական գործընթացին առնչվող տվյալների մեծածավալ բազան, հնարավորություն է տալիս ուսումնառության վերաբերյալ ամփոփ հաշվետվությունների կազմմանը և ստացմանը: • Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցի և դասընթացների տեղեկագրքի առկայություն: • ԳԿՄԿ թարմացված, նորացված կայքէջում (www.isec.am) պարբերաբար տեղադրվող տեղեկատվություն: • Ուսանողական համակարգի վերաբերյալ քանակական և որակական տվյալների և ուսանողների առաջադիմության ցուցանիշների կանոնավոր հավաքագրումը: • Ամբիոնների ուսումնական և գիտահետազոտական գործունեության գնահատման նպատակով պարբերաբար իրականացվող ներքին ստուգումներ: • Հաշվետվողականության ներկայացման մեկ ընդհանուր ստանդարտացված ձևաչափ: • Կենտրոնի սեփական գովազդային 	<ul style="list-style-type: none"> • Կենտրոնի կայքի ինտերակտիվության բացակայություն: • Լրացուցիչ կրթության համակարգում ընդգրկված մասնակիցների դեռևս ոչ բավարար քանակ: • Կենտրոնի նկատմամբ ունեցած հասարակական կարծիքի ուսումնասիրման մեխանիզմների բացակայություն: • Կենտրոնի PR արդյունավետության որակական գնահատման գործիքի բացակայություն: • ԳԱԱ ամսագրերում և հանդեսներում ուսանողների ներգրավվածության ցածր մակարդակ: • Հասարակության հետ կատարած աշխատանքների գնահատման մեխանիզմների անկատարություն:

<p>միջոցների առկայություն (պաշտոնական կայք, ներկայացվածություն սոցցանցերում, տեղեկատվական բուկլետներ և այլն):</p> <ul style="list-style-type: none"> • Հաշվետվությունների, ընթացակարգային փաստաթղթերի հասանելիություն և թափանցիկություն: • Տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունավետ կիրառում ինֆորմա- ցիայի փոխանակման գործում: • Համագործակցություն տեղական և մարզային ՁԼՄ-ների հետ: • ԳԱԱ գիտնականների հողվածների հրապարակում տեղական և միջազգային հանդեսներում: 	
Հնարավորություններ	Վտանգներ
<ul style="list-style-type: none"> • Տեղեկատվական նոր տեխնոլոգիաների, մասնավորապես, սոցցանցերի և կայքէջի միջոցով Կենտրոնի գործունեության ներկայացման անսպառ հնարավորություն: • Տեղական և տարածաշրջանային հանրային ծրագրերում և ծառայություններում ներգրավվածություն: • Ռազմավարական գործակցություն արտադրական ձեռնարկությունների հետ: • Կադրերի համալրման նպատակով մասնավոր սեկտորի ներկայացուցիչների ուշադրության բևեռում դեպի Կենտրոն • Գիտական պարբերականների հա-րուստ և ազդեցիկ հավաքածու: 	<ul style="list-style-type: none"> • Ավարտած մագիստրոսների աշխատատեղերի բացակայություն • Աշխատատեղերի բացակայության պարագայում երիտասարդ կադրերի արտահոսք • Սոցցանցերում ինֆորմացիայի լիարժեք վերահսկողության անհնարինություն: • Որոշ մասնագիտությունների նկատմամբ հանրության սոցիալական պատվերի նվազում: • Հասարակության անտարբերություն տեղեկատվության ոլորտում ԳԱԱ- ում ընթացող գործընթացների նկատմամբ: • ՁԼՄ-ների կողմից կրթական ոլորտի լուսաբանման նկատմամբ ոչ բավարար հետաքրքրվածություն:

Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:

Նախատեսվում է թույլ կողմերի և վտանգների հաղթահարման ուղղությամբ իրականացնել հետևյալ քայլերը.

- Կենտրոնի կայքի շարունակական արդիականացում:
- Կենտրոնի ուսումնական գործունեության, ինչպես նաև լրացուցիչ կրթության վերաբերյալ կենտրոնում իրականացվող աշխատանքների հանրայնացում և պոտենցիալ մասնակիցների ներգրավվածությանն ուղղված աշխատանքներ, PR աշխատանքների իրականացում:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Կենտրոնի հետազոտական աշխատանքների միջազգայնացման գործընթացների, Եվրոպական հետազոտական տարածքին ինտեգրման խթանում, միջազգային կապերի ընդլայնում, Եվրոպական համալսարանների և բարձրագույն կրթության միջազգային կառույցների հետ կրթական և գիտական համագործակցության, միջազգային փոխանակման ծրագրերին ուսանողների և գիտամանկավարժական կազմի մասնակցության խթանում: Ամբիոնների կրթական ծրագրերում հրավիրյալ օտարերկրյա դասախոսների մասնակցության ընդլայնման համար նպաստավոր պայմանների ստեղծում, արտասահմանյան առաջատար բուհերի ու գիտակրթական կենտրոնների հետ ակադեմիական միություններում և ցանցերում ներգրավում /Տե՛ս ՌԾ, էջ 9/:

ՉԱՓՈՂՈՇԻՉ ա. Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:

Հիմքեր	<p>ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ՌԾ. 2014-2018թթ. Հավելված 1 Հավելված 7- «ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ արտաքին կապերի բաժնի կանոնադրություն» Արտաքին կապերի և միջազգայնացման հաշվետվություն – Հավելված 32</p>
--------	--

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ՌԾ-ի համաձայն, Արտաքին կապերի բաժնի առջև դրված խնդիրներից են՝ միջազգային կապերի ընդլայնումը, Եվրոպական համալսարանների և բարձրագույն կրթության միջազգային կառույցների հետ կրթական և գիտական համագործակցության խթանումը: Ռազմավարական այս նպատակի իրականացումը պայմանավորված է հետևյալ կոնկրետ խնդիրների լուծմամբ՝

- Կենտրոնի միջազգային գործունեության դաշտի ընդլայնում, միջազգային համագործակցության ծրագրերում Կենտրոնի բոլոր բաժինների և ամբիոնների ներգրավմանը նպաստում.
- Կենտրոնի միջազգային գործունեության տեղեկատվական ապահովման բարելավում, նախագծերի մշակմանը, դրամաշնորհների ձեռքբերմանն ու միջազգային կապերի ձևավորմանն աջակցող մարմնի ստեղծում.
- Կենտրոնի ուսանողների և գիտամանկավարժական կազմի միջազգային փոխանակման ծրագրերին մասնակցության խթանում.
- Կենտրոնի ամբիոնների կրթական ծրագրերում հրավիրյալ օտարերկրյա դասախոսների մասնակցության ընդլայնման համար նպաստավոր պայմանների ստեղծում.
- արտասահմանյան առաջատար բուհերի ու գիտակրթական կենտրոնների հետ համագործակցության պայմանագրերի և հուշագրերի կնքում՝ գիտակրթական գործունեության բարելավմանն ու կատարելագործմանը միտված համատեղ աշխատանքների իրականացում:

Բաժնի առջև դրված խնդիրներից են նաև օտարերկրյա ուսանողների համակազմի

ընդլայնումը՝

- օտարերկրացի ուսանողների համար անգլիալեզու և/կամ ռուսալեզու ուսուցում կազմակերպելու նպատակով մագիստրոսի կրթական ծրագրերի պահանջարկված մասնագիտությունների գծով անհրաժեշտ դասախոսական ներուժի ապահովում.
- օտարերկրյա ուսանողի ուսումնառության ուղեցույցների և դասընթացների, տեղեկագրքերի, կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատու նյութերի նախապատրաստում, պոտենցիալ դիմորդների շրջանում դրանց տարածում.

ԶՍՓՈՐՈՇԻՉ ք. ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:	
Հիմքեր	<u>Հավելված 7- «ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ արտաքին կապերի բաժնի կանոնադրություն»</u>

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի կազմում 2010թ. գործում է Արտաքին կապերի բաժինը, որի հիմնական նպատակն է ապահովել ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի համագործակցությունը ներպետական և օտարերկրյա ուսումնական հաստատությունների և գիտական կենտրոնների միջև, նպաստել ուսանողների, պրոֆեսորադասախոսական կազմի և վարչակազմի փոխանակման ծրագրերին, Կենտրոնի և միջազգային այլ կառույցների միջև մշտական կապի ամրապնդմանն ու համագործակցության զարգացմանը, այլ երկրներից ուսանողների հավաքագրմանը, ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի առջև դրված խնդիրների լուծմանը:

Բացի այդ, համաձայն կանոնադրության՝ բաժինը իրականացնում է իր իրավասություններին վերաբերող տեղեկատվական նյութերի տպագրում, հայտարարությունների կազմում, թարգմանություն, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի ՏՏ բաժնի հետ համատեղ իրականացնում է ԳԿՄԿ պաշտոնական կայքի պարբերական թարմացում, համապատասխան նյութերի տեղադրում, ինչի շնորհիվ ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի կայքում տեղադրված տեղեկատվությունը ամբողջությամբ հասանելի է անգլերենով՝ այսպիսով հեշտացնելով ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի և նրա գործառնության մասին տեղեկատվության ձեռքբերումը: ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի Արտաքին կապերի բաժինը ՏՏ բաժնի հետ համատեղ կոորդինացնում և պարբերաբար թարմացնում է ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի պաշտոնական էջերը և խումբը Ֆեյսբուք սոցիալական ցանցում /<https://www.facebook.com/www.isec.am/>, <https://www.facebook.com/vle.isec/>, <https://www.facebook.com/groups/161969827218660/>, տարածում տեղեկատվություն հնարավոր միջազգային գիտաժողովների և դրամաշնորհների մասին, ինչպես նաև Գիտակրթական միջազգային կենտրոնի գործունեության և առօրյա մասին:

Քանի որ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիան առաջատար հաստատություններից է կրթության երրորդ մակարդակում օտարերկրյա ուսանողների ներգրավման առումով, իսկ Արտաքին կապերի բաժինը նաև իրականացնում է բոլոր օտարերկրյա դիմորդ ասպիրանտների, ինչպես նաև սփյուռքահայ մագիստրատուրա դիմորդների գործերի ընդունելությունը համաձայն Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն ուսումնական հաստատություններ օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգի /տես՝ [կարգը](#) –Հավելված 32/, ներկայացնում ենք օտարերկրյա դիմորդների համար նախատեսված տեղեկատվական նյութերը ասպիրանտուրայի և մագիստրատուրայի համար /տես՝ [Հավելված 32](#) /:

2010-2014թ. Արտաքին կապերի բաժինը նաև կազմակերպել և անցկացրել է ասպիրանտուրայի հավանական դիմորդ-շրջանավարտների անգլերեն լեզվի նախնական

թեստավորում՝ նախքան «TOEFL IBT» դասընթացը և քննությունն անցկացնելու պաշտոնական թույլտվություն ունեցող կազմակերպություն հավանական դիմորդ-ընթացակարգերի ցանկը ներկայացնելը:

Բաժնի աշխատանքների ընդհանուր համակարգումը իրականացնում է Արտաքին կապերի բաժնի պետը և կատարված աշխատանքների համար անմիջականորեն հաշվետու է ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի տնօրենին:

Արտաքին կապերի բաժնի գործառույթները տե՛ս Հավելված 7-ում՝ «ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ արտաքին կապերի բաժնի կանոնադրություն»-ում:

Արտաքին կապերի արդյունավետ ու հասցեական գործունեության վրա ազդող գործոններն են՝ օտար լեզուների իմացությամբ մարդկային ռեսուրսների պակասը, միջազգային ծրագրերի, դրամաշնորհային հնարավորությունների և այլ բնույթի նախագծերի մասին ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնում տարածվող տեղեկատվության հասանելիությունը թիրախային խմբերին: Նման տեղեկատվությունը սովորաբար չի հասնում նախատեսված օղակներին (օր. ուսանողներին, դասախոսներին)՝ կամ ամբիոններում պատշաճ ընթացք չստանալու հետևանքով, իսկ հասնելու դեպքում էլ՝ թիրախային խմբերի շրջանում նկատվում է ցածր մոտիվացիա նման ծրագրերում ներգրավվելու համար, ինչը թերևս կարող է կապված լինել ուսանողների ու դասախոսների կողմից օտար լեզվի ոչ բավարար իմացության, ինչպես նաև առհասարակ գիտակրթական, ուսումնական գործընթացի նկատմամբ բավականին չեզոք դիրքորոշման հետ:

ՀՀ ԳԱԱ Արտաքին կապերի բաժինը իրականացնում էր և իրականացնում է հետևյալ ծրագրերի համակարգումը՝

2009-2013թթ. Եվրամիության Տեմպուս-Sասիս 145021-ՏԵՄՊՈՒՄ-2008UK-JPCR «Նոր մագիստրոսական ծրագիր՝ Գրադարանային գործ և ինֆորմատիկա» միջազգային ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնը պատրաստել և ներդնել է նոր մագիստրոսական ուսումնական պլան՝ Գրադարանային – տեղեկատվական աղբյուրներ մասնագիտության գծով, որն համապատասխանում է Եվրոպական կրթական չափորոշիչներին, ինչպես նաև ներկայիս աշխատաշուկայի պահանջներին և կարիքներին:

Ծրագրի հիմնական նպատակներն են՝

- Ուսումնական պլանի, դասավանդման մեթոդների և հարակից ուսումնական գործընթացների համապատասխանեցում ԵՄ և միջազգային չափորոշիչների հետ,
- Հեռավար ուսուցման միջավայրի ստեղծում,
- Գիտակրթական միջազգային կենտրոնի տեխնիկական վերազինում
- Մասնագետների փոխայցերի կազմակերպում
- Բաժանորդագրություն գիտական և կրթական էլեկտրոնային հանդեսներին:

Ծրագրի վերջարդյունքներից են համագործակցության հուշագրերի և համաձայնագրերի կնքումը եվրոպական գործընկեր համալսարանների հետ՝ Պարմայի համալսարանի և Միդլսեքս համալսարանի հետ:

2013թ. ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիան՝ ի դեմս ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի մասնակցում է ԵՄ Տեմպուս ֆինանսավորմամբ իրականացվող «Զալցբուրգյան սկզբունքների հիման վրա կրթության երրորդ մակարդակի կառուցվածքային զարգացում» ծրագրին, որի նպատակն է բարելավել Հայաստանի հետբուհական կրթական համակարգը՝ այն համապատասխանեցնելով եվրոպական որակավորումների շրջանակին և Զալցբուրգյան սկզբունքներին:

Ծրագրի հիմնական վերջնարդյունքներն են՝

- Բուհերի կարողությունների զարգացում՝ որակյալ ասպիրանտական /դոկտորական/ կրթություն տրամադրելու նպատակով
- Որակյալ ասպիրանտական /դոկտորական/ կրթության նախադրյալների ստեղծում

- Ասպիրանտական /դոկտորական/ կրթության որակի չափանիշների և աստիճանաշնորհման չափանիշների ձևավորում
- Ասպիրանտական /դոկտորական/ 11 նոր ծրագրերի մշակում և գործարկում /11 պիլոտային նախագիծ/
- Գիտական աստիճանաշնորհման չափանիշների և կրթության որակի չափանիշների ընդունում:

Ծրագրում ներգրավված են շուրջ 20 հայկական և եվրոպական առաջատար բուհեր և կրթական կազմակերպություններ: Ծրագրի ընթացում ձեռք բերված արդյունքների մասին ավելի մանրամասն ներկայացված է Հետազոտություն և զարգացում բաժնում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:	
Հիմքեր	<u>Արտաքին կապերի և միջազգայնացմանը վերաբերող բոլոր համաձայնագրերը – Հավելված 32</u>

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնը միջազգային համագործակցության համաձայնագրեր և հուշագրեր ունի մի շարք միջազգային հաստատությունների և կառույցների հետ՝ Պարմայի համալսարան (Իտալիա), Թայվանի Յուան Ջե համալսարան (Չինաստանի հանրապետություն), Միդլսեքս համալսարան (ՄԹ), Աթենքի ազգային տեխնիկական համալսարան (Հունաստան), Լյուվենի համալսարան (Բելգիա), Աստրախանի պետական համալսարան (ՌԴ), ՏԻՐԻ (TIRI) կազմակերպություն (Մեծ Բրիտանիա), Առնոս առցանց կրթություն (Հունաստան), իսկ մի շարք համաձայնագրեր և հուշագրեր բանակցությունների փուլում են: ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ն մի շարք պայմանագրեր է գրել ապագա գործատու հանդիսացող արտաքին շահակիցների հետ, ինչպես օրինակ՝ Փոխըմբռնման հուշագիրը ՀՀ փաստաբանական դպրոցի հետ, Փոխհամաձայնության հուշագիր Դ-Տելեկոմ ՓԲԸ-ի հետ, համագործակցության հուշագիր ՋԻ ԷՔՍ ՊԻ Գերագանցության կենտրոնի ու Հայաստանի դեղ արտադրողների և ներմուծողների միության հետ:

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնը 2014 թ. սկզբին պայմանագիր է կնքել զբոսաշրջության ոլորտում միջազգային ճանաչում ունեցող AMADEUS ընկերության հետ [/http://www.isec.am/articles/news/contract-with-amadeus-company.html](http://www.isec.am/articles/news/contract-with-amadeus-company.html):

2015թ. սկսվել է համագործակցություն ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գերհաղորդականության գիտական խմբի և Վրաստանի Հանրապետության Տեխնիկական համալսարանի կիրեռնետիկայի ինստիտուտի միջև:

Համագործակցության շրջանակներում ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գերհաղորդականության գիտական խումբը գործուղվեց Տեխնիկական համալսարանի կիրեռնետիկայի ինստիտուտ համատեղ հետազոտությունների արդյունքները քննարկելու նպատակով: Քննարկման արդյունքում պատրաստվել են երկու զեկույց, որոնք ներկայացվել են Ֆրանսիայի Լիոն քաղաքում գերհաղորդականության կիրառական հարցերի վերաբերյալ 2015թ. սեպտեմբերին կայանացած համաժողովում: Համագործակցության ընդլայնման նպատակով գիտական հետազոտությունների համատեղ ծրագիր է ներկայացնելու Միջազգային գիտատեխնիկական կենտրոն ֆինանսական աջակցություն համար: Պատրաստվում է գիտական համագործակցության մասին հուշագիր ստորագրել կողմերի միջև:

Սակայն, հարկ է նշել, որ ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի կողմից կնքված և ուժի մեջ մտած մի շարք հուշագրեր և համաձայնագրեր գործում են ոչ պատշաճ կերպով կամ առհասարակ չեն գործում: Սա կապված է երկու հիմնական խնդիրների հետ: Նախ և առաջ որոշ պայմանագրերում նշված չեն դրանցով նախատեսված կոնկրետ գործողությունները, պլանները, կարճաժամկետ ու երկարաժամկետ նպատակներն ու խնդիրները, այսինքն՝ ինքնին պայմանագիրը առոչինչ է, եթե չկա դրա իրականացման տեսլականը: Մյուս խնդիրը կապված է

Արտաքին կապերի բաժնի աշխատակազմի սակավության հետ: Աշխատակազմը միաժամանակ իրականացնելով բազմաբնույթ տեխնիկական ու կազմակերպական գործառույթներ՝ չի կարողանում արդյունավետ կերպով կազմակերպել պայմանագրերի հետագա իրականացումը և մշտադիտարկումը: Ուստի, այս առումով, միջազգային համագործակցության նոր հնարավորությունների դիտարկումը պետք է համահունչ լինի դրանց իրագործման տեսլականի և անհրաժեշտ ռեսուրսների առկայության հետ:

Արտաքին կապերի բաժնի միջոցով ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ն ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակի ապահովումն ի սկզբանե չի կատարվել և չի ընդգրկվում վարչության գործառույթների մեջ:

Տվյալ պահին մշակման փուլում է 2016թ. ՀՀ ԳԱԱ ԳՄԿ պրոֆեսորադասախոսական անձնակազմի օտար լեզվի վերապատրաստման ժամանակացույցը:

Օտար լեզուներին տիրապետող դասավանդողների, վարչական աշխատողների թիվը և տոկոսը վերջին 3 տարիների համար:						
Աշխատակիցներ	2012		2013		2014	
	Քանակ	%	Քանակ	%	Քանակ	%
Դասավանդող	107		153		176	
Վարչական աշխատող	25		33		42	
Օտար լեզուներին տիրապետող ուսանողների թիվը և տոկոսը վերջին 3 տարիների համար:						
Ուսանողներ	2012		2013		2014	
	Քանակ	%	Քանակ	%	Քանակ	%
Բակալավր						
Մագիստրոս	220		250		276	
Հետազոտող						
Օտարերկրյա ուսումնառողներին առաջարկվող օտար լեզուներով դասավանդվող դասընթացներ/ՄԿԾ-ներ և օտարերկրյա ուսանողների թիվ ըստ տարիների						
Դասընթացի կամ ՄԿԾ-ի անվանումը	2010	2011	2012	2013	2014	
Մոլեկուլային և բջջային կենսաբանություն			5	6	1	
Կենսատեխնոլոգիա	10	7				
Օտար լեզուներով դասավանդվող դասընթացներում/ՄԿԾ-ներում ներգրավված ուսանողների թիվը ըստ երկրների						
Երկրներ	2010	2011	2012	2013	2014	
Իրանի իսլամական հանրապետություն	10	7	4	6	1	
Սիրիայի արաբական հանրապետություն			1			

Ներկայացնել և վերլուծել վերոնշյալ գործընթացներում հաստատության վերջին 3 տարվա նվաճումները: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Վերջին երեք տարիների ընթացքում ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ն ակտիվացրել է իր միջազգային գործունեությունը միջազգային ԲՈՒՀ-երի հետ համագործակցության համաձայնագրերի կնքման, միջազգային վերապատրաստումներին և Եվրամիության Տեմպուս ծրագրերին մասնակցելու միջոցով, ինչպես նաև դրամաշնորհների տեսքով հավելյալ դրամական հոսքերի ապահովման միջոցով ապահովել է միջազգային համագործակցության բաղադրիչը:

Ներկայումս Արտաքին կապերի բաժինը ուսումնասիրել է Երևանի պետական համալսարանի, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի և այլ հայկական բուհերի համանուն բաժինների գործունեության և աշխատանքների կազմակերպման փորձը, այժմ աշխատանքներ են տարվում միջազգային բենչմարքինգի կատարման ուղղությամբ:

ՉԱՓԱՆԻՇ 9-Ի SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ul style="list-style-type: none"> • Կենտրոնում համապատասխան ստորաբաժանման առկայություն: • Միջազգայնացման սկիզբ և ակտիվացում, որի մասին վկայում են 2013-2014 թթ կնքված հուշագրերի և համաձայնագրերի թիվը: • Մասնակցությունը մի շարք միջազգային ծրագրերին, այդ թվում՝ ներգրավվածությունը միջազգային գիտակրթական ցանցերում և կոնսորցիումներում: • Տարբեր միջազգային ծրագրերի շրջանակներում ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի վարչական աշխատակազմի ու պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստումների անցկացում առաջատար գիտակրթական ու հետազոտական կենտրոններում: <ul style="list-style-type: none"> • Վերջին տարիների ընթացքում աճել է ՀՀ Գիտակրթական միջազգային կենտրոնից տարբեր ծրագրերի շրջանակներում գործուղվող դասախոսների և ուսանողների թիվը: • Միջազգային դրամաշնորհային ծրագրերի իրականացման բավարար փորձ և ներուժ: 	<ul style="list-style-type: none"> • Համապատասխան ֆինանսական միջոցների բացակայություն՝ միջազգային գիտաժողովներին մասնակցությունը ապահովելու համար: • Այլ Կենտրոնների և կազմակերպությունների հետ համագործակցային կապի թույլ առկայություն: • ԳԱԱ կազմակերպություններում տեղակայված ամբիոնների կողմից իրականացվող միջազգային ծրագրերի իրազեկության պակաս: • Համատեղ իրականացվող մագիստրոսական և ասպիրանտա-կան ծրագրերի սակավություն: • Միջազգային կապերի և ծրագրերի վերաբերյալ Կենտրոնի հանրության ոչ լիարժեք իրազեկություն:
Հնարավորություններ	Վտանգներ
<ul style="list-style-type: none"> • ՀՀ-ում մեծաթիվ դրամաշնորհային կազմակերպությունների առկայություն: • Ուսանողների փոխանակմանն ուղղված ԿԳ նախարարության կողմից առաջարկվող բազմաթիվ ծրագրերի առկայություն: • Հայաստանի բարձրագույն կրթական համակարգի ակտիվ մասնակցությունը Բոլոնիայի գործընթացին: 	<ul style="list-style-type: none"> • Միջազգային ծրագրերում ուսանողների նվազ մասնակցություն: • Երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի պայմաններում արտասահմանյան առաջատար բուհերում և Գիտական կենտրոններում մասնագիտական փորձի փոխանակման հնարավորությունների բացակայություն:

<ul style="list-style-type: none"> • Միջազգային գիտակրթական ծրագրերի, դրամաշնորհների և արտերկրի Կենտրոնների կողմից առաջարկվող գիտակրթական և ուսումնական ծրագրերի հայտերի մասին տեղեկատվություն: 	
--	--

Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:

Նախատեսվում է թույլ կողմերի և վտանգների հաղթահարման ուղղությամբ իրականացնել հետևյալ քայլերը.

- Միջազգային դրամաշնորհային ծրագրերին շարունակական մասնակցություն, ֆինանսական միջոցների ուղորդում միջազգային գիտաժողովների մասնակցությանը:
- Աշխարհի առաջատար բուհերի և գիտակրթական կենտրոնների հետ համագործակցային ցանցի ընդլայնում:
- Կենտրոնի ամբիոնների կողմից միջազգային ծրագրերի մասնակցության ակտիվացում:

Միջազգային ծրագրերի մասին պարբերաբար իրազեկվածության ապահովում:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Որակի ներքին վերահսկման համակարգի ներդրում, թիրախային գործողությունների պլանավորում և իրականացում: Կրթական ծրագրերի և գործընթացների որակի ապահովման մեխանիզմների շարունակական կատարելագործում, Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների տրամադրում: Որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության: Որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար ներքին համակարգի բավարար հիմքերի ստեղծում: Ներքին և արտաքին շահակիցների համար Կենտրոնի գործունեության որակի մասին տեղեկատվություն թափանցիկության ապահովման համակարգի ստեղծում /Տե՛ս ՌԾ, էջ 6-7 –Հավելված 1/:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

Հիմքեր	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ՈԱ ձեռնարկ –(տե՛ս Հավելված 3)
--------	---

Առաջնորդվելով Բոլոնիայի գործընթացի հիմնարար փաստաթղթերով, կրթական ծառայությունների արտաքին և ներքին շուկաներում գործունեության արդյունավետության և մրցունակության բարձրացման, ուսանողների և շրջանավարտների կրթության բարձր որակի ապահովման հիմնախնդիրներով՝ Կենտրոնը որդեգրել է իր կրթական գործունեության և հասարակությանը կրթական ծառայությունների տրամադրման որակը, մրցունակությունը և ապահովելու քաղաքականություն, որը ամրագրված է կենտրոնի ՌԾ-ում (էջ 6):

2014 թ.-ին մշակվել և ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ Գիտական խորհրդի (ԳԽ) կողմից հաստատվել են «ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ որակի ապահովման հայեցակարգը» և «ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ որակի ապահովման

քաղաքականությունը»: Այս փաստաթղթերը, ՈԱ սկզբունքները, համակարգի նպատակներն ու ինդիկատորները, հիմնական ոլորտները, համակարգի կազմակերպական կառուցվածքը, գործընթացները, որակի շարունակական բարելավման մեխանիզմները և ՈԱ միտված բոլոր կանոնակարգերը, կարգերն ու ընթացակարգերը հավաքական ներկայացված են «ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՁԵՌՆԱՐԿ»-ում, (տե՛ս Հավելված 3):

Որակի ապահովման գործընթացների հիմքում ընկած են Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում Որակի ապահովման չափորոշիչներն ու ուղենիշները և ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 30-ի թիվ 959-Ն որոշմամբ հաստատված Մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները:

Գործընթացները ներառում են՝

- որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր, կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների հաստատում, մշտադիտարկում և պարբերական վերանայում (ծրագրի մշակման և իրականացման արտոնում, ծրագրի ընթացքի մշտադիտարկում, ծրագրի ամփոփիչ գնահատում և վերանայում),
- որակի ներքին ապահովման գործընթացների մշակում, իրականացում և մշտապես բարելավում, ընդունված եվրոպական պահանջներին համահունչ որակի ներքին չափանիշների և չափորոշիչների սահմանում,
- ուսանողների գնահատում (դիագնոստիկ, ընթացիկ և եզրափակիչ գնահատման համակարգ),
- Կենտրոնի բոլոր ստորաբաժանումներում ՈԱ գործընթացների իրականացմանը միտված վարչական աջակցության տրամադրում, համակարգում և վերահսկում,
- պրոֆեսորադասախոսական համակազմի գործունեության որակի ապահովում (դասախոսների գործունեության արդյունավետության փորձագիտական գնահատում, գնահատում ուսանողների կողմից, վարկանիշավորման և խրախուսման համակարգ),
- Համագործակցություն ՀՀ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային Կենտրոն» հիմնադրամի հետ,
- ՈԱ գործընթացների և ընթացակարգերի թափանցիկության, դրանցում ուսանողների, շրջանավարտների, հիմնական գործատուների և ներքին փորձագետների մասնակցություն,
- Կենտրոնի ինստիտուցիոնալ և/կամ ծրագրային հավատարմագրման, ինքնագնահատման գործընթացի կազմակերպում, հաջորդող գործողությունների պլանավորում և վերահսկում,
- անհրաժեշտ ուսումնական ռեսուրսների ապահովում, տեղեկատվական համակարգերի առկայություն,
- հանրային տեղեկատվության ապահովում:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրինությունը ամեն կիսամյակ լսում է ՈԱ բաժնի պետի հաղորդումը ուսանողական հարցումների արդյունքների, իսկ ամեն ուստարի՝ շրջանավարտների բավարարվածության հարցումների արդյունքների վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում կայացնում է համապատասխան որոշում այդ գործընթացների բարելավման ուղղությամբ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ք. Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:	
Հիմքեր	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ որակի ապահովման մշտական հանձնաժողովի աշխատակարգ – Հավելված 33 Հավելված 3, ՈԱ ձեռնարկ, էջ 38 Որակի ապահովման գործընթացների իրականացումը երաշխավորող ֆինանսական ռեսուրսների բաշխումը կարգավորող փաստաթղթերը մշակման փուլում են:

Որակի ապահովման գործընթացների իրականացումը երաշխավորող նյութական ռեսուրսների բաշխումը կարգավորող փաստաթղթերը մշակման փուլում են:
--

Որակի ապահովման ենթակառուցվածքը՝ ներառյալ մարդկային ռեսուրսները և նրանց աշխատանքային նկարագրերը

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում ՈԱ գործընթացները կառավարող և իրականացնող առանձնացված կառույցներ կամ մարմիններ նախկինում չեն եղել: ՈԱ ընդհանուր վերահսկողությունը իրականացվել է ուսումնական մասի պետի և ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ղեկանի կողմից: ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի որոշմամբ և Կենտրոնի տնօրենի հրամանով 2013 թ. դեկտեմբերին ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում ստեղծվեց Կրթության որակի ապահովման բաժինը /ԿՈԱԲ/, Գիտական խորհրդի կողմից հաստատվեց ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ Կրթության որակի ապահովման բաժնի կանոնադրությունը (Տե՛ս Հավելված 3, ՈԱ ձեռնարկ, էջ 38): Բաժնի հիմնական գործառույթը ՈԱ վերոնշյալ գործընթացների կազմակերպումը, իրականացումը և վերահսկողությունն է:

ԿՈԱԲ-ի հիմնական նպատակներից է Կենտրոնում ԵԶՈԻ պահանջներին համահունչ ՈԱ ներքին մեխանիզմների և ընթացակարգերի գործադրումը և որակի շարունակական բարելավման մշակույթի խթանումը:

Քանի որ բաժինը դեռևս նորաստեղծ է, նրա գործունեության արդյունավետության մասին դեռևս վաղ է եզրակացություններ անել, սակայն պետք է նշել, որ բաժնի հիմնմամբ ԳԿՄԿ-ում առաջին անգամ համակարգված ձևով սկսել են իրականացվել վերոնշյալ գործառույթները:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ԿՈԱ բաժնում աշխատում են 4 հաստիքային աշխատողներ (1 բաժնի պետ, 1 առաջատար մասնագետ, մեկ տեսուչ, 1 համակարգչային ադմինիստրատոր), որոնց միջև աշխատանքների և պարտականությունների բաշխումը սահմանված է ԿՈԱ բաժնի կանոնադրությամբ:

Կենտրոնը ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ մասնաշենքում /Մ. Բաղրամյան 24դ/ ունի գրասենյակ, անհրաժեշտ կահույք և ապահովված է ժամանակակից տեխնիկայով, որը ձեռք է բերել Համաշխարհային բանկի «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում: Տարատեսակ հարցումների իրականացման համար կիրառվում են ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ համակարգչային լսարանները:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ՈԱ գործընթացների կանոնակարգային և մեթոդաբանական հենքը ձևավորելու նպատակով 2014 թ. ստեղծվեց «ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ Որակի ապահովման մշտական հանձնաժողովը» (ՈԱՄՀ): Հանձնաժողովում ընդգրկված են վարչական, դասախոսական և ուսանողական կազմերի ներկայացուցիչներ: Կենտրոնի ինստիտուցիոնալ ինքնագնահատման գործընթացն իրականացնելու նպատակով ԳԿՄԿ 2014 թ. մայիսի 31-ի թիվ 135 ա հրամանի համաձայն ստեղծվեց ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ինստիտուցիոնալ ինքնագնահատման հանձնաժողով, որը բաղկացած է 14 անդամներից և ներառում է ներկայացուցիչներ ԳԿՄԿ վարչական անձնակազմից, ուսանողական կազմից, արտաքին շահեկիցներից (գործատուներ), որոնք տվյալ դեպքում նաև հանդիսանում են ԳԿՄԿ ամբիոնի վարիչներ և ԳԱԱ համակարգի ինստիտուտների տնօրեններ կամ վարչական աշխատողներ: Առանձին մասնագիտագրերի կազմման, ամբիոնային գործունեության վերլուծության նպատակով ստեղծվել են նաև աշխատանքային խմբեր:

Ինքնագնահատման հանձնաժողովը դիտարկելու է աշխատանքային խմբերի կողմից կազմված ինքնագնահատման զեկույցները, կորդինացնելու է աշխատանքները, ի մի է բերելու դրանք մեկ ընդհանուր զեկույցում, դիտարկելու է ներքին և արտաքին շահեկիցների դիտողություններն ու առաջարկությունները զեկույցների վերաբերյալ, կազմելու է ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ինքնագնահատման զեկույցի վերջնական տարբերակը, որը պետք է հրապարակվի և լինի հանրությանը հասանելի:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ն զգալի մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ է հատկացնում ինչպես ուսանողների և շրջանավարտների հարցումների, այնպես էլ գործատուներից ԳԿՄԿ

շրջանավարտների և պրակտիկայի արդյունքներից ուսանողների հարցումների նախապատրաստման, անցկացման, արդյունքների մշակման ու ամփոփման աշխատանքների համար: Մասնավորապես, մարդկային ռեսուրսները ներգրավվում են ոչ միայն ՈԱ գործընթացների համար անմիջականորեն պատասխանատու կառույցներից, այլ նաև ուսումնական գործընթացն ապահովող կենտրոնական և ամբիոնային այլ կառույցներից:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:

Հիմքեր	<p>Որակի ապահովման բաժնի կողմից իրականացվող տարատեսակ հարցումներ – <u>Տե՛ս Հավելված 3, սկսած էջ 103-ից</u> <u>ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման կարգ – Հավելված 13</u> <u>ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ուսանողական խորհրդի կանոնադրություն – Հավելված 30</u></p>
--------	---

Որակի ապահովման գործառնություններում կենտրոնը կարևորում է ներքին և արտաքին շահակիցների մասնակցությունը, այն կանոնակարգված է և հաստատված ԳԽ-ի կողմից՝ Շահակիցների մասնակցությունը ներառում է հետևյալ ոլորտները՝

- կառավարման և վարչական գործընթացներում
- ուսումնական գործընթացներում
- հետազոտական գործընթացներում
- սոցիալական գործընթացներում:

Ուսանողները, որպես ներքին շահակիցներ.

- ✓ ընդգրկված են ուսման որակի գնահատման գործընթացներում՝ մասնակցելով ուսանողական հարցումներին և շրջանավարտների բավարարվածության հարցումներին,
- ✓ ընդգրկված են գիտական խորհրդում, որակի ապահովման հանձնաժողովում,
- ✓ մասնակցում են կենտրոնի որակի ապահովման գործընթացներին՝ որպես ուսանողական ինքնակառավարման մարմինների (ուսանողական խորհուրդ, ուսանողական գիտական ընկերություններ) ներկայացուցիչներ,
- ✓ մասնակցում են ինքնավերլուծության գործընթացին՝ համաձայն սահմանված ընթացակարգի:

Արտաքին շահակիցների (փորձագետներ, շրջանավարտներ, գործատուներ) դերը և կարծիքը որոշիչ է

- ✓ կրթական ծրագրերի արտաքին փորձաքննությունում,
- ✓ շրջանավարտների եզրափակիչ (ամփոփիչ) ատեստավորման հանձնաժողովներում,
- ✓ կրթական ծրագրերից և շրջանավարտների մասնագիտական որակից գործատուների բավարարվածության հարցումներում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

Հիմքեր	ՈԱ ձեռնարկ, էջ 5-11, 17-34, (տե՛ս Հավելված 3)
--------	--

Ինչպես նշվեց, ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ՈԱ համակարգը դեռևս գտնվում է կառուցման փուլում և էական վերանայումների դեռևս չի ենթարկվել: Սակայն որակի շարունակական բարելավումը Կենտրոնի քաղաքականության կարևորագույն բաղադրիչներից է:

Կենտրոնի ՈԱ գործընթացները կազմված են շարունակական բարելավման սկզբունքով՝

1. **Պլանավորում**՝ սահմանվում են հիմնական խնդիրները և չափելի ակնկալվող վերջնարդյունքները,

2. **Իրականացում**՝ կատարվում են ակնկալվող վերջնարդյունքների ձեռքբերմանը նպատակաուղղված բոլոր անհրաժեշտ գործողությունները և միջոցառումները,
3. **Գնահատում**՝ ստուգվում, չափվում և գնահատվում են փաստացի ստացված արդյունքները պլանավորված վերջնարդյունքների համեմատությամբ:
4. **Բարելավում**՝ մշակվում և պլանավորվում են լրացուցիչ միջոցառումներ՝ բացթողումները և թերացումները շտկելու և ակնկալվող վերջնարդյունքները գործընթացի հաջորդ փուլում ձեռք բերելու համար:

Ներկայացնել այն կազմակերպությունների ցանկը (նշելով երկիրը), որոնց օրինակով ՄՈՒՀ-ը կատարել է որակի ապահովման գործընթացների քաղաքականության և ընթացակարգերի բենչմարքինգ (առաջավոր փորձի համեմատական վերլուծություն):

Չեխիա -Պրահա, Կարլովի համալսարան
 ՀՀ –ԵՊՀ
 ՀՀ –ՀՊՃՇՀ
 ՀՀ –Կառավարման ակադեմիա

ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:	
Հիմքեր	Տարեկան ինքնավերլուծությունները և հաշվետվությունները ըստ ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների: 2015 թ. Ինստիտուցիոնալ ինքնավերլուծության զեկույց

Կենտրոնը հիմք ընդունելով կրթության որակի նկատմամբ պետական վերահսկողության միասնական քաղաքականությունը, իր առկա ՌԾ-ում հաշվի է առել Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի (ՄԿՈԱԱԿ) կողմից սահմանված ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների/չափորոշիչների պահանջները: Նշվածը արտացոլված է կենտրոնի զարգացման ռազմավարական ուղղություններում, նպատակներում և խնդիրներում: Վերջինները ներկայացված են կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերում: Համանման խնդիրներ են ձևավորվում նաև ամբիոնների մակարդակներում՝ կապված ծրագրային հավատարմագրման հետ:

Որակի ապահովման գործընթացի բարելավման և ուսումնական գործընթացի արդիականացման նպատակով իրականացվում են տարեկան և կիսամյակային հարցումներ, որոնք հնարավորություն են ընձեռում վերհանել առկա խնդիրները, ռիսկերն ու վտանգները և աշխատանքներ տանել դրանց հաղթահարման ուղղությամբ, օրինակ՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին անցկացվում է շրջանավարների կողմից կրթական ծրագրերի գնահատում, տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն, որը ներկայացվում է համապատասխան ամբիոններ, քննարկվում դրանք, իսկ ամբիոններում արդեն աշխատանքներ են տարվում բարձրացված հարցերին լուծում տալու ուղղությամբ: Յուրաքանչյուր կիսամյակի վերջում անց է կացվում նաև կիսամյակային հարցումներ ուսանողության շրջանում՝ պրոֆեսորադասախոսական համակազմի դասավանդման գործընթացից բավարարվածության և այլ կրթական կարիքների վերաբերյալ, ստացված արդյունքները ևս վերլուծության և քննարկման առարկա են դառնում համապատասխան ամբիոններում: Գործատուների շրջանում ևս անց են կացվում հարցումներ՝ ԳԿՄԿ շրջանավարտներից գոհունակության վերաբերյալ: Վերոնշյալ բոլոր տվյալները հետազայում օգտագործվում/վել/ են ԳԿՄԿ Ինքնավերլուծության զեկույցում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Գ. Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

Հիմքեր	Ամբիոնների նիստերի արձանագրություններ, քննարկումներ, տարեկան հաշվետվություններ
--------	--

Կենտրոնի գործունեության հրապարակայնությունը և Որակի ապահովման ներքին համակարգի թափանցիկությունը ապահովվում է դրա մասին պարբերական տեղեկատվության ներկայացմամբ, օգտագործելով հնարավոր բոլոր ներքին և արտաքին միջոցները, հանդիպումները ուսանողների ու դասախոսական կազմի հետ և հրապարակային քննարկումներն ու մտքերի փոխանակումները լրատվական միջոցների և կայքի օգտագործումը, ՋԼՄ-ները և այլն:

Կենտրոնի գործունեության թափանցիկության ապահովման մեխանիզմներից է ցանկացած նոր նախաձեռնության նախագծի տեղադրումը Կենտրոնի կայքում և շահակիցների առաջարկությունների ու դիտողությունների հավաքագրումը, քննարկումների հնարավորությունը:

Ներքին և արտաքին շահեկիցների համար ԳԿՄԿ գործունեության թափանցիկությունն ապահովելու համար կարևոր է նրանց տեղեկացվածությունն ապահովող համակարգերի առկայությունը: Այդ նպատակով ԳԿՄԿ-ում գործադրված են ներքին տեղեկատվության մի շարք մեխանիզմներ, որոնցից են.

1. ԳԿՄԿ գործունեության արդյունքների վերաբերյալ ամենամյա հաշվետվությունը, որտեղ ամփոփվում են անցնող տարում Կենտրոնի ուսումնական, գիտահետազոտական ու վարչական կառույցների գործունեության հիմնական արդյունքները: Այս հաշվետվությունները տպագրվում են ՀՀ ԳԱԱ տարեկան զեկույցներում
2. Կենտրոնի ամբիոնների և այլ կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվությունները:
3. Դասավանդման արդյունավետության և որակի վերաբերյալ ուսանողական հարցումների, ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումների արդյունքների ամենամյա վերլուծությունները, որոնք ներկայացվում են ԳԽ քննարկմանը և ուղարկվում են համապատասխան ամբիոններ:
4. Ուսանողների առաջադիմության և շարժի, ինչպես նաև ուսումնական այլ գործընթացների վերաբերյալ տեղեկատվության էլեկտրոնային կառավարման համակարգը, որը մատչելի է դարձնում ուսումնական գործընթացին առնչվող տվյալների մեծածավալ բազան, հնարավորություն է տալիս ուսումնառության վերաբերյալ ամփոփ հաշվետվությունների կազմմանը և ստացմանը/ համակարգի գործունեությանը, բաժիններին կարելի է ծանոթանալ տեղում, քանի որ այն տեղայնացված է, գործում է միայն ԳԿՄԿ տարածքում/:
5. Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցը և դասընթացների տեղեկագիրքը, որը 2014 թ. վերամշակվել է և հասանելի է ուսանողներին և ներքին ու արտաքին այլ շահեկիցներին էլեկտրոնային և առցանց տարբերակներով:
6. ԳԿՄԿ կայքէջում (<http://www.isec.am>) տեղադրվող տեղեկատվությունը, որն առնչվում է ներքին գործընթացներին և կանոնակարգային դաշտին: Այն հնարավորություն է տալիս ուսանողներին, ապագա դիմորդներին և այլ արտաքին շահեկիցներին՝ ծանոթանալու Կենտրոնի և նրա տրամադրած կրթական և գիտական ծառայություններին:
7. Ուսանողական համակազմի վերաբերյալ քանակական և որակական տվյալների և ուսանողների առաջադիմության ցուցանիշների կանոնավոր հավաքագրումը, վերլուծությունը և հրապարակումը էլեկտրոնային տեղեկատվության համակարգում:

ՉԱՓԱՆԻՇ 10-րդ SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ul style="list-style-type: none"> • ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում ՈԱ բաժնի առկայություն: 	<ul style="list-style-type: none"> • Ուսանողների շրջանում անցկացված

<ul style="list-style-type: none"> • ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ն ունի ՈԱ հստակ ձևակերպված քաղաքականություն, հայեցակարգ՝ հանգամանորեն մշակված սկզբունքներով, խնդիրներով և դրանց լուծմանն ուղղված միջոցառումներով: • Դասավանդման արդյունավետության և որակի բարձրացմանն ուղղված ուսանողական կիսամյակային հարցումների իրականացման մեկամյա փորձ: • Ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ տարեկան հարցումների անցկացում ինչպես առկա, այնպես էլ հեռակա բաժինների համար: • Գործատուների կողմից կրթական ծրագրերի գնահատման և պրակտիկայի արդյունքներից ուսանողների գոհունակության հարցման կազմակերպում: • Ուսանողների ներգրավվածություն Կենտրոնի ԳԽ-ի և ՈԱ մշտական հանձնաժողովներում: 	<p>հարցումների արդյունքում ստացված կարծիքների ոչ բավարար հաշվառում</p> <ul style="list-style-type: none"> • ՈԱ քաղաքականության և ՈԱ սկզբունքների ոչ բավարար իրականացում ակադեմիական գիտահետազոտական հաստատություններում • մարդկային ռեսուրսների մոտիվացվածության պակաս: • Կենտրոնի և արտաքին շահեկիցների ոչ բավարար համագործակցություն ՈԱ գործընթացներում: • ՈԱ առանձին բաղադրիչների մոնիթորինգի և գնահատման փորձի պակաս: • ԳԱԱ համակարգում ՈԱ –ն ուղղված մասնագիտական փորձի պակաս: • ՈԱ ամբողջական մշակույթի ոչ բավարար տարածվածություն ակադեմիական համակարգում
Հնարավորություններ	Վտանգներ
<ul style="list-style-type: none"> • Կառավարության կողմից սահ-մանված որակի գնահատման չա-փանիշներ: • Միջազգային դրամաշնորհների մասնակցություն: • Արտասահմանյան ԲՈՒՀ-երի հետ համագործակցության ընդլայնում: 	<ul style="list-style-type: none"> • ՈԱ միջազգային գործընթացներից հապաղում • ՈԱ ներքին և արտաքին աուդիտների միջև դեռևս հստակ չձևավորված փոխկապակցվածություն: • ՈԱ մշակույթի ձևավորմանն ուղղված ոչ բավարար պետական ֆինանսական միջոցներ:

Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:

Նախատեսվում է թույլ կողմերի և վտանգների հաղթահարմանն ուղղությամբ իրականացնել հետևյալ քայլերը.

- Ուսումնառության ողջ գործընթացի վերաբերյալ ուսանողների ամբողջական հարցումների արդյունքների հաշվառում՝ համապատասխանաբար ուսումնական ծրագրերի և ուսումնական գործընթացի թույլ կողմերի կատարելագործում և արդիականացում:
- ՈԱ գործընթացներում արտաքին շահակիցների ներգրավվածության ապահովում, միջազգային փորձի ուսումնասիրություն տեղայնացում ՈԱ մոնիթորինգի իրականացման և գնահատման ուղղությամբ:
- Ակադեմիական համակարգում ՈԱ մշակույթի զարգացում, ֆինանսական միջոցների հայթայթում և ուղղորդում ՈԱ մշակույթի հանրայնացման և PR գործողությունների իրականացման նպատակով:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Գիտակրթական միջազգային կենտրոնի զարգացման Ռազմավարական ծրագիրը, 1.1
2. ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի Ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույց-պլան 2014-2018 թթ.
3. ՀՀ ԳԿՄԿ Որակի ապահովման ձեռնարկ
4. «ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն» հիմնարկի կանոնադրություն
- 4.1 ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ 2012-2016 թթ. ռազմավարական ծրագրի լրամշակման և համալրման ու 2014-2018 թթ. ժամանակային նեոառմամբ հաստատման հիմնավորում
5. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ բյուջե 2014-2015-ի նախահաշիվ
6. ԳԱԱ տարեկան հաշվետվություն – 2014
7. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ արտաքաին կապերի բաժնի կանոնադրություն
8. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կանոնակարգ
9. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ուսանողական նպաստների հատկացման մասին կանոնակարգ
10. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կրթական ծրագրերի հաստատման (արտոնման) կարգ
11. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ մագիստրոսական մասնագիտությունների ցուցակ
12. ՀՀ ԳԱԱ նախագահության որոշման քաղվածք
13. Կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի և պարբերական վերանայման կարգ
14. Կանոնակարգ ՀՀ ԳԱԱ ասպիրանտուրայի ընդունելության, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման
15. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ձևավորման կանոնակարգ
16. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ Գիտական խորհրդի կանոնակարգ
17. ՄՈՒՀ-ի աշխատակիցների աշխատանքի ընդունման, տեղափոխման, հեռացման, առաջխաղացման, խրախուսման ու տույժի կիրառման քաղաքականությունն ու ընթացակարգերը
18. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ Որակի բաժնի վերլուծություններ
19. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերապատրաստումների և մասնագիտական որակավորումների բարձրացման կանոնակարգ
20. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ Ամբիոնների ձևավորման, գործունեության և ամբիոնների վարիչների ընտրության կանոնակարգ
21. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի կանոնադրություն
22. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ Հանրային կապերի հայեցակարգ
23. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ շրջանավարտների հետ կապի և զբաղվածության բաժնի կանոնակարգ
24. ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի կառուցվածքը
25. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստում
26. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ 3 ամբիոնների ուս. պլանները և նիստերի արձանագրությունները
27. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ դեկանատի գործունեության կանոնակարգ
28. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կիրառական հոգեբանության կենտրոնի կանոնադրություն
29. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ուսումնամեթոդական մասի գործունեության կանոնակարգ
30. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ուսանողական խորհրդի կանոնադրություն
31. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ հիմնական և համատեղությամբ աշխատողների ցանկեր
32. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ Արտաքին կապեր:
33. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ որակի ապահովման մշտական հանձնաժողովի աշխատակարգ
34. ՀՀ կառավարության որոշումների և ԿԳՆ հրամաններ
35. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ԳԽ որոշումներ
36. ԳԿՄԿ կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ /առկա, հեռակա, նոր խմբագրությամբ/

37. Մասնագիտության կրթական ծրագրեր – Դեղագործական քիմիա, Բնապահպանություն և բնօգտագործում, Միջազգային հարաբերություններ
38. Տեղեկագրքեր 3 ՄԿԾ-ների համար
39. Հետազոտություն
40. Ամբիոնների գիտական աշխատանքների ամփոփ նկարագրություն
41. Բուհերում սովորողների ակադեմիական շարժունակության կարգը
42. ՀՀ ԳԱԱ կանոնադրություն, Օրենք ՀՀ ԳԱԱ մասին օրենքը, Գիտության զարգացման ռազմավարություն